



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ

## ԴԱՍԱԳԻՐՔ



ԿԱԶՄԵՑ

ԳԵՈՐԳ ԱԼԹՈՒՆԵԱՆ

(Ուսուցիչ Գէորգեան ձեմարանում)




ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԵԱՆՆԻ

1906

59  
Վ-30



20 JUL 2010

59  
Q-30

107

# ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ

## ԴԱՍԱԳԻՐԻ



ԿԱԶՄԵՑ

ԳԵՈՐԳ ԱԼԹՈՒՆԵԱՆ

(Ուսուցիչ Գեորգիան ձեմարանում)



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ԽԱՅՐ ԱԹՈՈՒՅՑ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՆԵՒ

1906

Природоведение

Учебник -

Составил

Георг Алтунян

(Учитель Георгян академии)

- Вагаршанай. -

Типография свѣтѣйшаго пресбытера  
в Эдзмиштине. 1906 г.

0105 JUL 05

14.438/11

01.02.2013

ՀԱՅԿԻՍՏԱԳԱՆԱՐԿԻ

ԳՐԱԳՐԱԿԱՆԱԳՐԱԿ

Дозволено цензурою 19 Декабря 1905 г. г. Тифлисъ.



41904.63

8081

Գէորգեան Ճեմարանի առաջին եւ երկրորդ տարուայ կենդանաբանութեան դասընթացն է, որ լրացրած ու մի փոքր փոփոխած լոյս ենք ընծայում: Այս դասագիրքը յարմարեցրած է նաեւ մեր միջնակարգ ու երկդասեան դպրոցների համար: Դասաւանդելիս ուսուցիչը առաջին տարուայ դասընթացի մէջ այս դասագրքից պիտի մտցնի միայն առանձին առանձին կենդանիները, առանց նրանց տեղը որոշելու կենդանաբանութեան մէջ: Իսկ դասաւորումն ու տեղաւորումը երկրորդ տարուայ գործ է. այստեղ արդէն ամեն մի կենդանի իւր տեսակի, ցեղի կամ ընտանիքի մէջ պիտի ուսուցուի. պէտք է ընտրողուն իւրաքանչիւր խմբի առանձնայատուկ նշանները, դրա հետ միասին թէթեւ կրկնութիւն պիտի լինի առաջին տարուայ անցածին:—Ողնաշարաւոր կենդանիներն այնքան հետաքրքիր ու շատ էին, որ չկարողացանք շատ քան կրճատել, թէեւ գրածն էլ բաւականին համառօտ է. այդպիսով դուքս մնաց անողնաշար կենդանիների ամբողջ դասը, որի հետ միացնելով հանքերի ու բոյսերի նկարագիրը, գուցէ կարելի լինէր մի ուրիշ ձեռնարկ կազմել: Ներկայ դասագրքի գլխաւոր պակասութիւնն անշուշտ պայտէկների բացակայութիւնն է: Դպրոցներից շատերը կենդանաբանական պատկերներ կունենան անշուշտ, եւ ուսուցիչը այս կամ այն կենդանու մասին անցնելիս, ցոյց կըտայ պատկերը: Պատկերներ դրնելուց յետոյ արժէ քիչ թէ շատ լաւը դնել. սերը չարժէր, իսկ գունաւորը շատ կը բարձրացնէր դասագրքի զինը:— Այս դասագիրքը կազմելիս օգտուել ենք Բրեմի «Կենդանիների կեանք»-ից, որից շատ քան փոխադրուած է, ապա

«Ընթերցարան ընական գիտութիւնների» յայտնի ուսւ հը-  
րատարակութեան համապատասխան հատորներից, Պոլ Բէ-  
ռի «Կենդանաբանութեան դասախօսութիւններից», Մէնէ-  
վիշեանի «Կենդանաբանութիւնից» ու կենդանիների մասին  
գրած մի շարք փոքրիկ գրքոյկներից: Չեռքի տակ եղել են  
նաեւ Բրոկհաուզի եւ Մէյերի հանրագիտակ ըստարան-  
ները:

ԳԵՈՐԳ ԱԼԹՈՒՆԵԱՆ

— \*o\* —

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՐԿԱՆ

ԵՒ

ԴԱՍԱԻՈՐՈՒՄԸ



շխարհը լի է անթիւ և անհամար շնչաւոր  
արարածներով, որոնք ծնուով են, ապրում և որոշ ժա-  
մանակից յետոյ մեռնում: Մեծութեան և քանակի կող-  
մից բազմազան և անհաշիւ են այդ արարածները: Բացի  
երկրի վրայ և հողի մէջ ման եկող և ապրող կենդանինե-  
րից, ահադին քանակութեամբ կենդանիներ ապրում են  
օդի մէջ. ծովն էլ լի է բազմաթիւ ձկներով և ջրային ու-  
րիշ կենդանիներով: Այդ բոլորը՝ ջրային, օդային և ցա-  
մաքային շնչաւորները իրար հետ միասին կազմում են  
կենդանական մեծ քաղաւորութիւնը, որի սահմանները  
խիտ ընդարձակ են: Եւ այն գիտութիւնը, որ ուսումնա-  
սիրում է այդ ամբողջ թագաւորութիւնը, տեսանելի և  
անտեսանելի շնչաւորներին, որ քննում է մանրամասն  
կերպով կենդանիների կազմութիւնն ու կեանքը, նրանց  
ապրելու եղանակը, նրանց բնաւորութիւնը, նրանց՝ դէպի  
մարդիկ ունեցած յարաբերութիւնը, տուած օգուտը կամ  
ֆիսաքը, երկրի վրայ նրանց տարածուելու չափը, այդ գի-  
տութիւնն ահա կոչոււմ է կենդանաբանութիւն: Կենդա-  
նաբանութեան առարկան ուրեմն բոլոր շնչաւոր արարած-  
ների մասին գիտութիւն է:

Շնչաւոր արարածներն, ինչպէս ասացինք, անթիւ են  
ու անհաշիւ, և եթէ չլինէր այդ անթիւ կենդանիներն

ուսումնասիրեալու համար հեշտացնող մի միջոց, խիստ դժ-  
 փուլար կը լինէր կենդանաբանի գործը: Ինչ պէտք է անել,  
 որ այդ ահագին կազմութեան մէջ կարգ ու դասաւորու-  
 թիւն մտնի: Ինչպէս պէտք է վարուել, որ նման կենդա-  
 նիները միասին խմբուին, իսկ աննմանները դատուին: Առանց այդ դասաւորութեան, չի կարելի ուսումնասիրել  
 կենդանիների անվերջ բազմազանութիւնը:

Երևակայեցէք, որ մենք գտնուում ենք մի մեծ, ըն-  
 դարձակ հովտի մէջ, որ լի է ամեն տեսակ շնչաւորներով: Այդտեղ կան փղեր, առիւծներ, վագրեր, արծիւներ, բա-  
 դեր, աղաւնիներ և ամեն տեսակ չորքոտանիներ ու թռչ-  
 շուններ. այնտեղ են և բոլոր օձերը, կրիաները, գորտերը-  
 բոլոր ձկներն հաւաքուած են ջրաւազանի մէջ, այնտեղ են  
 բազմաթիւ ու բազմազան միջատները, որդերը և վերջա-  
 պէս այն անթիւ շնչաւորները, որոնք լողում են օդի և  
 ջրի մէջ: Հարկաւոր է ուսումնասիրել դրանց բոլորին, բայց  
 ինչպէս. դրանք անթիւ են և մէկ մէկ ուսումնասիրել չի  
 կարելի: Հարկաւոր է դրանց խմբերի բաժանել և բա-  
 ժանման հիմք պէտք է ընդունել նմանութիւնը. օրինակ,  
 չի կարելի միևնոյն խմբի մէջ մտցնել փղին և արծուին  
 կամ առիւծին ու բազէին, թէպէտ և երկու զոյգ կեն-  
 դանիներն էլ ուժեղ շնչաւորներից են, չի կարելի նրա հա-  
 մար, որովհետև առիւծը և բազէն աւելի շատ և կարե-  
 ւոր, բնորոշ տարբեր գծեր ունին. քան նման. նրանց կազ-  
 մուածքը այլ է, նրանց սնունդը, նրանց ձագ բերելը, կեանքի  
 եղանակը բոլորովին տարիչ է: Բայց օրինակ փիղը և խը-  
 լուրդը չնայած մէկի հսկայ մեծութեանը և միւսի չափա-  
 զանց փոքրութեանը, կարելի է մի խմբի մէջ մտցնել, որով-  
 հետև նման գծեր շատ ունին. նախ երկուսն էլ մազով են  
 ծածկուած, երկուսն էլ չորքոտանի են, և որ գլխաւորն է,  
 երկուսն էլ դազաններ են, կենդանի ձագեր են բերում և  
 կաթով են սնուցանում իրանց ձագերին. մի խօսքով նրանք  
 երկուսն էլ կաթնասուններ են: Չիեր թէ մեր երկրում  
 կան և թէ Եւրոպայում և թէ աշխարհի այլ մասերում  
 Եւ մենք կամենալով ուսումնասիրել աշխարհի վրայ գըտ-

նուած բոլոր ձիերը անմիջական կերպով, ստիպուած պէտք  
 է լինէինք գնալ մէկ մէկ անոնել տեղնուտեղը, մի բան,  
 որ անհնարին է, որովհետև հարկաւոր մարդկանց կեանքը  
 բաւական չէր լինի միմիայն ձին ուսումնասիրելու: Նոյնը  
 պիտի ասել նաև միւս շնչաւորների նկատմամբ: Ահա այս  
 դժուարութիւնից պրծնելու համար կենդանաբանները  
 որոշ խմբերի են բաժանել բոլոր շնչաւոր արարածներին,  
 այնպիսի խմբերի, որոնցից եթէ մի մի ներկայացուցիչ ու-  
 սումնասիրենք, դրանով ուսումնասիրած կը լինենք այդ  
 ամբողջ խումբը:

Որոշ հիմունքներով ամբողջ կենդանական թագաւո-  
 րութիւնը խմբերի բաժանելը կոչոււմ է դասաւորում:  
 Կենդանաբանութեան մէջ մի քանի դասաւորումներ կան,  
 որոնցից առաջ ենք բերում հետևեալը:

Այն կենդանիները, որոնք իրանց նշաններով նման  
 են իրար և որոնք ծագում են իրանց բոլորովին նման  
 ճնողներից, կազմում են մի խումբ, որ կոչոււմ է սեսակ:  
 Օրինակ—ճնճղուկները, որտեղ էլ որ պատահեն մեզ, իրար  
 միշտ նման կը լինեն և նրանց ձուերից դուրս են գալիս  
 իրանց մայրերին բոլորովին նման ձագեր. դրա համար էլ  
 բոլոր այդ թռչունները կազմում են մի տեսակ. և ու-  
 սումնասիրողը այլ ևս կարիք չի զգայ ճնճղուկներին առան-  
 ձին առանձին քննելու, այլ բաւական է այդ տեսակից  
 մէկը միայն և դրանով գաղափար կը կազմէ նա նոյն տե-  
 սակի բոլոր ճնճղուկների մասին: Այն տեսակները, որոնք  
 իրանց նշաններով մեծ մասամբ նման են իրար, միանալով  
 կազմում են մի ցեղ: Օրինակ, վագրը, առիւծը, կատուն,  
 չնայած որ զանազան տեսակների են պատկանում, բայց  
 իրար այնքան նման նշաններ ունին, որ դրանց բոլորին մի  
 ցեղից պէտք է համարել. դրանք բոլորը կատուացեղ են:  
 Իրար նման ցեղերը միանալով կազմում են ընտանիք. օրի-  
 նակ, կատուացեղերը, չնացեղերը, խլուրգների ցեղ ինչ-  
 քան էլ որ արտաքինով զանազանուեն, նրանք յամե-  
 նայն դէպս ունին հիմնական նմանութիւններ, նրանք բո-  
 լորը գիշատիչ են: Նման ընտանիքները միանալով կազ-

մում են կարգ, օրինակ, կապիկները ընտանիք, գիշատիչները, որոճողների, կրծողների ընտանիքները միանալով կաթնասունների կարգն են կազմում: Եւ վերջապէս կարգերը միանալով կազմում են դաս. իսկ այդ դասերի համագումարը կազմում է ամբողջ կենդանական թագաւորութիւնը: Այսպէս ուրեմն կենդանական թագաւորութիւնը բաժանուում է տեսակների, ցեղերի, ընտանիքների, կարգերի և դասերի. բաժանման հիմքը ընդունուում է կենդանիների իրար մէջ ունեցած արտաքին կամ ներքին նմանութիւնը:

Այս բաժանումից պարզ է, որ տեսակը աւելի քիչ թուով կենդանիներ է պարունակում իւր մէջ, քան ցեղը. ցեղը աւելի քիչ, քան ընտանիքը. կազմը ընտանիքից շատ, դասը կարգից շատ: Այս բաժանման նպատակն այն է, որ, ինչպէս ասուեցաւ, դիւրացնում է կենդանիներն ուսումնասիրելու գործը. մենք փոխանակ բոլոր կենդանիների հետ գործ ունենալու, առնում ենք իւրաքանչիւր տեսակից կամ ցեղից մի մի ներկայացուցիչ և դրանով ուսումնասիրած ենք լինում ամբողջ տեսակը կամ ցեղը:

Կայ և մի ուրիշ՝ աւելի կարճ բաժանում: Կենդանական աշխարհը բաժանում են ողնաւաւաւոր և անողնաւաւոր կենդանիների, բաժանման հիմք ընդունելով սղնաշարի բացակայութիւնը կամ ներկայութիւնը: Ողնաշարաւոր կենդանիները ներքին ոսկրեայ կմախք ունին, որին կպած են մկաններն ու կաշին և որը հասնում է մինչև գանգի խոռոչը. նրանց արիւնը կարմիր է և նեարգերը խիստ զարգացած են: Անողնաշար կենդանիները չունին ոսկրեայ կմախք, փոխանակ գլխի ու մէջքի ուղեղների, նեարգային հանգոյցներ ունեն:

Ողնաշարաւոր դասը բաժանում է չորս կարգի. Ա. կաթնասուններ, ծնում են կենդանի ձագեր, որոնք մօր կաթով են սնւում. մարմինը ծածկուած է մազով, արիւնը կարմիր է և տաք. ունին սրտի երկու հիմնական բաժանմունք, երկու ստամոքս և շնչում են թորերով: Բ. թռչուններ, ձու են ածում, ծածկուած են փետուրներով, ձեռ-

քերը թևեր են դարձել, արիւնը տաք է և կարմիր. սրտի երկու բաժանմունք, երկու ստամոքս և թորեր: Գ. երկակենցաղներ եւ սողուններ. ձու են ածում (երբեմն կենդանի ձագ են բերում)՝ մարմինը ծածկուած է թեփուկներով, վահանիկներով. արիւնը կարմիր է և սառը. սրտի երկու բաժանմունք, մի ստամոքս և թորեր: Դ. ձկներ. ձու են ածում, ստանին ու ձեռները յարմարեցրած են լողալու, ունին լողակներ. մարմինը պատած է թեփուկներով. արիւնը կարմիր է և սառը. սրտի մի բաժանմունք և մի ստամոքս. շնչում են քիմուխտներով:

Տեսնենք այս չորս կարգերն առանձին առանձին, նախ կաթնասունների կարգը:



ԱՌՍՋԻՆ ԿԱՐԳ

Կ Ա Ք Ն Ա Ս Ո Ւ Ն Ն Ե Ր

Ողնաշարաւորների և ընդհանրապէս ամբողջ կենդանական թագաւորութեան գլուխ համարուում է կաթնասունների կարգը, թէկուզ հէնց այն պատճառով, որ այդ կարգին է պատկանում նաև մարդը: Մի քանի խօսքով նկարագրենք կաթնասունների արտաքինը: Նրանց մարմինը ծածկուած է կաշիով, որ բաղկացած է վերնամաշկից, միջին և ստորին մաշկից: Կաշին ծածկուած է կամ բրդով կամ մազով, որի արմատները գտնուում են ստորին մաշկի մէջ: Կաշուի տակ են մկանուկները, իսկ սրանք կպած են կմախքին: Կաթնասունների կմախքը իւր կազմութեամբ շատ նման է մարդու կմախքին: Նրանց մարմնի երկարութեամբ անցնում է ողնաշարը՝ իրար հետ միացած փոքրիկ, եռանկիւնաձև ոսկորների մի ամբողջ շարք, որ սկիզբն առնելով գանգի ուղեղի շէմքից, վերջանում է պոչով: Ողնաշարն է այն պատուարը, որ հաստատուն է պահում կենդանուն և նրա մարմնին որոշ ձև է տալիս: Նրան միացած են կենդանու ոսկրային միւս մասերը: Ողնաշարը բաղկացած է հինգ խումբ ողերից. Ա. Պարանոցի ողեր—լինում են մեծ մասամբ 7 հատ (ուրեմն զանազան կաթնասունների վզի երկարութիւնը կախուած է ոչ թէ ողերի քանակից, այլ մեծութիւնից). Բ. Կրծքի ողեր. սրանց թիւը կարող է 9—24 լինել, բայց սովորաբար լինում է 12—15 հատ: Կրծքի ողերին կպած են լինում կողերը: Գ. գոկասեղի ողեր, որոնք ամբողջ ողնաշարի մէջ ամենախոշոր և ամենաուժեղ ողերն են, մեծ մասամբ 5—7 հատ են լինում: Դ. գաւակի ողեր,

որոնք բոլորը միասին իրար հետ կազմում են մի ոսկր և ամուր յենարան են սուքերի համար: Ե. պոչի կամ ագիլի ողեր, որոնք աւելի շատ երկար մատուցելի ձև ունին, քան ողի և որոնք լինում են թուով 3—49 հատ:

Կրծքի ողերի շրջանում կողերի մէջ ընկած է կրծքի խոռոչը: Բոլոր կաթնասունները առանց բացառութեան ունին առաջի ոսկեր, իսկ յետի ոսկեր չունին միայն կէտերը: Առաջի ոտները բաղկացած են ուսուկից, բազկի և դասուակի ոսկրներից, իսկ յետի ոտքերը—ազգրի, սրունկի և զարեապարի ոսկրներից: Թէ առաջի և թէ յետի ոտները վերջանում են մատներով, իսկ մատները՝ ճանկերով: Մատները հինգից աւելի չեն լինում: Կան կաթնասուններ, որոնք սուքերի ծայրերին միայն 3 մատ ունին (անգեղջիւր) կամ երկու (եզ) կամ նոյն իսկ մէկ (ձի). և հետաքրքիրն այն է, որ անհետացումը հետևեալ կարգով է կատարուում. նախ մեծ կամ բութ մատն է անհետանում, ապա հինգերորդը, յետոյ երկրորդը, յետոյ չորրորդը, այնպէս որ ձին, որ մի մատ ունի, դա նրա երրորդ կամ միջին մատն է:

Գանգի ոսկորները դասաւորուած են շրջանաձև և կազմում են մի խոռոչ, որտեղ տեղաւորուած է գլխի ուղեղը: Գլխի ուղեղը նեարդային բջիջների մի զանգուած է, որի շարունակութիւնը գնում է ողնաշարի միջով և կոչոււմ է մէջքի ուղեղ: Ուղեղից դուրս են գալիս թելանման ջղեր, որոնք կոչոււմ են նեարդեր և որոնք տարածուելով մարմնի բոլոր մասերում շարժողութեան և արթնութեան մէջ են պահում մարմինը: Գլխի ուղեղից դուրս են գալիս 12 զոյգ նեարդեր, իսկ մէջքի ուղեղից այնքան զոյգ, ինչքան ող կայ ողնաշարի մէջ:

Կաթնասունների արտաքին զգայութիւնները մեծ մասամբ հինգ տեսակ են: Ա. Շօսափելիք, որ շատ լաւ զարգացած է համարեա բոլոր կաթնասունների մէջ. նրա գործարանը կաշին է (ոտների և ձեռների մատները, շրթունքները, ընչացքը, դունչը, կնճիթը): Բ. Ճաւակելիք, որի գործարանը բոլոր կաթնասունների նկատմամբ լեզուն է:


Պ. Հոսոսիիք. հոտի զգայութիւնն ստացուում է օդի մէջ եղած մանրիկ առարկաների առաջ բերած գրգռումից, որ տեղի է ունենում քթի խոռոչի մէջ գտնուած նեարգային ծայրերի վրայ: Պ. Լսելիք. գործարանն է ականջը, որ բաժանուում է երեք մասի. արտաքին ականջ կամ խըխունջ, միջին ականջ կամ թմբկախորշ և ներքին ականջ կամ լաբիրինթոս: Ե. Տեսանելիք, որի գործարանը աչքն է:

Կաթնասունների մարսողութեան գործարանները նըրանց բերանն է, լեզուն և ատամները, ստամոքսն ու աղիքները: Ասամները դասաւորուած են լինում վերին և ստորին ծնոտների վրայ և նրանց թիւը զանազան կաթնասունների նկատմամբ ասրբեր է: Ատամները իրանց կատարած գերի և ունեցած ձևի կողմից լինում են երեք տեսակ. ա. Կտրիչներ, որոնք լինում են սուր և կերակուրը կտրատում են. բ. Ժանիփներ, որոնք յօշոտում և պատառոտում են և գ. Սեղանասամներ, որոնք լինում են հարթ, տափակ և կերակուրը արօրում, ծամում են: Ասածներից պարզ է, որ որևէ կենդանու մասկեր կամ բուսակեր լինելը սերտ կապ ունի ատամների հետ:

Կաթնասունների շնչառութեան լգործարանները թոքերն են. նրանց արիւնային համակարգութեան կենդրոնը սիրտն է, որից արիւնը գնում է մարմնի զանազան մասերը մի քանի զարկերակների միջոցով, իսկ անմաքուր արիւնը մարմնի այլ մասերից հաւաքուելով գալիս վե՛նաների կամ երակների միջով թափուում է կրկին սրտի մէջ:

Կաթնասունները մեծ մասամբ ցամաքային կենդանիներ են. նրանցից շատերը խմբերով են ապրում՝ վարում են համայնական կեանք. բայց նրանց խմբերը թըռչունների երամների պէս բազմաթիւ չեն: Կան և բոլորովին միայնակ, ճգնաւորի պէս ապրողներ: Նրանք գլխաւորապէս գիշերը քնում են, իսկ ցերեկը արթուն են մնում, թէպէտ կան զուտ գիշերային կենդանիներ: Արթնութեան ժամանակ նրանց միակ հոգսը կերակուր որոնելն է: Նրանք շատ են ուտում, բայց ոչ թռչունների չափ: Կաթնասունները ձագեր են բերում և կաթով են կերակուրում իրանց

ձագերին: Ձագերի թիւը ամենաշատը կարող է 24 լինել: Քանի կենդանին մեծ է, այնքան քիչ ձագ կը բերէ միանգամից: Մեծ կաթնասունները սովորաբար մի ձագ են բերում: Մայրերը շատ են սիրում իրանց ձագերին և միայն այն ժամանակ աչքաթող կանեն նրանց, երբ գիտենան, որ առանց իրանց հոգացողութեան նրանք կարող են ապրել: Կաթնասունների կեանքի տևողութիւնը շատ չէ: 20—30 ասրին նրանց ահագին մեծամասնութեան համար համարուում է խորին ծերութիւն: Նրանց ծերութիւնն արտայայտուում է ուժասպառ լինելովը. կենդանու մազերն սպիտակում են ու թափուում, ատամներն ընկնում են, պաշտպանութեան և յարձակման զէնքերը բթանում, անպէտքանում են և կենդանին կամաց կամաց մեռնում է:



ԿԱՊԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔ

Բոլոր կենդանիներից մարդուն ամենից շատ նմանը կապիկն է, թէ իւր մարմնի կազմուածքով և թէ իւր ընդունակութիւններով: Հասակաւոր կապիկը մեծութեամբ մարդու չափ է, իսկ ամենափոքր տեսակը սկիւռի չափ է: Կապիկները ողնաշարը ունի 12—16 կրծքի, 4—9 գոտկատեղի, 2—5 գաւակի և 3—33 պոչի ողիք: (Երեք տեսակի ատամներն էլ ունին սրանք, թէև տարբեր տեսակները՝ տարբեր քանակութեամբ: Նիհար, մազով ծածկուած մի մարմին, երկար ձեռքեր, բարակ ոտքեր՝ առանց կալուղ մկանների, երկար ագի, երկու կողմերից սեղմուած գլուխ՝ ներս ընկած բարակ պոչներով—ահա այն նշանները, որոնցով կապիկներն արտաքուստ յայտնի կերպով տարբերուում են մարդկանցից: Ինչ վերաբերում է նրանց մտաւոր կողմերին և բնաւորութեանը, պէտք է ասել, որ կապիկները չնայած միւս կենդանիների նկատմամբ իրանց ունեցած առաւելութիւններին, մարդկանց համար ցանկալի հիւրեր չեն: Ճիշտ է, նրանք հասկացող են, շատ անգամ նոյն իսկ հեզ, բարեհամբոյր ու վստահ գէպի մարդիկ, բայց միևնոյն ժամանակ նրանք շատ չար են, նենգ, խորամանկ, դիւրագրգիռ, վրիժառու, կռուարար, վիճասէր: Կապիկների աչքի ընկնող յատկութիւններից մէկն այն է, որ նրանք երբէք չեն սիրում պարապ կենալ, զբաղուելու համար միշտ որևէ մի բան կը գտնեն. և մեծ մասամբ յիմար բաներ են անում: Նրանց մէջ յաճախ զգացմունքը, կիրքը աւելի գերակշիռ տեղ է բռնում, քան բանականութիւնը:

Կապիկները սիրում են տաք տեղեր և տարածուած են երկրագնդի հարաւային մասերում: Նրանց մեծ մասն

ապրում է անտառներում, ծառերի վրայ, ուստի և նրանց ձեռները ու ոտները մատները խիստ զարգացած են: Մագլցելու գործում նրանց հետ չի կարող մրցել ոչ մի կաթնասուն: Նրանք ամենայն հեշտութեամբ մէկ հաստաբուն ծառից միւսն են թռչում, շատ անգամ 2—3 սաժէն տարածութիւն: Նրանք ծառից ծառ թռչելով այնպիսի արագութեամբ են կարողանում գնալ, աներևոյթանալ, որ շատ քիչ մարդիկ կարող են նրանց հետքը գտնել:

Կապիկներն ուտում են ամեն տեսակ բան. միջատներ, թռչունների ձուեր և նրանց ձագերը, բայց կապիկների կերակուրը մեծ մասամբ բուսեղէն է: Ուտում են պտուղներ, սոխեր, արմատներ, սերմեր, հատիկներ, ընկոյզ, տերևներ, հիւթալի ցողուններ և ամեն տեսակ բանջարեղէն: Բայց նրանք կերածից տասն անգամ աւելի փչացնում են: Նրանցից չի կարելի ազատուել նոյն իսկ փականքներով, վանդակներով: Նրանք բաց են անում փականքները, թռչում են պատերից և յափշտակում են համարեա ամեն բան: Ինչ որ չեն կարող ուտել, հետներն են վերցնում, նոյն իսկ իրանց համար անպէտք բաներ:


Նւ այդ բոլորը նրանք կատարում են ընկերովի: Կապիկներն ապրում են խմբերով: Իւրաքանչիւր կապիկ ընտրում է իւր բնակատեղը, որը նրա կողմից յարմար է համարուում այն ժամանակ, երբ անտառու է, հարուստ է պտղատու ծառերով և մարդկանց ագարակներին ու բանջարանոցներին մօտ: Խմբերն ունին իրանց առաջնորդները, որոնք ոչ թէ ընտրուում են, այլ իրանց ուժի զօրութեամբ են լինում: Կապիկների մէջ վէճը և անբաւականութիւնը ֆիզիքական ուժով է վճռուում: Կապիկների լեզուն բաւականին հարուստ է ինքնատիպ հնչիւններով, որ սակայն շատ դժուար է արտասանել: Նրանց երեսի ծամածուծութիւնները միացած կոկորդի հնչիւնների հետ գեղեցիկ միջոց են տալիս վախի, սարսափի, ուրախութեան և այլ զգացմունքներ արտայայտելու: Կապիկները քաջութեան կողմից յետ չեն մնում մեծ կաթնասուններից. նրանք հաւասար չափով նաև խիզախ են: Պահանջ

Չած դէպքում նրանք գիտեն յարձակուել իրանցից կրրկ-  
 նակի զօրեղ թշնամու վրայ: Կռուելիս նրանք դորձ են դը-  
 նում թէ ձեռքերը և թէ ատամները. ճանկում են, քեր-  
 ծում և կծում: Թոյլ կապիկները շատ ողորմելի բաներ  
 են. ուժեղը այտեղ էլ իւր ձեռքն է առնում իշխանու-  
 թիւնը. ծեծում է թոյլին և չարչարում է նրան այն աս-  
 տիճան, մինչև որ թոյլն հնազանդուի:

Կապիկները մի ձագ են բերում. շատ քիչ տեսակները  
 միայն՝ երկու: Նորածին կապիկը իւր ծամձամձ դէմքով  
 աւելի շատ ծերունու է նման: Ծնուելուն պէս նա իւր  
 առաջին ձեռքերով փաթաթւում է մօր վզով, իսկ ձեռքե-  
 րով կաշում է նրա իրանին, այնպէս, որ մօրը չխանդարէ  
 վագելիս: Մայրն այնքան է սիրում իւր ձագերին, որ կա-  
 պիկի սէրն առակ է դարձել մարդկանց մէջ: Հեռո՛հեռե-  
 փոքրիկ կապիկը մօր առաջնորդութեամբ սովորում է ման  
 գալ, ծառերի վրայով մաղլցել: Մայրը նրան խրատներ է  
 տալիս և անհնազանդութեան դէպքում նրան ծեծում է:  
 Մայրն այնքան է սիրում իւր ձագին, որ շատ անգամ  
 ձագի մեռնելուց յետոյ ինքն էլ ցաւից հիւժւում ու մեռ-  
 նում է: Յաճախ պատահում է, որ մայրն իւր ձագը այն-  
 պէս կաթոգին կերպով սեղմում է իւր կրծքին, որ ձագը  
 մեռնում է: Որք մնացած ձագն անխնամ չի մնում: Ուրիշ  
 կապիկներ գալիս, որդեգրում են նրան և հոգ են տա-  
 նում մինչև նրա մեծանալը:

Կապիկները երկարակեցութեամբ շատ էլ չեն կարող  
 պարծենալ: Նրանցից շատերը 8—12 տարի են ապրում և  
 քչերն են մարդկանց տարիքին հասնում: Նրանք չեն ընտե-  
 լանում մարդկանց. չեն էլ սիրում գերութիւնն ու անա-  
 զատ կեանքը. միմիայն ստիպուած են հաշտում իրանց  
 կացութեան հետ. նրանք ծեծով են վարժոււմ: Կապիկ-  
 ների տուած օգուտը խիստ աննշան է, բայց վնասն հրա-  
 կոյական:

Կապիկների ընտանիքը խիստ բազմատեսակ է և տա-  
 րածուած է Հին ու Նոր աշխարհներում: Բայց Արևմտեան  
 Աֆրիկայում, յատկապէս Սաորին Գվինէայում կան կա-



պիկներ, որոնք իրանց արտաքինով շատ նման են մար-  
 դուն, ուստի և կոչում են մարդակերպ կապիկներ: Դրանք  
 պոչ չունին, մարմինն ու երեսը մազով ծածկուած չէ:  
 Մարդակերպ կապիկներից առ այժմ չօրս ցեղ է յայտնի.  
 Գոուիլա և Շիմպանզէ՝ Աֆրիկայում, Օուանդ-ուտան և  
 Գիբբոն՝ Արևելեան Ասիայում:

Բացի այդ գլխաւոր ցեղերից կան կապիկների բազ-  
 մաթիւ ցեղեր, որոնք աչքի են ընկնում իրանց մարմնի  
 կազմութեամբ, օրինակ, շնակերպ կապիկներ, լայնաքիթ  
 կապիկներ, նրբամարմին կապիկներ, հաստամարմին կա-  
 պիկներ, վերջիններս վզի վրայ ձիւ նման բաշ ունին:


41904-63

ՄՍՐԴԱՆՄԱՆ ԿԱՊԻԿՆԵՐԻ ՑԵՂ

ԳՈՒԻԼԼԱ

Աֆրիկայի արևմտեան ափին ձգուած են մթին, թանձ-  
 րամած անտառներ, որոնք անյիշելի ժամանակներից իրանց  
 մէջ պահում, մեծացնում են մարդանման կապիկների  
 երկու տեսակը. Գոուիլա և Շիմպանզէ: Երկրագնդի վրայ  
 եղած բոլոր կենդանիներից մարդուն ամենից նմանը կա-  
 պիկների այս ցեղն է: Գոուիլան իւր մարմնի կազ-  
 մուածքով և ֆիզիքական ուժով բոլոր կապիկներից ամե-  
 նից բարձրն է: Նա մարմնի բարձրութեամբ ու անդամների  
 մեծութեամբ համարեա մարդու չափ է, թեևն ու ստները  
 մի քիչ աւելի երկար են: Սա էլ, ինչպէս բոլոր մարդա-  
 նման կապիկները—պոչ չունի:

Գոուիլան ապրում է անտառապատ բլուրների և հո-  
 վիտների մէջ. նա կերակրում է ամեն տեսակ ընկուզե-  
 ղէնով և ձիթապտղի մատղաշ տերեւներով: Նա շատ սիրում  
 է ամեն տեսակ մրգեղէն և նրա կերակուրը գլխաւորա-  
 պէս բուսեղէն է: Նա ապրում է խմբերով, բայց ոչ այնքան  
 մեծ, ինչպէս փոքր կապիկները: Գոուիլաների փոքրիկ  
 խումբը թափառում է ծառից ծառ և նրանց խմբի մէջ



տիրում է անպայման հնազանդութիւն: Գոռիլլան չի վախենում ոչ որից, նոյն իսկ մարդուց, երբէք չի փախչում, այլ միշտ յարձակում է, կռուելով իւր սոսկալի ձեռքերով և սուր ատամներով: Յաճախ նա պոկում է ծառերի ճիւղեր ու տերևներ և շարտում է իւր հակառակորդի վրայ: Նա յարձակում է մինչև անգամ փղերի վրայ, որոնք դալիս նրա ծառից տերևներ են ուտում, և փայտով այնքան ծեծում է նրանց կնճիթներն ու այնպէս չարչարում, որ հսկայ փղերը վերջապէս փախչում են: Գոռիլլան հեշտութեամբ յաղթում է նաև ինձին, որ երբէք չի համարձակուի կռուի բռնուել կապիկի հետ: Գոռիլլաները խմբով յարձակուելիս յաղթում են նաև առիւծին: Իսկ մարդկանց նկատմամբ նա անխնայ է և աֆրիկական նեգր որսորդները ոչ մի կենդանուց այնքան չեն վախենում, որքան Գոռիլլայից: Սոսկալի է նոյն իսկ Գոռիլլայի յարձակուելու ձևը: Որսորդները խմբով գնում են անտառի մէջ հանդարտութեամբ, մէկ էլ անսար յանկարծ նրանցից մէկը գետնից վեր բարձրացաւ: Դա Գոռիլլան էր, որ տարաւ որսորդին, կապիկը նստել էր ծառի ցածլիկ ճիւղի վրայ և տեսնելով անցնող որսորդին, ձգում է իւր յետին ձեռքը, բռնում է նրա վզից և վեր է քաշում: Ապա նա իւր զոհի հետ բարձրանում է ծառի կատարը, շարունակ սեղմում է մարդուն, որ անզորութիւնից ձայն հանել չի կարողանում: Վերջապէս հասնելով կատարը, Գոռիլլան ցած է ձգում մարդուն, մարդն ահագին բարձրութիւնից վայր է ընկնում և վայրկենապէս անշնչանում:

Գոռիլլան այնքան ուժ ունի, որ ատամներով կարող է ծռել և մանրացնել հրացանի փողը: Եւ որսորդը կորած է, եթէ Գոռիլլային ուղղած գնդակը վրիպում է: այդ տեսակ դէպքերում որսորդը ժամանակ էլ չի ունենում ոչ միայն հրացանն երկրորդ անգամ լցնելու, այլ և նրա կոթը փայտի տեղ գործ ածելու: Կատաղի կապիկը բզբկտում, կրծում է հրացանի կոթը, կտոր կտոր է անում, ապա յարձակում որսորդի վրայ և իւր սուր երկար ճանկերով յօշոտում է: Պարզ է ուրեմն, թէ ինչքան վտան-



դաւոր գործ է Գոռիլլային որսալը: Դրա համար է, որ նեգրերի մէջ մեծազոյն հերոս և դիւցազն է համարւում այն որսորդը, որ Գոռիլլա է սպանել:

Տեղացի՝ աֆրիկացնակ նեգրերը կարծում են, թէ այդ կապիկներն իսկական մարդիկ են, որոնք միայն խորամանկութիւնից յիմար են ձևանում, որպէս զի մարդիկ վախենան ու նրանց չտանեն ստրկացնեն: Բացի դրանից, նրանք հաւատում են, որ Գոռիլլաների մէջ ապրում են իրանց հին թագաւորների ու իշխանների ոգիները:



Գ Ի Շ Ա Տ Ի Չ Ն Ե Ր Ի Ը Ն Տ Ա Ն Ի Ք

Կաթնատունների մէջ ամենից բազմազան ու հետաքրքիր ընտանիքն այս ընտանիքն է: Բաւական է յիշել այն հանգամանքը, որ կենդանական աշխարհի թագաւորը՝ արքայ առիւծը դրանց միջից է: Չնայած այն հանգամանքին, որ չափազանց շատ տեսակներ ունի իւր մէջ այս ընտանիքը, բայց և այնպէս կան բազմաթիւ նշաններ, որոնք ընդհանուր են այդ ընտանիքի բոլոր անդամներին:

Գիշատիչների առաջի և յետի օտները խիստ համաչափ են իրանց գեղեցիկ մարմնի հետ համեմատածօ Կլոր գլուխը կարճ ու հաստ վզի վրայ առանձին գրաւչութիւն է տալիս նրանց մարմնին: Ունին 4—5 մատ, որոնք վերջանում են ճիւղաններով: Ատամներից երեք տեսակն էլ ունին: Բաւական զարգացած են արտաքին զգայութիւնները, մանաւանդ հստոտելիքն ու լսելիքը: Գիշատիչների մտաւոր կարողութիւնն ևս պակաս չէ: Նրանց մէջ քիչ չեն խելացի, հասկացող կենդանիներ:

Նրանք այնքան շատ են երկրի վրայ, որ համարեա ամեն տեղ պատահում են. նրանք տէր ու իշխան են թէ ցամաքի և թէ ծովի վրայ, ծառերի կատարներին ու լեռների բարձունքներին. հովիտներում և կուտական անտառներում, թէ հարաւում և թէ հիւսիսում: Նրանցից շատերը ցերեկուայ կենդանիներ են, միւսները՝ գիշերային: Ապրում են մեծ մասամբ խմբերով, իսկ աւելի մեծ տեսակները՝ զոյգերով: Նրանց կերակուրը միան է, բայց նըրանցից շատերն ուտում են և ամեն բան: Այս ընտանիքի բոլոր ներկայացուցիչները բնական սպանիչներ են, աւազակներ և յափշտակողներ. նրանք մորթաւում են և

պատառոտում առանց երկար բարակ մտածելու: Նրանք հաւատար սիրով ուտում են թէ ողնաշարաւոր և թէ անողնաշար կենդանիներ: Բերում են մէկից մինչև եօթ ձագ. փոքրերին մեծացնելու հոգան ամբողջապէս մօր վրայ է ընկնում: Չագերը կոյր են ծնւում: Թէ ինչ ատիճանի օրանք գիշատիչ են, երևում է և այն հանդամանքից, որ շատ անգամ արուն գիշատում և պատառոտում է իւր իսկ ձագերին:

Կ Ա Տ Ո Ւ Ն Ե Ր Ի Յ Ե Ղ

Գիշատիչների մէջ ամենակատարեալ տիպը կատունների ցեղն է: Կատունների մարմնի ամեն մի մասը առանձին վերցրած գեղեցիկ է ու համաչափ, ուստի և մարմնի ամբողջութիւնը գրաւիչ է ու դուրեկան: Սրանց մարմնի ձևն ու կազմութիւնը հանրածանօթ է: Որպէս զէնք կատունները գործ են ածում իրանց սարսափելի ատամները: (Նրանց ատամնաշարի պատկերն այս է.  $\frac{1+1+0+1+4}{3+1+6+1+3} = 30$ ), Բացի ատամներից զէնքի տեղ են ծառայում նաև նրանց ճանկերը, որոնք շատ սուր են, որովհետև ման գալու ժամանակ չեն կալում գետնին, այլ ներս են քաշում թաթի մէջ: Առաջի ոտներն ունին 5, իսկ յետինները 4 մատ:

Կատուացեղ կենդանիները խիստ ուժեղ են և ճարտիկ: Իրանց թաթի մի հարուածով նրանք խորտակում են իրանցից շատ մեծ կենդանիներ: Նրանց զնայքը շատ սիգաճեմ է և հպարտ. քայլում են հանդարտ, զգոյշ և անձայն: Նրանցից քչերը միայն չեն կարող ծառերի վրայ մագլցել. շատերը կարող են նոյն իսկ լաւ լողալ: Զգայարաններից ամենից շատ զարգացած է լսելիքն ու տեսողիքը: Նրանք իրանց որսի ժամանակ ամենամեծ չափով օգտուում են իրանց լսելիքով: Կատուացեղ կենդանին, նոյն իսկ նրա ամենամեծ տեսակը, մինչև որ երկար ու բարակ հետազօտութիւնից յետոյ չհամոզուի, որ կարող է հակառակ կորդին յաղթել, չի յարձակուի նրա վրայ: Նրանք առան-

ձին բաւականութիւն են ստանում նախ քան սպանելը իրանց զոհին մի լաւ չարչարելու նրանք իրանց աւարը քաջում են տանում մի ապահով անկիւն և ապա պատառտում: Յերեկը նրանց բիբերը նեղանում են և երկարանում, ուստի և լաւ չեն տեսնում, դրա փոխարէն գիշերները նրանք մեծապէս օգտւում են իրանց աչքից:

Կատուացեղ կենդանիները բերում են 1—6 ձագերի ստ աչքի է ընկնում մայր կատուի չափազանց մաքրասիրութիւնը: Նա շարունակ մաքրում, լիզում է իւր ձագերին, ամեն բան կարգի է բերում և իւր բունի մէջ ոչ մի անկարգութիւն չի կարող տանել: Կատուի ձագերը շատ չարածճի են ու կայտառ: Նրանք սիրում են իրանց մօր հետ խաղ անել և մայրը ուրախութեամբ թոյլ է տալիս այդ նրանք կամաց կամաց ուղորդում են իրանց մօրից աւազակութեան արհեստը: Մայրը նրանց որսի է տանում և յափշտակելու, գիշատելու դասեր է տալիս այնտեղ, և ձագերը գործնական կերպով, տեղն ու տեղը ուսումնասիրում են իրանց ապագայ անելիքը:

Կատուացեղ կենդանիները մարդկանց հետ շատ էլ բարեկամաբար չեն վերաբերւում, սակայն նրանց որոշ տեսակները հեշտութեամբ ընտելանում են և շատ անգամ նոյն իսկ հաւատարմութեամբ կապւում մարդուն կամ նրա ստացուածքին: Նրանց փոքր տեսակներն աւելի պիտանի և մինչև անգամ աւելի անհրաժեշտ են մարդկանց, որովհետև վերջ են դնում մկներին և այլ վնասակար կենդանիների կեանքին: Մեծ նշանակութիւն են տալիս նաև կատուների կաշուին, մի քանի տեղերում ուտում են նաև նրանց միսը: Կատուացեղերի որսը ամենավտանգաւոր և հէնց այդ պատճառով էլ ամենագրաւիչ պարապմունքներից է որսորդի համար:

Կատուների ցեղին պատկանում են հասարակ՝ ընտանի կատուն, ինձը, յովազը, ընծառիւծը, վագրը, առիւծը և այլն: Կատուացեղ կենդանիների, ինչպէս նաև ամբողջ կենդանական աշխարհի թագաւորը առիւծն է, որ տարածուած է մեծ մասամբ Ասիայի հարաւային մա-

սերում և Աֆրիկայում: Նրանք ուժի կողմից գերազանց են համարեա բոլոր կենդանիներից. դրանց ուժը կենդրոնացած է գլխաւորապէս բնի, բերանի և առաջի ոտքերի մէջ: Նրանց բնորոշ գիծն է պարանոցի բաշը, որ և նրանց արքայական վայելուչ տեսք է տալիս: Համեմատաբար աւելի պակաս գիշատիչ են, երբեմն նոյն իսկ վեհանճն: Ապրում են սաղարթախիտ անտառներում և ջրառատ տեղերում. շատ քիչ տեսակները միայն ապրում են ժայռոտ վայրերում: Յայտնի են Կապի, Պարսկաստանի, բարբարոս կոչուած առիւծները:

Առիւծից շատ աւելի գիշատիչ և նոյն իսկ երբեմն ուժեղ կենդանի է վագրը, որ տարածուած է մեծ մասամբ Հնդկաստանում, Կասպից ծովի ափերին, Թուրքեստանում, ամբողջ Չինաստանում մինչև Ամուրի հովիտները: Նա սիրում է ճահճային տեղեր և խիտ անտառներ. իր բունը շինում է միշտ ջրաբեր տեղերում, վագրերը խիստ կատաղի են յարձակման ժամանակ, անգիմադրելի են կռուի միջոցին: Նրանց հասցրած վէրքերն անդարմանելի են և մահացու:

Ա Ռ Ի Ի Ծ

Բաւական է հէնց մի անգամ նայել առիւծի վրայ, նրա դէմքի արտայայտութեանը, որ բոլոր հին ու նոր մարդկանց հետ միասին ընդունենք առիւծի թագաւոր լինելը: Առիւծը գիշատիչ կենդանիների արքան է և բոլոր կաթնասունների իշխանը: Նա պատկանում է կատուների ցեղին և իւր ցեղի բոլոր յատկանիշներն ունի, միայն աւելի զարգացած, աւելի սաստկացրած չափերով: Նրա մարմինը խիստ ուժեղ և ամուր է, գլուխը նոյնպէս ուժեղ, ջլոտ ու կլորիկ, վիզը կարճ է և զարգարուած գեղեցիկ բաշով, ոտքերը կարճ, հաստատուն, չափազանց ուժեղ և գեղեցիկ: Նրա գլխից սկսած ամբողջ մարմնի վրայ ձգւում է արքայական ծիրանին՝ գոյնզգոյն ու թան-

կագին մորթը, որ հասնում է մինչև ստքերը և մի փունջ է ձևացնում պոչի ծայրին: Առիւծի ամբողջ կերպարանքը, արտայայտութիւնը ուժի, զօրութեան և կարողութեան արտայայտութիւն է: Նրա գեղեցիկ մարմնի վրայ չկայ մի մաս, որ անճոռնի երևար: Իսկ նրան ամենից շատ արքայական տեսք տուողը նրա հիւնալի բաշն է, որ թագի նման պատում է նրա գլուխը ամեն կողմից ու հասնում է երբեմն մինչև կուրծքը:

Առաջուայ ժամանակներն առիւծներն աւելի շատ էին աշխարհիս վրայ. այժմ նրանք համարեա բոլորովին չքացել են մարդաբնակ տեղերից: Այժմ առիւծներ կան միայն Աֆրիկայում և Ասիայում: Մարոկկոն, Ալժիրը, Տունիսը, Աֆրիկայի միջին և հարաւային մասերը, նաև Չինաստանի հարաւային մասերն ու Հնդկաստանն ամբողջովին համարւում են առիւծի բուն հայրենիքը:

Բայց բոլոր առիւծներից ամենից յայտնին իւր ուժով, ճարպիկութեամբ, արքայականութեամբ բարբարոս կոչուած առիւծն է, որ այժմ բնակւում է Աֆրիկայում: Եւ հէնց այդ տեսակն է, որ հին ժամանակներից մարդկանց յայտնի է եղել իբրև քաջ, յանդուգն ու զօրեղ, իբրև ազնիւ, մեծահոգի, հերոսական և լուրջ բնասորութեան տէր: Եւ իբրք, բարբարոս առիւծը ամենազօրեղն ու նշանաւորն է բոլոր գիշատիչների մէջ, նա ամենակարողն է բոլոր կատուների մէջ և ամենավտանգաւորն ու վայրին բոլոր առիւծների մէջ: Նրա հայեացքի մէջ երևում է անպարտելի ուժ, ինքնավստահութիւն, սառնասիրտ քաջութիւն և յաղթելու համոզուածութիւն: Բարձր է նրա իրանը. բայց գլուխն աւելի բարձր է. նրա հասկեացքը վեհ է, գնացքն արքայական ու հիացմունքի արժանի: Նրա ամեն մի վարժունքից երևում է նրա ազնութիւնը, նրա ամեն մի շարժումն հաշուած ու կշոււած է: Նրա խելքն ու մարմինը մի հոյակապ ներդաշնակութիւն են կազմում:

Բոլոր առիւծների կեանքն ու ապրելու եղանակը համարեա թէ միատեսակ է, այնպէս որ մի տեսակի կեանքի

հետ ծանօթանալով, կը ծանօթանանք նաև բոլոր առիւծների կենցաղաւարութեան հետ: Առիւծը փարում է մեծ նակ, առանձնակի կեանք և շատ քիչ դէպքերում է պատահում, որ մի քանի առիւծներ միասին խմբուեն ու որսի գնան: Իւրաքանչիւր առիւծ սովորաբար իւր ապրելու յատուկ շրջանն ունի, ունի իւր արքայական սահմանը, որից անցնել չի կարող ոչ մի առիւծ: Առիւծի սիրած տեղը ընդարձակ, անտառոտ հովիտներն են, որոնք առատ են նաև ջրով: Սարոտ տեղեր այնքան էլ չի սիրում առիւծը: Իւրաքանչիւր առիւծ այդ տեսակ վայրերում մի յարմարուոր տեղ է փորում իւր համար, շինում է իւր որջը և այնտեղ է մնում: Մեծ ու ընդարձակ անտառներում նա բաւական երկար է մնում միևնոյն տեղում և միայն այն ժամանակ է հեռանում, երբ բոլորովին սպառւում է որսը, երբ էլ կենդանի չի պատահում նրան: Այդպիսի դէպքերում նա ճանապարհ է ընկնում տեղը փոխելու և կանգ է առնում ու մի թաւոտ տեղում պահւում է, հէնց որ առաւօտը բացւում է. որովհետև նա միմիայն գիշերն է ճանապարհ գնում:

Նրա կեանքը գիշերային է և ցերեկները զօռով է թողնում իւր որջը, ցերեկը շատ քիչ է պատահում նա անտառում. այդ ժամանակ թմրած ու ինքնամոռաց դրութեան մէջ է ընկած լինում: Եւ նոյն իսկ այնքան ծուլանում է վեր կենալ և ման գալ, որ շատ անգամ թոյլ է տալիս իւր մօտից անցկենալու մարդկանց ու կենդանիներին: Մի մարդ պատմում է իւր տեսածը, թէ ինչպէս անցել է նա ուղտի վրայ նստած մի հովտով, որտեղ պառկած է եղել առիւծը: Կենդանիների թագաւորը նայել է մարդուն, ուղտին, բայց հանգիստ է մնացել և ազատ թողել, որ անցնեն: Երբ գիշերը վրայ է հասնում, միայն այն ժամանակ անտառի արքան իրան զգալ է տալիս. նրա որոտալի մանչիւնը նշան է, որ արքայ առիւծը որսի է դուրս գալիս:

Մտքով, երևակայութեամբ գնանք այն աշխարհը,

որտեղ առիւծներ շատ կան, դնանք Սուգան և տեսնենք թէ առիւծն ինչ է անում, ինչպէս է որս անում:

Այնտեղ մարդիկ մեծ մասամբ խաշնարածութեամբ են պարապում, ահագին հօտերով ոչխարներ ու շներ են պահում: Յերեկները դրանք դուրսն արածեցնում են, իսկ գիշերները հովիւները բերում փարախ են լըցնում ու դուռը պինդ փակում: Այնտեղի փարախները շատ ամուր և պինդ են շինուած, որովհետև մարդիկ վախենում են զազաններից: Փարախի պատերը փշատերև ծառերից են հիւսւում և պատերի բարձրութիւնը շատ անգամ 8—10 ոտնաչափ է լինում, իսկ հաստութիւնը 4—5 ոտնաչափ: Ահա այդ տեսակ ցանկապատներով շրջապատուած փարախի մէջ հովիւներն հաւաքում են իրանց անասուններին գիշեր ժամանակ: Անասունների ձայները կամաց կամաց կտրւում են. խաղաղ ու հանգիստ գիշերը վրայ է հասնում և ամեն բան խաղաղում, լռում է: Քնում են անասունները, քնում են մարդիկ, չի լսւում ձայն, ծպտուն: Ձի քնում միայն հօտապահ շների հաւատարիմ խուճըր, որ պիտի պահէ, պահպանէ իւր տիրոջ կարողութիւնը: Լռում են նոյն իսկ անտառի միւս զազանները. բորենին փորձում է մտնել փարախը. մօտենում է կամացուկ, բայց հանդիպելով շների քաջարի դիմադրութեան, չարացած ու խոխուալով փախչում է: Ահա երևում է նաև ինձը, բայց դա ևս չի կարող արթուն շներից բան պրծցնել: Խանգարուած խաղաղութիւնը նորից վերականգնում է, աղմուկը դադարում է և Աֆրիկայի չքնաղ գիշերը ամենայն հանգարտութեամբ իւր թևերը տարածում է ընդարձակ տափաստանների վրայ: Հեռուից գալիս է գիշերային թռչունի հմայիչ գեղգեղանքը, որ բոյորակ լուսնի կաթնաւուն լոյսի տակ աւելի կախարդական է հնչում: Հանգիստ է անտառը, խաղաղ, անձայն . . . :

Յանկարծ լսում է մի դղրդիւն, կարծես երկրաշարժ լինի. դա առիւծն է: Արքան մոնչում է և նրա մոնչիւնը կատարեալ իրարանցում ու շփոթութիւն է ձգում խաղաղ փարախում, հանգիստ անտառում: Վախից խելքները

կորցրած ոչխարներն ուզում են փախչել փարախից և ընկնում են փշալի ծակող ցանկապատի վրայ. այժերը բարձրաձայն մայում են. կովերը ողորմելի բառաչներով իրար վրայ են դիզւում. ուղտերը ուզում են փախչել, հեռանալ: Քաջ շները, որոնք այնպէս խիզախ կերպով դուրս էին գալիս բորենու և ինձի առաջ և յաղթում էին նըրանց, այժմ առիւծից սարսափում են, ողորմելի կերպով կաղկանձում են և իրանց տիրոջից պաշտպանութիւն խնդրում: Տէրը գլուխը կորցրել է, զգում է իւր կատարեալ անզօրութիւնը հզօր թշնամու դիմաց, չի համարձակւում դուրս գալ նրա առաջ և դողիսիրտ սպասում է գործի վախճանին: Եւ այդպէս բոլոր շնչաւորները սարսափած ու գունատուած ահից քաշւում են և միայն խղճալի, թշուառ ճիշեր արձակում: Իսկ այդ բոլոր իրարանցման և շփոթութեան պատճառը՝ արքայ առիւծը հետըզհետէ մօտենում է: Նրա մոնչիւնը լսելով միայն բոլորը սարսափում էին, իսկ այժմ տեսնելով նրա հրացայտ ու զայրացած աչքերը—դողում են:

Ահա գալիս է նա՝ ոչխարների և ամեն տեսակ եղջիւրաւոր անասունների իսկական հոգեհանը: Նրա դիմաց ցցուած է սափեանոց փշալի ցանկապատը: Բայց ուժեղ ու ճարպիկ առիւծը մի վայրկեան անգամ չի տատանւում: Նա մի զօրեղ շարժումով թռչում է այդ բարձրութեան վրայից ու յանկարծակի յայտնւում հօտի մէջ: Ձլտտ թաթի մի ուժգին հարուածը բաւական է, որ 2—3 տարեկան եզը գետին տապալուի: Ողորմելի կենդանու ողնաշարը փշրւում է գոռոզ ու զայրացած գազանի երախի մէջ: Խուլ մոնչիւնով պառկում է գիշատիչ գազանը իւր զոհի վրայ. նրա խոշորացած ու փայլուն աչքերից երեւում է, որ նա տօնում է իւր յաղթութիւնը և ուրախ է իւր կատարած գործով: Նրա պոչը շարունակ թափահարւում է օդի մէջ: Ժամանակ առ ժամանակ նա թողնում է իւր զոհին և յետոյ դարձեալ յարձակւում, առնում է նրան իւր ամեն բան խորտակող ատամների տակ: Վերջապէս ողորմելի զոհը փչում է իւր շունչը և միայն այն

ժամանակ առիւծը մտածում է հեռանալ: Սակայն հարկաւոր է տանել իւր աւարը. առիւծը պիտի իւր բերանն առնէ այդ ահագին եզանը և դարձեալ պիտի թռչի այդ բարձր, փշալի ցանկապատը: Եւ նա այդ գործն ևս անպատմելի ճարպիկութեամբ կարողանում է կատարել: Միայն առիւծի հսկայական ուժը կարող է այդպիսի թըռիչք կատարել: Եզը բերանն առած՝ առիւծը թռչում է և ընկնելու տեղը ահագին փոս է գոյանում ուժի և ծանրութեան պատճառով: Առանց դժուարութեան նա տանում է իւր աւարը դէպի որջը, որ երբեմն վերատերով հեռու է լինում: Գետնի կամ աւաղի վրայ ահագին հեռք է մտնում առիւծի ստրերից:

Նոր միայն մի փոքր ուշքի է գալիս փարտիւր, միայն այժմ ազատ շունչ է քաշում թափառականի բանակը. հովիւր, անասնապահը ամենեւին չի մտածում իր կրած կորտու մասին. նա ուրախ է, որ իւր կեանքը մնացել է, նա գիտէ, որ առիւծը թաղաւոր է և որ նրան դիմադրել չի լինի:

Առիւծն աշխատում է իւր բնակութիւնն հաստատել մարգարնակ տեղերի մօտ. նա շատ սիրում է դաղութներին ու գիւղերի վրայ յարձակուել, և նրան քչելը կամ հաղածելը շատ դժուար է լինում, որովհետեւ նա բացի ուժից, սենի նաեւ բաւականաչափ խորամանկութիւն: Այդ բանը ցոյց տալու համար մի օրինակ պատմենք: Հողանդացի դաղթականներից մէկը բնակութիւն էր հաստատել Սֆրիկայի հիւսիսային կողմերում և պարագում էր փիղ որսալով: Նրա ագարակից մօտ 1—2 վերստ հեռու տարածւում էր թանձրախիտ թաւուտքը: Ահա այդտեղ գտլիս բուն է գնում մի առիւծ և այդտեղից աշխատում է յարձակուել հողանդացու անասունների վրայ: Այդտեղ նա աղահով էր, ջուրը մօտ էր: Գաղութաբնակը շուտով նկատում է իւր անկոչ հիւրի մօտիկութիւնը աւագի վրայ նրա թողած հետքերից և վճռում է հալածել ու սպանել առիւծին: Հէնց առաջին գիշերը շներն էլ հասկանում են թշնամու ներկայութիւնը և ահագին հաջոց են բարձրա-

ցնում: Բայց առիւծը իրան լաւ է պահում այդ գիշերը և հողանդացին մտածում է, թէ առիւծը երևի գնաց-հեռացաւ վախենալով շներից: Բայց առիւծն ինչ վախեցող պտուղ էր:

Հետեւեալ գիշերը նա առանց այլևայլութեան գալիս, բռնում տանում է հողանդացու սիրած ու փայփայած եղներից մէկին: Բոլորը զարմանում էին, թէ այդ ահագին կենդանուն ինչպէս է տարել առիւծը: Առաւօտը պարզուեց, որ նա թռել է ցանկապատով, խեղդել է եզին և բերանն առած ուղեցել է թռչել դարձեալ ցանկապատը, բայց սա չէ գիմացել առիւծի ու եզի ծանրութեանը և շուտ է եկել: Հողանդացին իսկոյն վերցնում է իւր հաւատարիմ հօտենտօտին ու վեց շուն և գնում է առիւծին սպանելու: Առիւծն անպատճառ պիտի մօտակայ թաւուտքի մէջ լինէր, բայց այնտեղ գնալն այնքան էլ հեշտ չէր, որովհետեւ ծառերն ու թփերը ծակոզ էին. փշատերև, փաթաթուղ ու գալարուղ բոյսերն այն աստիճան հիւսուել էին ծառերի ու թփերի հետ, որ ամբողջ ձորակը մի անանցանելի ցանց էր դարձել: Հողանդացին կանգնեց ձորի մի կողմում, հաստենտօտը՝ միւս, իսկ շներին քչեցին ձորը, որ դուրս վանդեն առիւծին: Ծուտով շները նկատեցին առիւծին և սաստիկ հաջոց բարձրացրին. բայց նրանց հաջոցը երբեմն սաստկանում էր, իսկ երբեմն բուրբուրին նուազում: Բայց առիւծը չկար ու չկար, վերջապէս հողանդացին համբերութիւնից դուրս եկաւ և իւր շներին յետ կանչեց, բայց վեց շներից միայն երկուսը յետ դարձան, այն էլ այլանդակուած, իսկ մնացածներին զղել, խեղդել էր ամենի դաղանք: Գաղութաբնակը փորփոշման տուն դարձաւ և ամբողջ գիշերը պահպանութիւն արաւ իւր անասնանոցի մէջ, բայց առիւծը չերևաց: Հետեւեալ օրը մարդը դարձեալ հօտենտօտի հետ գնաց փշալի ձորի կողմը, իսկ առիւծը այն ժամանակ ուրիշ ճանապարհով անցաւ ձորի կողմից և գնաց գաղութաբնակի անասնանոցը: Այնտեղից նա յափշտակեց նրա ամենալաւ նժոյգը և անվտանգ կերպով թռաւ ցանկապատից: Հող-

լանդացին այդ իմանալով սաստիկ կատաղեց և վերջը խիստ վտանգաւոր մի բան մտածեց. մենակ, առանց շքաների և առանց մարդու իւր հրացանն առած նա առաւօտեան ճանապարհ ընկաւ առիւծի որջը: Նա հին, փորձուած որսորդ էր և նրա գնդակը նպատակից երբէք չէր վրիպուած: Նա շուտով թաւուտքի մէջ այնքան թաղուեց, որ այլ ևս առաջ գնալ չէր կարելի, առանց ձայն հանելու, որովհետեւ ճանապարհը ձգւում էր չոր տերեւների և ճիւղերի վրայով: Բայց ճարպիկ որսորդը սողոսկելով կարողացաւ բաւականին առաջ գնալ և յիսուն քայլ անցնելուց յետոյ նկատեց գազանի մօտիկութիւնը: Նրա աչքին ընկան իւր ձիու սկիւրներն ու մնացորդները և նա իբրև փորձուած որսորդ հետեցրեց, որ գազանը հեռու չախտի լինի իւր աւարից: Ուստի նա պառկեց մի յարմար տեղում և դիրք բռնեց: Մի քիչ յետոյ նա տեսաւ, որ սաղարթախիտ թփերի յետևում, մի ինչ որ բան ժափ է գալիս: Ուշադրութեամբ նայելուց յետոյ նա տեսաւ գազանի գլուխը: Առիւծը շարժումներ լսելով վեր էր բարձրացել և նայում էր՝ աչքերը յառած դէպի որսորդը: Սա զգաց բոպէի ճգնաժամը և համարեա շունչը պահած պառկել էր: Առիւծը համոզուելով, որ բան չկայ, դարձեալ պառկեց: Այն ժամանակ գազութարնակը իւր երկիւղ հրացանի բերանն ուղղեց առիւծի կողմը և յարմար նշան բռնելու համար մի փոքր շարժուեց: Բայց հէնց այդ մի փոքր շարժումն էլ անյայտ չմնաց աչալուրջ գազանի ուշադրութիւնից: Վայրկենապէս նա վեր թռաւ տեղից և որսորդը հազիւ կարողացաւ նրա ճակատին նշան բռնել: Առիւծն իսկոյն վայր գլորուեց, բայց և շատ շուտով վեր թռաւ և ուժգին մոնչալ սկսեց: Աչքերն արին կտրած ու մօլեգնած գազանը դիմում է ուղղակի որսորդի վրայ, որի գնդակն այս անգամ եթէ վրիպէր՝ պատառ պատառ պիտի լինէր նա: Բայց որսորդի ձեռքը սխալուելու սովոր չէր. հէնց այն բոպէին, երբ առիւծը մօլեգնաբար դիմում է որսորդի վրայ, հոլլանդացու տաք գնդակը պատառում է նրա սիրտը և գազանը թփերի մէջ վայր է

գլորւում մահամերձ ջղաձգութիւններով: Երեկոյեան դէմ որսորդը տուն է դառնում, տանելով իւր հետ առիւծի մորթին: Հոտտենտոտներն ուրախութիւնից գլխները կորցրել էին. տիրոջ յաջողութիւնն ու անվնաս վերադարձը նրանց համար մեծ տօն էր, մանաւանդ որ տէրը նրանց օղի էր բաժանել, որպէս զի նրանց ուրախութիւնը կատարեալ լինի:

Ինչպէս ասացինք, առիւծը կերակրւում է ամեն տեսակ կաթնասունների մտով. բայց նա ամենից շատ սիրում է մեծ ու փոքր եղջիւրաւոր անասուններին և առանց դժուարութեան որսում է դրանց: Բոլորովին այլ կերպ է վարւում նա, երբ վայրենի կենդանիների հետ է գործ ունենում: Առիւծը փորձով գիտէ, որ ազատութեան մէջ ապրող կենդանիներն աւելի արագաշարժ և նրբագագաց են և շատ շուտ են իմանում առիւծի մօտիկութիւնը, ուստի և առիւծը կատուացեղին յատուկ զգուշութեամբ դարան է մտնում և երկար չափել ձևելուց յետոյ միայն յարձակւում է: Նրա որսի տեղերը համարւում են Աֆրիկայում գտնուած այն գետերն ու ջրաւազանները, որտեղ վայրենի կենդանիները մէկ մէկ ու խմբերով ջուր խմելու են գալիս: Երբ օրուայ շոգը մի փոքր անց է կենում և վրայ է հասնում գիշերային զովութիւնը, դուրս է գալիս գեղեցկատեսիլ անտիլոպը, հեղաբարոյ ընձուղտը, բծաւոր զեբրը և զօրեղ գոմէշը. դրանք բոլորը շտապում են դէպի ջրաւազանը մի փոքր թրջելու իրանց չորացած լեզուները: Ամենայն զգուշութեամբ նրանք մօտենում են ջրին, որովհետեւ գիտեն, որ իրանց համար ամենադրաւիչ տեղերը միևնոյն ժամանակ ամենից վտանգաւորն են: Ահա երևում է անտիլոպների հօտը, բայց ամենից առաջ նրա առաջնորդն է, որ ուշադիր կերպով, զգոյշ ու հանդարտ, չորս կողմը դիտելով դանդաղ մօտենում է. նա մէկ կանգ է առնում, հոտմտում է օդը, ակննջ է դնում և երբ նկատում է առիւծի կամ այլ թշնամու մօտիկութիւնը, իսկոյն վայրկենապէս փախուստի է դիմում և նրան հետևում է ամբողջ հօտը: Վայ

նրանց, եթէ մի փոքր անդգոյշ լինին և անհամբեր, վայ ընձուղտին, եթէ նա կամենայ մի րոպէ շուտ յազեցնել պապակը՝ առանց գործ գնելու զգուշութեան միջոցները։ Այդ ժամանակ ահաւոր առիւծը վրայ է պրծնում մի րոպէսով և նրանից ազատուել չի լինում այլ ևս։ Նա մի հարուածով տապալում է բռնած կենդանուն։ Չոհին պատում է մահուան երկիւղը, առիւծի ամբողջ թափին նա չի կարողանում դիմանալ և անշնչանում է գազանի հասցրած մահացու վէրքերից։ Բայց եթէ առիւծը մի անգամից չըկարողացաւ բռնել կենդանուն, այլ ևս չի հալածի նրան, այլ դանդաղ քայլերով յետ է դառնում դէպի իւր որջը, կարծես ճանապարհին մտածելով, թէ ինչու այնպիսի թըռուիչը չարաւ, որ կարողանար բռնել զոհին։

Երբ առիւծը մի կենդանի է բռնում, եթէ յարմարութիւն կայ, տանում է իւր որջը և այնտեղ է ուտում։ Նա անվախ է և նրա ուժը՝ անչափ։ Նա յարձակում է բոլոր կենդանիների վրայ և չի կարող դէմ գնել երբեմն փղերին ու ռնգեղջիւրներին։ Սովորաբար առիւծն ուտում է միայն իւր սպանած կենդանու միսը, այն էլ թարմ։ Շատ քիչ է պատահում, որ նա երկրորդ կամ երրորդ անգամ գնայ տեսնելու իւր մորթոտած կենդանու մարմնից մնացած մասերը։ Եւ իզուր էլ կը լինէր նրա գնալը, որովհետև մի շարք չորքոտանի պնակալէզների ձեռքից բան չէր պրծնի։ Բորենին, գայլը, վայրի շունն ու այլ կենդանիներ, որոնք սիրում են պատրաստի ուտել՝ առանց իրանց սեփական աշխատանքի, խմբերով հետևում են առիւծին և նրա արքայական սեղանի փրշրանքներով են բաւականանում։ Բայց երբեմն էլ թանգ է նստում դա նրանց վրայ։ Արևելեան Սուգանում պատահած դէպքը հետևեալ կերպով է պատմում ականատեսը։ Օրը ցերեկով կռիւ է պատահում մի առիւծի և երեք բծաւոր բորենիների մէջ։ Բորենին, թէև վերին աստիճանի վախկոտ կենդանի է, բայց ծայրայեղ քողցից կորցնում է խելքը և առիւծի վրայ յարձակուելու յանդրգնութիւնն է ստանում։ Առիւծը նստել էր հանդարտ և

սպասում էր երեք բորենիների յարձակմանը։ Բորենիները մոմաւրով ու ատամների կրճտոցով մտենում էին առիւծին, և քանի գնում այնքան յանդուգն էին դառնում։ Վերջապէս նրանցից մէկը սիրտ արաւ և ուղղակի վրայ պրծաւ առիւծին։ Բայց հէնց նոյն վայրկեանին այնպիսի հարուած ստացաւ, որ իսկոյն շնչասպառ գետին գլորուեց, միւս երկուսը փախան։

Առիւծը մարդու վրայ շատ քիչ է յարձակում. բոտ երևոյթին մարդու բարձր հասակն ու հպարտ, նոյնպէս արքայական տեսքը նրան պատկառանք են ազդում, բայց ոչ վախ։ Գուցէ առիւծն հասկանում է, որ մարդն է իրօք ամբողջ կենդանական աշխարհի թագաւորն ու տէրը. բայց առիւծն ևս իբրև գազան, այն էլ հղորագոյն և խելացի գազան, խիստ վտանգաւոր է մարդու համար, մանաւանդ այն դէպքում, երբ մարդ ինքն է տեղիք տալիս։ Անգլիացի նշանաւոր ճանապարհորդ Լիվինգստոնը այսպիսի մի բան է պատմում։

Մենք մի քանի օրսորդներով շրջապատեցինք անտառի մի մասը, որտեղ առիւծներ կային և հետզհետէ նեղացրինք շրջանը։ Շրջանի մէջտեղում տեղական վարժապետի մօտ նկատեցինք մի մեծ առիւծ։ Վարժապետը կրակեց, բայց գնդակը քարին առաւ, առիւծը նախ վազեց գնդակի դիպած տեղը, հողն ու քարը բերանն առաւ և ապա փախաւ։ Նորից նեղացնելով շրջանը, մենք ուրիշ երկու առիւծ ևս տեսանք, որոնք նոյնպէս փախան։ Եւ երբ մենք դարձանք տուն գնալու, ճանապարհին տեսանք դարձեալ մի առիւծ, որ ժայռի վրայ պռուկել էր։ Թէպէտ թփերը խանդարում էին, բայց ես կրակեցի։ «Պիպն», բղաւեցին մի քանիսը և ուզում էին վազել այն կողմը, բայց տեսնելով թփերի յետևում առիւծի բարձրացրած պոչը — գոռացի։ «Սպասեցէք, ժամանակ տուէք լցնեմ հրացանս»։ Ես նկատեցի, որ առիւծը պատրաստում է վրաս յարձակուել, և իրօք, նա թռաւ դէպի ինձ և բռնեց բազկիցս և մենք երկուսով գլորուեցինք ցած։ Նա ինձ շնչեցրել էր, ես ոչ ցաւ էի զգում և ոչ

վախ. թէև հասկանում էի բոլորի լրջութիւնը: Ես աշխատում էի ազատուել առիւծի ճանկերից: Առիւծը դարձել վարժապետին էր նայում, որովհետև վարժապետն իւր երկփող հրացանն ուղղել էր առիւծի լանջին: Լսուեց կըրակոցը և զայրացած առիւծը թողեց ինձ ու կատաղած յարձակուեց կրակողի վրայ ու բռնեց նրա ազդրից: Բայց հէնց այդ բոլորին մեզ հետ եկած որսորդներից մէկը նիզակն ուղղեց առիւծին և հէնց այն է, կամենում էր հասցնել նրա ճակատին, որ առիւծը թողեց վարժապետին ու նետուեց այդ որսորդի կողմը և բռնեց նրա թևից: Սակայն ես շտապով կրակեցի երկու անգամ և ամենի դազանն անշնչացած գետին դլորուեց: Այդ բոլորը մի քանի բոլորում կատարուեց: Առիւծի հասցրած վէրքերն զգալի էին ու խիստ և երկար ժամանակ չէին լաւանում: Իմ մի ձեռքս ծուռ էլ մնաց մինչև վերջը»:

Առիւծը միայն ծայրայեղ քաղցի դէպքում է մարդկանց վրայ յարձակւում: Իսկ միւս դէպքերում նա անուշադիր է թողնում մարդուն կամ ճանապարհը ծուռ է: Արաբները պատմում են, թէ երբ առիւծը հանդուտանում է, մարդ պատահելով նրան, կարող է նոյն իսկ քշել նրբան, եթէ իհարկէ այնքան քաջութիւն ունի, որ առիւծի գիմաց դուրս դայ: Վերաբանչիւր առիւծ, ասում են արաբները, երկու անգամ տեղի է տալիս մարդուն և խուսափում է նրանից, որովհետև գիտէ, որ մարդ Աստուծոյ պատկերն է. մարդու առաջ առիւծն էլ է խոնարհւում, որովհետև նա արդարադատ կենդանի է: Բայց եթէ մարդ չի պահում Աստուծոյ պատուէրը, որով հրամայում է անմիտ կերպով կեանքը վտանգի չենթարկել, և երբորդ անգամ առիւծի դէմ է դուրս գալիս, փրկութիւն չկայ նրան, կորուստ է նրան սպասում:

Խօհեմութիւն չէ առ հասարակ փախչել առիւծից, որովհետև առիւծն այդպիսի դէպքերում, երբ փախչողը մանաւանդ մարդ է, անպատճառ կը հալածէ. և չպիտի մոռանալ նաև այն, որ առիւծը հիանալի վազը ունի: Նա կարող է հասնել նոյն իսկ արագոտն նժոյղին: Առիւծին

տեսնելիս հարկաւոր է կանգնել կամ հանդիստ, նոյն եղանակով անցնել գնալ. այդպիսի դէպքում առիւծը ոչինչ չի անի: Սակայն այդ անելու համար հարկաւոր է չափազանց սառնասրտութիւն, արիութիւն և քաջութիւն, որ ամեն մարդու բանը չէ:

Ես աչքի ընկնող է այն հանգամանքը, որ առիւծը ամենեւին, կամ շատ քիչ է ձեռք տալիս երեխաներին: Դէպքեր շատ են եղել, երբ առիւծը անցել է երեխաների մօտով, ամենեւին չի մօտեցել նրանց և նոյն իսկ կարծես աշխատել է, որ երեխաները չվախենան: Դա ցոյց է տալիս իհարկէ նրա մեծահոգութիւնը: Միւս գազանների հետ համեմատած առիւծը շատ վեհանձն է և հպարտ, դրա համար էլ նա իրօք արժանի է արքայ տիտղոսին, եթէ մենք այդ բառով հասկանանք մեծահոգի, վեհանձն մարդուն: Նա գիշատիչ է ու յափշտակող անհրաժեշտութիւնից ստիպուած: Եստերն առիւծին մօտ ճանաչելուց յետոյ կընդունեն, որ առիւծը թէև դազան է, կարելի է սակայն նրան սիրել, նրա հետ բարեկամական կապերով կապուել—նրա մեծահոգութեան, վեհանձնութեան ու տղամարդութեան համար: Ո՞վ կարող է նկարագրել առիւծի հոգին, այդ հերոսի, այդ արքայի հոգին, բացառկանչում է Շէյքլին որսորդը հիացած: Ի՞նչպիսի գորեղ ինքնաճանաչութիւն, ի՞նչպիսի գեղեցկութիւն, ի՞նչպիսի վեհանձնութիւն, ի՞նչպիսի մարմին, ի՞նչպիսի կուրծք: Մնափառ չէ, բայց փառահեղ է. նրան վարժեցնել չի լինի. նա դրա համար չափազանց լուրջ է ու չափազանց հրպարտ: Նա ինքն է իւր տէրը. նրա բնութիւնը արքայական է: Դէպքեր են բերում երբեմն, թէ առիւծը վախկոտ է. բայց առիւծ և վախկոտութիւն, դրանք հակադրութիւններ են իրար: Լուրջ արարածները երբէք վախկոտ չեն լինում. և եթէ առիւծը յաճախ տեղի է տալիս մարդուն, դա վախկոտութիւնից չէ, այլ պատկառանքից ու դարմանքից: Նա ոչնչից չի վախենում և չի կարող վախենալ: Առիւծը մարդկային կենդանի է, ինչպէս որ կան կենդանական մարդիկ:

Աֆրիկայի հիւսիսային մասերում Ատլանտի խիստ տա-  
 բորինակ եղանակ են գործ դնում առիւծ որսալիս: Ձէնքի  
 ընդունակ բոլոր մարդիկ հաւաքուում, շրջապատում են  
 որջը և երեք շարք են կազմում, որոնցից առաջինը դա-  
 զան խրտնցնելու և որջից դուրս բերելու համար է նշա-  
 նակուած: Սկզբում աշխատում են յաջողցնել այդ դա-  
 նազան հայհոյական խօսքերով. «այ դու շուն, շան որդի,  
 դո՛ւ, շան ծնունդ և շուն ծնող, դո՛ւ, նախիրներ և հօ-  
 տեր լափող, սատանի զաւակ, աւազակ անպիտան. դէ՛հ,  
 դուրս արի է՛, տեսնենք դու ցերեկով արդեօք նոյնքան  
 քաջ ես, ինչքան գիշերը: Դէ՛հ, պատրաստուիր, տես, ով-  
 քեր են գալիս վրադ, քաջութեան և պատերազմի որդիքն  
 են, հա՛, լաւ նայիր»: Եւ եթէ այդ պատուական խօսքերը  
 չազդեն, այն ժամանակ մի քանի անգամ կրակում են,  
 և առիւծը վերջապէս համբերութիւնից ելած, դուրս է  
 գալիս որջից մոնչալով և հրեղէն աչքերով: Արաքները  
 վայրի աղաղակով են ընդունում նրան և պատրաստ են  
 արժանի կերպով դիմադրել գազանների թագաւորին, որ  
 չափաւոր քայլերով, զայրացած ու զարմացած առաջ է  
 գալիս, շարունակ նայելով իրան հանգստութիւնը խան-  
 գարողների վրայ: Առաջին շարքը միահամուռ կրակ է  
 բաց անում. վիրաւոր առիւծը թռչկոտում է և երկրորդ  
 շարքի կրակից սպանուած վայր է ընկնում: Այտեղ ևս,  
 թէև մարդիկը շատ են, բայց և այնպէս լաւ կրակողներ  
 են հարկաւոր, որովհետև շատ անգամ ոչ մահացու վի-  
 րաւոր առիւծը սարսափելի վտանգաւոր է դառնում որ-  
 սորդի համար: Յաճախ է պատահում, որ առիւծներից  
 մէկը փախցնում քշում է զինուած արաքների ահազին  
 բազմութիւն: Յայտնի որսորդներից մէկն հաւատացնում  
 է, որ 1853 թուին մի առիւծ 200 մարդ փախցրեց, որոնք  
 հրազէններ ունէին, և դեռ մէկին էլ սպանեց ու վեցին  
 վիրաւորեց:

Առիւծ որսալու համար կայ և մի այլ միջոց: Արաք-  
 ներն այն ճանապարհի վրայ, որտեղից պիտի անցնի ա-  
 ռիւծը, ահազին մեծութեամբ փոսեր են փորում, իրանք

մտնում են մէջը, վրան ծածկում են ծառի ճիւղերով ու  
 սաղարթներով և միայն մի փոքրիկ ծակ են թողնում —  
 հրացանի խողովակի համար: Միևնոյն ճանապարհի վրայ  
 այդպիսի փոսեր մի քանի հատ են փորում և մի քանի  
 մարդ դարան են մտնում: Երբ առիւծը գիշերով գալիս  
 մօտենում է փոսին, իսկոյն տրաքում է հրացանը, ա-  
 ռիւծն առաջին անգամ թեթև է վիրաւորում սովորա-  
 բար, որովհետև գիշեր ժամանակ այնքան էլ հեշտ չէ լաւ  
 նշան խփել: Վիրաւոր առիւծը կատաղում է, երկար դէս  
 ու դէն է ընկնում ու չի հեռանում այնտեղից, որտեղ  
 վիրաւորուել է. այդ միջոցին թռչում է երկրորդ, երրորդ  
 գնդակը նոյն կամ միւս փոսից և առիւծը վայր է տա-  
 պալում:

Առիւծներին արաքներն սպանում են նաև թունա-  
 ւոր նետերով, բայց այդ ձևը շատ էլ տարածուած չէ:  
 Առիւծ որսալու ամենայարմար և միւս կողմից ամենից  
 վտանգաւոր միջոցը հրազէնն է քաջ, ճարպիկ որսորդի  
 ձեռքում: Եթէ իմանանք, թէ ինչքան մեծ է առիւծի  
 հասցրած վնասը, այն ժամանակ պարզ կը լինի նաև այն,  
 թէ ինչքան ահազին կարևորութիւն ունի առիւծ որ-  
 սողների դերը: Մի որսորդի հաշուելով աֆրիկական նա-  
 հանգներից մէկում եղած 30 առիւծը 1855 թուին մի  
 տարում միայն 45,000 մանէթի վնաս են տուել, իւրա-  
 քանչիւրն ուրեմն 1500 մանէթ: 1856—7 թուին նոյն  
 մարդու ասելով 60 առիւծը 10,000 անասուն են վախ-  
 ցրել: Դրանից յետոյ պարզ է, թէ ինչքան ահաւոր ու  
 վնասակար թշնամի է առիւծը անասնապահների ու ագա-  
 րակատէրերի համար: Շատ տեղերում արաքները համա-  
 յիններ են պատրաստում, մի թղթի վրայ գրել են տալիս  
 դուռանից մի քանի խօսք և կպցնում են ագարակի դռան  
 վրայ: Սակայն առիւծի վրայ լազդեցութիւն չեն անում  
 Մահմեդի խօսքերը:

Առիւծները շատ էլ չեն ընտելանում. բայց պատա-  
 հում են այնպիսիները, որոնք խիստ մտերմանում են մար-  
 դու հետ, մանաւանդ այնպիսիները, որոնք փոքրուց են

հեռանում ու մարդկանց մօտ բերում: Վս մի առիւծ  
 ունէի, ասում է կենդանիների բարեկամ Բրեմը, շան  
 նման շարունակ հետեւում էր ինձ, ամեն յարմար դէպ-  
 քում շոյում, փայփայում էր ինձ և անհաճոյ էր միայն  
 այն կողմից, որ երբեմն դլխին փչում էր անժամանակ այ-  
 ցելել ինձ դիչեր ժամանակ: Երբ ես քնած էի, նա ներս  
 էր մտնում, մօտենում անկողնիս ու իւր փայփայանքնե-  
 րով արթնացնում էր ինձ:

Առիւծն աւտառում, աղատութեան մէջ բաւականին  
 երկար է ապրում: Յիսուն, վաթսուն, մինչև անգամ 70  
 տարին հազուադէպ չէ առիւծի համար: Ընտելացրած  
 առիւծն ևս, եթէ լաւ կերակրուի, նոյնպէս կարող է եր-  
 կար ապրել: Իբրև բաւարար սնունդ, նրան գոհացուցիչ  
 է օրական 8 գր. միսը, բայց միսը լաւ պէտք է լինի, հա-  
 կառակ դէպքում առիւծը կարող է հիւանդանալ և  
 մեռնել:

Վ. Ա. Գ. Բ

Վագրն աշխարհի բոլոր կենդանիներից ամենից կա-  
 տաղին է, ուստի և ամենասուկալի դազանն է: Նա ա-  
 ռիւծից երկիւղալի է նրա համար, որովհետև ունենալով  
 առիւծի ուժը, քաջութիւնը, չունի առիւծի մեծահոգու-  
 թիւնը, վեհութիւնը:

Վագրի մարմինը շատ գեղեցիկ է: Կատուններն ամ-  
 բողջ կենդանական աշխարհի մէջ յայտնի են իրանց գե-  
 ղեցկութեամբ, իսկ կատունների մէջ վագրն է ամենից գե-  
 ղեցիկը: Նրա կտր, համաչափ գլուխը, միջակ, մտոտ ու  
 ճկուն վիզը, կտրիկ, դեր իրանը, կարճ, մօալի, ուժեղ  
 և հաստատուն ոտները մեզ համոզում են այդ բանին:  
 Իսկ նրա աչքերը—օ, դրանք հրդեհներ են, որոնցից կը-  
 րակի բոցեր են դուրս ցայտում: Վագրի աչքերն այնքան  
 սարսափելի ու կենդանի են, նրանք այնքան կրակոտ ու  
 դուրս ընկած են, որ նայողին թւում է, թէ էն ա դուրս

պիտի պրծնեն ու վրագ յարձակուեն: Բա նրա մորթին  
 —այդ արքայական ծիրանին: Իզուր չէ, որ վագրը Ասիա-  
 յում կենդանիների թագաւոր է համարում: Վագրին  
 աւելի գեղեցկութիւն, աւելի գրաւչութիւն տւողը նրա  
 գոյնզգոյն, գանազան բծերով զարդարուած մորթին է:  
 Մէջքի վրայ այդ բծերը մութ են, իսկ քանի կողքերն է  
 դնում, այնքան աւելի երանգները շատանում են ու պայ-  
 ծառ դառնում: Իսկ փորի տակը, կուրծքը, թշերը, ոտների  
 ներսի կողմը սպիտակ են: Բեխերը նոյնպէս ճերմակ են:  
 Մէջքի և ոտների վրայով լայնութեամբ անցնում են վագրի  
 գեղեցկատեսիլ բծերը, որոնք մեծ շքեղութիւն են տալիս  
 վագրի տեսքին:

Բայց շնայած դրան, որ վագրն այդպէս գոյնզգոյն  
 մորթի ունի, դարձեալ խիստ դժուար է լինում նրան նը-  
 կատել հեռուից, որովհետև վագրը սիրում է այն տեսակ  
 բոյսերի, եղէգների մէջ ապրել, որոնց գոյնը բոլորովին  
 նման է վագրի գոյնին: Այդ է պատճառը, որ մարդ վագ-  
 րին միայն այն ժամանակ է տեսնում, երբ բաւականին  
 մօտենում է նրա որջին:

Վագրը իւր բունը կամ որջը շինում է բարձր եղէգ-  
 ների կամ շամբերի մէջ. նա շատ սիրում է ջրառատ  
 տեղեր և բարձր, թանձր խոտոտ ու ջրոտ վայրեր: Հընդ-  
 կաստանում և հարաւային ուրիշ երկիրների գետերի ա-  
 փերին բուսած այդ տեսակ խոտերի, եղէգների մէջ միշտ  
 համարեա կարելի է վագր տեսնել:

Նա իւր որջից դուրս է գալիս միայն նրա համար,  
 որպէս զի մի օրէ է կենդանի բռնի, խեղդի, պատառտի  
 ու կշտանալուց յետոյ դարձեալ գնայ իւր որջը, վեր  
 ընկնի քնի:

Շատ հետաքրքիր է նրա սրտ անելու ձևը: Տեսած  
 կը լինիք, ինչպէս կատուն մուկ է որսում. ճիշտ այդպէս  
 է որսում նաև վագրը: Երբ նա նկատում է իւր որսին,  
 կամայուկ ու գաղտնագողի մօտենում է, երկար ժամա-  
 նակ անշարժ կենում է մի տեղում և վերջը, երբ որ հա-  
 մոզում է իւր յաջողութեան վրայ, իսկոյն կայծակի պէս

արագ, անսպասելի ճարպիկութեամբ, ինչքան որ ուժ  
ունի, նետուում է իւր զօհի վրայ. իւր ուժեղ ճանկերը  
մեխում է նրա մտի մէջ, ատամներով յօշոտում է թշուառ  
զօհի մարմինը: Զօհի կողմից ոչ մի ընդդիմութիւն, ոչ մի  
հակառակութիւն. միթէ կարելի է դիմադրել կատաղած  
ու խելքը կորցրած գազանին: Այդ բոլորէին նրա աչքին  
ոչինչ չի երևում: Իւր սոսկալի ճանկերը մեխած զօհի մտի  
մէջ, արիւնարբու գազանը խմում է նրա արիւնը: Գա-  
զաններից շատ քչերն են իրանց զօհի արիւնը խմում:  
Արիւնը խմելուց յետոյ կարծես մի փոքր իջնում է նրա  
կատաղութիւնը, մի փոքր հանգչում է նրա սիրտը. գա-  
զանը յագենում է:

Ոչ մի շնչաւոր ազատ չէ վագրի սարսափից: Այդ ահ-  
ռելի գազանն յարձակում է նոյն իսկ փոքր փղերի ու  
փոքրիկ ռնգեղջիւրների վրայ: Բայց մեծ, ուժեղ փղերի  
առաջ նա չի համարձակում դուրս գալ: Զիտը, եղներն  
ու եղջիւրաւոր անասունները նրա համար սովորական կե-  
րակուր են: Նա ամենայն հեշտութեամբ յարձակում է  
նաև ուղտերի վրայ: Մի անգամ վագրը մի հարուածով  
ջարդել է ուղտի կողերը և այդ ահագին կենդանուն գե-  
տին է տապալել: Շատ անգամ վագրը թռչում է փղերի  
վրայ և նրանց վրայից վայր է քաշում մարդկանց:

Հնդկաստանի անտառներում ոչ մի մարդ չի կարող  
ապահով զգալ իրան. այդ սարսափելի գազանը բռնում է  
անտառի ճանապարհները և թոյլ չի տալիս մարդկանց  
անցկենալու: Վագրերը սիրում են գալ մեծ ճանապարհ-  
ների վրայ ու սպասել իրանց զօհին և ոչ մի անգամ ան-  
յաջող չեն դառնում: Մարդիկ ամեն կերպ աշխատում են  
խոյս տալ, բայց երբէք չի յաջողում այդ: Հնդկաստա-  
նում սաստիկ շողերի պատճառով մարդիկ ցերեկը չեն  
ճանապարհորդում. նրանք գիշերներն են դուրս գալիս և  
այն էլ ահագին խմբերով: Բայց և այնպէս վագրը չի քաշ-  
ւում նաև այդպիսի հանգամանքներում յարձակուել  
մարդկանց վրայ: Յայտնի է, որ կատուացեղ կենդանիները  
չեն կարող ճրագի լոյսին դիմանալ. նրանք վախենում են

նաև մեծ աղմուկից ու աղաղակից: Իրա համար Հնդկաս-  
տանում մարդիկ գիշերները ճանապարհորդելիս իրանց  
հետ ահագին թուով կերոն բռնողներ ու թմբկահարներ  
են վերցնում, որոնք ճանապարհորդների առաջից տանում  
են վառուած կերոններ ու ջահեր և թմբկահարութեամբ  
մեծ աղմուկ են բարձրացնում: Բայց շատ անգամ դար-  
ձեալ պատահում է, որ վագրն արհամարհում է այդ լոյսն  
էլ, թմբուկն էլ և կատաղութեամբ յարձակում է խմբի  
վրայ: Մի ախանատես մարդ պատմում է, թէ ինչպէս այդ  
տեսակ գիշերներից մէկում վագրը խեղդում է երեք  
զինուած մարդկանց:

Վագրը չի վախենում հասնել գիւղերը, նոյն իսկ քա-  
ղաքները և այդտեղից օրը ցերեկով, բոլորի աչքի առաջ  
սպանել ու տանել, քաշ տալ մարդկանց: Շատ գիւղեր  
այդպիսով անբնակ են դարձել, որովհետև մարդիկ թողել  
հեռացել են վագրի վախից: Պատմում են, որ միայն մի  
գիւղից վագրերը երկու տարուայ ընթացքում տարել են  
80 մարդ: Վագրը, մի անգամ որ մարդու մտի համն առ-  
նում է, էլ չի պոկ գալիս նրանից: Առանձնապէս դժուար  
է հովիւների և պտուղ հաւաքող մարդկանց բանը: Նրանց  
գործը շարունակ անտառների մէջ է, դրա համար էլ ա-  
մենից շատ նրանք են պատահում վագրին և իհարկէ գա-  
զանից խուսափել չեն կարողանում: Վագրը զուրկ է այն  
մեծահոգութիւնից և վեհանձնութիւնից, որ յատուկ է  
առիւծին: Մայրերն իրանց կեանքն ազատելու համար  
գազանի առաջ են ձգում իրանց զաւակներին, Հարաւա-  
յին երկրներում, անտառոտ տեղերում մարդիկ են պոստը  
տանում բերում: Շատ անգամ է պատահել, որ պոստա-  
տարները զոհ են գնացել վագրի հարուածներին: Պատա-  
հել է ժամանակ, երբ ամբողջ գաւառների հաղորդակցու-  
թիւնը դադարել է, որովհետև վագրերի երկիւղից մար-  
դիկ չեն համարձակուել դուրս գալ: Երբ վագրը շատ  
քաղցած է, չի վախենայ նոյն իսկ կրակից: Ճաւա կղզում  
վագրը կոտրել է երգիկը և բռնել է կրակի շուրջը նրա-  
տած մարդկանցից մէկին, խեղդել է և առել տա-

րել, առանց ուշադրութիւն դարձնելու միւսներէ ազա-  
զակին:

Վագրը չի վախենում նաև ջրից: Ճանապարհորդնե-  
րից շատերը պատմում են, թէ ինչպէս վագրը թռել, մը-  
տել է ջուրը, նաևակի յետեւից լողացել է, որպէս զի հաս-  
նի, բռնի մարդկանց: Մի մարդ հալածուելով վագրից,  
ինքն իրան գետն է նետում և յոյսը դնելով իւր բազուկ-  
ների վրայ, լող է տալիս, որ ազատուի: Բայց որքան մեծ  
է լինում նրա դարմանքը, երբ նկատում է, որ վագրը  
յետեւից դալիս է և քանի դնում, մօտենում է: Մարդը  
տեսնում է, որ էլ ուրիշ ճար չկայ, սուղում է ջրի տակ  
և բաւականին մնում է այնտեղ, երբ գլուխը դուրս է  
հանում, ուրախութեամբ տեսնում է, որ էլ չկայ գա-  
զանը: Վագրը սպասել, սպասել է, տեսել է, որ մարդը  
չի երևում, թողել հեռացել է: Մի ուրիշ վագր լողալով  
մօտենում է ուղղակի նաւին և ուշադրութիւն չդարձնե-  
լով նաւի վրայ եղած մարդկանց աղաղակներին, բարձ-  
րանում է նաւի վրայ, Մարդկանցից մի քանիսն իսկոյն  
ջուրն են թափում, իսկ միւսներն իջնում են նաւի ներք-  
նայտրկը և սարսափով սպասում են գործի վախճանին:  
Վագրը հպարտ հպարտ գալիս նստում է նաւի առաջին  
մասում և մենակ տէր ու տիրական է լինում նաւի  
վրայ, հպարտութեամբ նայում է, թէ նաւն ինչպէս է  
լողում: Բայց վերջը ճանձրանում է, տեսնելով, որ իւր  
ենթադրածը չգտաւ, թողնում հեռանում է:

Վագրի յարձակումն այնպէս արագ և վայրկենաբար  
է կատարում, որ զոհը ժամանակ չի ունենում վախստի  
մասին մտածելու: Նա գազանին միայն այն ժամանակ է  
տեսնում, երբ արդէն նրա զօրեղ ճիրանների մէջ է զգում  
իրան: Սոսկալի հեռքեր են թողնում վագրի ճիրաններն  
ու առամները: Այնպէս ուժեղ և թափով է հասցնում  
հարուածը, որ ճանկերի հետ խրում են զոհի մտի մէջ  
նաև գազանի ջրոտ թաթերը, մասները: Յաճախ նրա  
հասցրած վէրքերը 5 գծաչափ խորութիւն են ունենում:  
Խիստ հազիւ է պատահում, որ վագրի հասցրած վէրքը

մահ չպատճառէ: Նոյնպէս և շատ քիչ է պատահում, որ  
կենդանին կամ մարդը կարողանայ ազատուել վագրի  
հետամտութիւնից: Հազուադիւրս դէպքերից է հետեւեալ  
իրողութիւնը: Մի վագր ճարպիկ թուչքով նետում է  
փղի մէջքին, բռնում է այնտեղ նստած անգլիացուն,  
թամբից վայր է ձգում նրան ու առնում, տանում: Ան-  
գլիացու ընկերներն ուղղում են իրանց հրացանների փո-  
ղերը դէպի գազանի կողմը, բայց չեն համարձակում  
կրակել, վախենալով մի գուցէ գազանի փոխարէն իրանց  
ընկերով դիպչի: Անգլիացին ուշաթափուել էր ճանապար-  
հին սարսափելի ցաւի ու վախի պատճառով և միայն այն  
ժամանակ է ուշքի գալիս, երբ փշերն արիւնլուայ են ա-  
նում նրա երեսը: Նա հասկանում է իւր վտանգաւոր  
դրութիւնը և այնքան արի է դանում, որ գոտկից հա-  
նում է առբճանակը ու արձակում վագրի վրայ: Գնդակը  
նպատակին չի առնում և վագրը աւելի ուժեղ կերպով  
մտցնում է իւր առամները մարդու մտի մէջ: Քաջարի  
անգլիացին դեռ չի յուսահատում, հանում է իւր երկ-  
րորդ առբճանակը, բռնում է ուղղակի գազանի կրծքին  
ու կրակում: Բարեբախտաբար գնդակն այս անգամ գա-  
զանի սրտին է դիպում և վագրը վայրկենապէս գլոր-  
ւում է ցած: Գնդակների կրակոցի ձայնը լսելով, ընկեր-  
ները մօտ են վազում և գտնում են անգլիացուն կէս  
անդգայ դրութեան մէջ, նա պառկել էր սպանուած վագրի  
վրայ: Շնորհիւ մեծ հոգատարութեան, նա առողջանում է  
և միայն նրա կաղ ոտքը մնում է յիշատակ այդ վտան-  
գաւոր ու փառաւոր դիպուածից:

Վագրն իւր զոհի արիւնն երբ խմում յագենում է,  
իւր արիւնաքամ զոհին տանում է մի թաւուտքի մէջ,  
պահպանում է նրան մինչև երեկոյ և գիշերն ուտում է  
այնքան, ինչքան կարող է: Եւ ուտում է շատ ազահ կեր-  
պով, նա ազահ է քան գայլը, շատ անգամ նա ուշա-  
դրութիւն էլ չի դարձնում սսկոյնների, կաշուի վրայ, բո-  
ւորը միասին անխտիր ուտում է: Ուտելուց յետոյ վագրը  
գնում է մօտակայ գետը կամ ջրաւաղանը ջուր խմելու:

Լաւ ուտելուց և խմելուց յետոյ վագրը թւորում է և երբեմն այդ գրութեան մէջ մնում է մի ամբողջ օր, շատ անգամ նոյն իսկ երկու օր: Եւ վեր է կենում միայն նրա համար, որ դարձեալ խեղդի, սպանի մի կենդանի և ուտի: Նրա արքայական սեղանի մնացորդներից օգտւում են ամեն տեսակ կենդանիներ, վայրի շներ, չաղալներ, աղուէսներ, որոնք դիշերները անտառի մէջ խմբերով քաշ են գալիս վագրի յետևից և երբ անտառի արքան ճաշում ու քնում է, կատաղաբար թափւում են նրա թողած կտորտանքի վրայ: Այդտեղ բարձրանում է մի խայտառակ կռիւ. այդ ձրիակեր չորքօտանիները մեծ կտորն ստանալու համար իրար բզկտում են, կռտոց են տալիս, և իրանց ահագին աղաղակներով շրջապատին իմաց են տալիս, որ մօտակայքում քնած է գաղանների գաղանը — արիւնըուչտ վագրը:

Այդ բոլոր ասածներից յետոյ պարզ պէտք է լինի, թէ ինչքան վտանգաւոր ու վնասակար կենդանի է վագրը մարդու համար: Եւ մարդը շատ հին ժամանակներից ամեն կերպ աշխատել է որսալ, ոչնչացնել այդ արիւնարբու գաղանին: Շատ տեղերի բնակիչներ վագրից այնքան են վախեցել, որ նրան պաշտել են: Հնդկաստանի մտօտիապաշտ ժողովուրդը ամեն բան, որից վախենում է, աստուած է շինում ու պաշտում: Օրինակ, հնդիկների համար աստուած է թէ բօա օձը, թէ կօկորդիլոսը, թէ վագրը, թէ գետաձին: Հնդկաստանի բնիկները սովորութիւն ունին գունաւոր բարձր ցից անկել այն տեղերում, որտեղ վագրն սպանել է մի մարդու. և այդ ցցի մօտերը շինում են մի խրճիթ, որտեղ ճանապարհորդները հաւաքւում են աղօթելու: Իսկ եթէ պատահի, որ նոյն տեղում մի ուրիշը վագրին զոհ է դառել, հնդիկների կողմից այդ զոհը համարւում է մեղաւոր, իսկ նրա մահը՝ աստուածային պատիժ: Սրանից մի քանի ժամանակ առաջ աւելի վատ էր: Երբ երկու մարդու մէջ վէճ էր լինում, միւս մարդիկ գալիս հաւաքւում էին և այդ վիճողներին ձգում էին վագրի առաջ. վագրը ում որ առաջ պատա-

ռտուում էր, նա էր համարւում մեղաւոր: Բայց հիմա այդպիսի սխալ ու սուտ հաւատալիքները քանի զնում վերջանում են: Այժմ եւրոպացի քաջ որսորդի անվրէպ գնդակը արմատից խախտել է այդ հաւատալիքների հիմքը:

Հնդկաստանում վագրեր չափազանց շատ կան. դրա համար անգլիական կառավարութիւնը ահագին փող էր խոստանում այն մարդուն, ով որ մի վագրի գլուխ էր բերում: 60 տարուայ ընթացքում կառավարութեան գանձարանից 300,000 մանէթ է դուրս եկել: Հնդկաստանի տեղացի բնիկ իշխանները շատ էին սիրում ահագին բազմութեամբ որսի դուրս գալ: Նոյն իսկ այժմս էլ Չինաստանի կայսրը այդ եղանակով սիրում է որսի զնալ: Նա մի անգամ 5,000 մարդկանցով դուրս է գալիս վագր, առիւծ, արջ որսալու, սակայն մեծ անյաջողութեան է հանդիպում, որովհետեւ վագրերը 80 մարդու պատառտում են: Մի անգամ էլ նա ահագին բազմութեամբ դարձեալ որսի է դուրս գալիս և մարդկանց հրամայում է անտառն ամեն կողմից շրջապատել և շրջանը հետզհետէ նեղացնել: Այդ որսորդութեան ժամանակ սպանւում է 1000 եղջերու, ահագին քանակութեամբ արջ, կինջ և 60 վագր: 1683 թուին չինացոց կայսրը դուրս է գալիս ուրախ իւր հետ դուրս բերելով 60,000 մարդ և 10,000 փիղ:

Այդպիսով որսորդութիւնները, ինչքան էլ որ շքեղ և փառաւոր լինին, յամենայն դէպս շատ ապարդիւն են և ծառայում են լոկ իշխանական ցանկութիւններին բաւականութիւն տալու համար: Վագր որսալու ամենալաւ ձևն այժմ համարւում է մենակ կամ մի քանի մարդկանց հետ որսի գնալը, որը թէև խիստ վտանգաւոր է թւում, բայց իրօք ամենից ապահովն է: Հնդկաստանում կան շատ որսորդներ, որոնք պարապում են յատկապէս վագր որսալով, դրա համար էլ կոչւում են վագրի որսորդներ: Դրանց մեծ մասը անգլիացիներ են, որոնք շատ անգամ այնպիսի արիութիւն և քաջութիւն են ցոյց տալիս, որ իսկապէս արժանի են խոր հիացմունքի: Նրանք մենակ

դուրս են դալիս արիւնարբու գազանի առաջ և իրանց կեանքը ակներև վտանգի ենթարկելով, կուռում են նրա հետ:

Այդպիսի որսորդութիւններից մէկի ժամանակ անգլիացի էլիոտ անունով մի որսորդ մեծ վտանգի է ենթարկուում: Նա և իւր ընկեր՝ նշանաւոր որսորդ Ռիսէն քառասուն մարդկանց հետ դուրս են դալիս որսի: Նրանց մարդկանց պարտականութիւնն այն էր, որ պիտի որոնէին գտնէին վագրին և դուրս բերէին որջից, որից յետոյ որսորդների բանն էր նրան խփելը: Որսորդներն երկար սպասելուց յետոյ տեսան, որ չի երևում գազանը, մի ծառ բարձրացան այնտեղ սպասելու: Յանկարծ մի փոքր ժամանակից յետոյ մարդիկը մի ահագին վագր տեսան և վախենալով, թէ մի գուցէ վագրն իրանց վրայ յարձակուի, բարձր բղբեցին: Վագրը լսելով այդ աղաղակը, ուղղութիւնը փոխում է և անդլիացին հաղիւ է կարողանում մի գնդակ զրկել նրա յետևից: Վագրի բարձր սունոցը նշան էր, որ նա վիրաւորուած է, սակայն նա արդէն այնքան հեռացել էր, որ խիստ դժուար կը լինէր երկրորդ գնդակն ուղարկել: Որսորդները տաքացած ու բորբոքուած հալածում են վագրին և առաջնորդուելով նրա արեան հետքով, շուտով մի այնպիսի տեղ են դալիս, որտեղ վագրի բոլոր նշանները չքանում են: Նրանցից մի քանիսը բարձր ծառերի վրայ են ելնում դիտելու, բայց ոչինչ չեն տեսնում: Երկու անգլիացիները գլուխները կախ ձգած իրանց ուղեկիցներից 20 քայլի շափ հեռանում են նայելու համար, թէ արդեօք գետնի վրայ արեան հետքեր չկան: Յանկարծ լսում է մուկիւն մռնչոց և խոտերի մէջ թագնուած տեղից դուրս է նետուում վագրը ուղղակի Ռիսէյի դէմ: Սա հաղիւ է կարողանում իւր երկփող հրացանից երկու գնդակ զրկել հրէջի գլխին երկու երեք քայլի վրայ: Բայց ծուխն էր պատճառը թէ մի ուրիշ բան, գնդակը չի դիպչում և վագրը սոսկալի կատաղութեամբ յարձակում է Ռիսէյի ընկերոջ էլիոտի վրայ: Եւ այդ բանը կայծակի արագութեամբ է կատար-

ւում, այնպէս որ էլիոտը ժամանակ չի ունենում արձակելու: Եւ երբ Ռիսէն վազում է վագրի յետևից, էլիոտն արդէն գազանի ճանկերումն է լինում: Հէնց նոյն վայրկենին քառասուն մարդկանց գլխաւորը իւր հրացանն ուղղում է վագրի կողմը և զարմանալի սառնասրտութեամբ արձակում է մի քանի անգամ, սակայն իզուր: Վագրը բռնել էր էլիոտի բազուկից և քաշ էր տալիս նրան իւր որջը: Հարկաւոր էր շատ շուտով գնդակահարել գազանի գանգը և ցրուել նրա ուղեղը ու այդպիսով վայրկենաբար մահացնել նրան, որովհետև ուրիշ որտեղ էլ որ դիպչելու լինէր գնդակը, պիտի իզուր տեղն աւելացնէր վագրի կատաղութիւնը: Ուստի և Ռիսէն գնում է գազանի մօտից, սպասելով յարմար բոպէին: Մի քանի անգամ նշան բռնելուց յետոյ վերջապէս վճռեց, որ հասել է բոպէն, արձակեց, գնդակը դիպաւ գանգին և ամենի գազանը վայր գլորուեց: Երկրորդ կրակոցով վագրն սպանուեց բոլորովին և Ռիսէն այժմ ուրախութեամբ կարող էր ազատել իւր ընկերոջ: Բարեբախտաբար էլիոտը մահացու վէրք չէր ստացել, որովհետև այն բոպէին, երբ վագրը իւր թաթը վերցրել էր խփելու էլիոտին, վերջինս հրացանն էր դէմ արել: Թաթի ուժն այնքան սաստիկ էր, որ հրացանի կոթը փոս էր ընկել ու երկաթէ մատը տափակել էր:

Բացի այդ ձևից, վագր որսալու համար կան և ուրիշ մի քանի ձևեր: Այնտեղ, որտեղից վագրը պիտի անցնի, հաւաքում են ահագին քանակութեամբ տերևներ, որոնց վրայ լցնում են սոսինձ կամ ուրիշ կաշուն խէժ: Երևում է վագրը, գալիս, տերևների վրայով ուղում է անցնել և շուտով զգում է, որ ստքերը ծանրանում են, տերևները կաշում են ստքերին, նա շարանում է, աշխատում է պոկել այդ տերևները, ուժգին թափ է տալիս իրան և քանի շարժումներ է անում, այնքան աւելի շատ տերևներ են կաշում նրա մարմինն, վերջն այնպէս կատաղում է, որ թաւալում է գետնի վրայ և իհարկէ ամբողջապէս ծածկում է տերևներով—տերևակոլով է լի-

նում: Ծածկում են աչքերը, ականջները, և նա չի կարողանում ազատ շարժումներ անել այնուհետև: Երբ վագրն այդպիսի վիճակի մէջ է ընկնում, որսորդի համար այլ ևս սարսափելի չէ. գալիս, հանգիստ կերպով խփում, սպանում է գազանին:

Վագր որսալու համար մի ուրիշ ձև էլ կայ: Շինում են շատ ամուր բամբուկից մի վանդակ և դնում վագրի ճանապարհի վրայ: Երբ գիշերը վրայ է հասնում, երևան է գալիս և վագրը, նկատելով վանդակն ու մարդուն, անմիջապէս ուղղում է այդ կողմը: Մարդն էլ իւր ազմուկ, ազազակով աւելի շատ է նպաստում այդ բանին: Վագրը գործին մօտից ծանօթանալու համար մօտենում է վանդակին և տեսնելով վանդակի յետևում մարդուն, աշխատում է վանդակը ջարդել ու յարձակուել մարդու վրայ: Բայց այդ բանն անելու համար նա պիտի իր լանջն ուղղի մարդուն, իսկ մարդն այդ րոպէին իր ձեռքի նիզակն ամենայն ուժգնութեամբ մխում է գազանի սիրտը: Եւ որովհետև նիզակը առհասարակ թունաւորած է լինում, ուստի և վագրը շատ շուտով մեռնում է:

Վագրի հետ գործ ունենալիս պէտք է աշխատել յարմար հագուստ հագնել: Բազմաթիւ փորձերը ցոյց են տուել, որ ամենից յարմար շորն համարում է թափուած տերևների դոյն ունեցողը, որովհետև վագրը շատ դժուարութեամբ կարողանում է ջուրէլ մարդուն շրջապատող բնութեան մէջ, եթէ մարդու հագուստը աչքի չի ընկնում տարբեր գոյնով:

Վագրը, չնայած որ այդպէս սոսկալի գազան է, շատ շուտով մեռնում է ամենաթեթև վէրքից անգամ: Դրա պատճառն այն է, որ տաք երկրներում նրա վէրքի վրայ բոյն են դնում զանազան վնասակար միջատներ, որոնք ձու են ածում այնտեղ և արիւնը մակարդում են: Մարմնի վրայ գոյանում են բշտիկներ և կենդանին իսկոյն մեռնում է:

Էգ վագրը բերում է 2—3 ձագ: Առաջին շաբաթներում մայրը չի հեռանում ձագերի մօտից, որոնց միայն այն ժամանակ է թողնում, երբ հարկադրուած է լինում

իւր ձագերի համար կերակուր գտնել: Էգը իւր ամբողջ գազանային ուժով պաշտպանում է ձագերի կեանքը:

Գազանների մէջ ամենից սոսկալի այդ գազանին էլ մարդիկ կարողացել են ընտելացնել, և այժմ կենդանաբանական բոլոր այգիներում կարելի է վարժեցրած վագրեր տեսնել: Բայց սրանք երբէք այնպէս հաւատարիմ ու վստահելի չեն լինում, ինչպէս առիւծները: Վագրը, իբրև արիւնարբու գազան, երբէք չի մոռանում իւր գազանութիւնը և տեղն եկած դէպքում օգուում է: Դրա համար էլ չպէտք է երբէք վստահել ու խաբուել: Փոքր հասակից ընտելացած, մեծացած մի վագր դուրս է թռչում վանդակից, փախչում է, ճանապարհին սպանում է այն ձիուն, որի հետ մինչև այդ նա մօտ բարեկամ էր: Անհրաժեշտ համարուեց վերջը նրան սպանել: Առհասարակ վագրի պահապաններից շատերն են սպանուել, խնդաթիւրուել և զոհ գնացել նրա գազանային բնազդներին:

Վագրի տուած օգուտը (մորթին, ճիրանները, ատամները) ոչինչ է, համեմատած այն ահագին վնասի հետ, որ նա հասցնում է մարդուն:



Շ Ն Ե Ր Ի Յ Ե Ղ

Գիշատիչներն մէջ շնացեղ կենդանիները իրանց համակրելի կողմերով, մարդու հետ ունեցած բարեկամական կապերով, իսկ ամենից շատ իրանց խիստ զարգացած մըտաւոր ընդունակութիւններով շատ նշանաւոր տեղ են բռնում: Թէև նրանց ամենախոշոր տեսակները մեծութեան և ուժի կողմից տեղի են տալիս կատուներին, բայց իրանց խելքով, զարգացած զգայարանքներով բարձր են նրանցից:

Շներն մարմինը նիհար, բարակ է, գլուխը փոքր, դունչը սուր, քիթը բութ և դուրս ցցուած, վիզը բարակ, ստքերը երկար ու բարակ, փոքրիկ մատներով, որոնք վերջանում են ուժեղ, երբէք դուրս ու ներս շահող ճանկերով: Աչքերը մեծ են, ականջները սուր և մեծ: Ատամները հարուստ է. ունին 36—48 ատամ. 12 կտրիչ բաւականին մեծ, 4 ժանիք. ապա կեղծ և իսկական սեղանատամներ: Շները կերակրում են ոչ միայն մսեղէնով, այլ և բուսեղէնով. և հէնց այդ հանգամանքը լաւ ապացոյց է, որ նրանք պակաս գիշատիչ ու սարսափելի են, քան կատուները: Արագաշարժութեան կողմից շները շատ էլ պակաս չեն կատուներից. ճիշտ է, նրանք մեծամեծ թռիչքներ չեն կարող անել, բայց նրանց բոլոր տեսակներն համարեա հիանալի լողում են: Շատ լաւ զարգացած են նաև նրանց արտաքին զգայարանքները, որոնցից մասնաւորապէս հոտոտելիքը զարմանալի նուրբ և սուր է. տեսողութիւնն աւելի լաւ է կատուների տեսողութիւնից: Աւելի զարմանալի է շան խելքը, հասկանալու, բմբռնելու ընդունակութիւնը: Նրանք շատ բարեհոգի, մեծահոգի կենդանիներ են: Այդ յատկութիւնների շնորհիւն է, որ շունը անյիշելի ժամանակներից սկսած կապուած է մար-

դու հետ ամենասերտ կապերով. շան ընդունակութիւնը, խելքն ու բարեհոգութիւնն է պատճառը, որ մարդ այլ ևս համարեա անկարող է առանց շան ապրել:

Շները կատուներից աւելի բազմացող են. նրանց մէջ սովորական է 5—10 ձագ բերելը. պատահել է նոյն իսկ մինչև 18, մինչև անգամ 23 ձագ: Մայրերը նոյնպիսի անձնազոհութեամբ պատրաստ են իրանց ձագերի համար մեռնել, ինչպէս և կատուն: Շները ամենատարածուած կենդանիներից են. նրանց շատ տեսակները վարում են թափառական կեանք և թափառելու գլխաւոր պատճառը կերակրի պակասութիւնն է: Նրանց վայրի տեսակները մեծամեծ վնասներ կարող են հասցնել մարդկանց, մինչդեռ փոքր և ընտանի տեսակները ստով գլխով բարիք և անհրաժեշտութիւն են մարդկանց համար: Շնացեղ կենդանիների մէջ մտնում են նախ ընտանի շունը իւր բոլոր տեսակներով, վայրի շունը, գայլը, աղուէսը և այլն:

Գ Ա Յ Լ

Գայլը շան նախնական, վայրի տեսակն է. նա շատ քիչ է տարբերում միւս շներից իւր կազմուածքով: Նրա մարմնի մազերը ցուրտ երկրներում թաւ են և երկար, իսկ տաք աշխարհներում՝ նոսր և կարճ: Պոչը միշտ ծածկուած է երկար ու թաւ մազերով: Գայլերը խիստ տարածուած են աշխարհի համարեա բոլոր մասերում: Եւրոպայում ամենից շատ կան այժմ Ռուսաստանի միջին և հարաւային մասերում: Բոլորովին ջնջուել, վերջացել են Շվեյցարիայի շատ մասերից, Գերմանիայի միջին և հիւսիսային մասերից, Մեծ Բրիտանիայից, Բելճիայից, Հոլլանդիայից և Դանեմարքից:

Գայլերն ապրում են գլխաւորապէս լեռնոտ մասերում և փշատերև ծառերի սահմանում: Նրանց տարեկան կեանքը երկու մասի կարելի է բաժանել՝ թափառական կամ ձմերային և նստակեաց կամ ամառային: Առա-

Չինք բռնում է աշխատ մեծ մասը, ամբողջ ձմեռը, և յա-  
 ճախ դարնան մի մասը: Գայլերն ապրում և թափառում  
 են խմբերով և իւրաքանչիւր խումբ ունի իւր առաջնորդը,  
 իւր վերջապահը: Խմբի ապահովութիւնը կամ անապա-  
 հովութիւնը ընկած է առաջնորդի վրայ: Գրա համար  
 գայլերի գնացքի մէջ նկատելի է մեծ զգուշութիւն: Նը-  
 րանց մէջ, ինչպէս և կապիկների մէջ, մեծ անհաւատա-  
 թութիւն կայ. ուժեղը վերցնում է միշտ աւարի մեծ մասը.  
 մնացածն այնուհետև երկար կռիւների առարկայ է լի-  
 նում երիտասարդ գայլերի մէջ: Նրանք իրար կրծոտում  
 են, ատամներն են կրծտացնում, մազերը բիզ բիզ կանգ-  
 նում են, ունում են և շատ անգամ իրար միտ են ու-  
 տում: Ոչ մի կենդանի այնքան շարժողութեան մէջ չի  
 գտնուում, ինչքան գայլը: Ինչ ապր շարժողութիւնն է  
 պատճառը, որ նրանք այդքան յոգնում են և քաղցա-  
 ծանում և այդքան թանգ գնով գնած կերակուրը մեծ  
 ախորժակով ուտում. դրա համար է մարդկանց մէջ «գայլի  
 ախորժակ» դարձուածքը առած դարձել: Քաղցած գայլն  
 ուղղակի յարձակում է իւր զոհի վրայ, բռնում է նրա  
 բկից և անյաշողութեան դէպքում հալածում է նրան:  
 Գայլը մեծ թշնամի է եղջիւրաւոր անասուններին, դրա  
 համար և նրա հասցրած վնասն ահագին է, մանաւանդ  
 Ռուսաստանում, որտեղ ամեն տարի տասնեակ միլիոն-  
 ների է հասնում: Քաղցած գայլը խիստ յանդուգն է լի-  
 նում և շատ անգամ յարձակում է մեծամեծ կաթնա-  
 սունների վրայ. ձիերը նրանցից սարսափում են և փախ-  
 շում. ոչխարները գայլին տեսնելիս իրանց մահն են տես-  
 նում: Քայց կողշտ ժամանակ, նա չափազանց վախկոտ է  
 դառնում. նա այդ դէպքում փախչում է ոչ միայն մարդ-  
 կանց և շների առաջից, վախենում է ոչ միայն կովից ու  
 այծից, այլ նահանջում է նոյն իսկ ոչխարին տեսնելիս:  
 Ռեբեն գայլին քաջ ու յանդուգն դարձնողը նրա կերա-  
 կրի խնդիրն է: Նա ազուէսի պէս խորամանկ է, զգոյշ,  
 նենգ ու կեղծաւոր: Այդ յատկութիւններն ու նրա վնա-  
 սակարութիւնն ի նկատի ունենալով, մարդիկ վազուց

էտանգուն կերպով սկսել են ոչնչացնել գայլերին երկու  
 զանազան կողմերում, և այդ կողմից վառողն ու արծիճը  
 շատ բան են արել: Գայլի տուած միակ ջնջին օգուտը  
 նրա մորթն է:

Ա Ղ Ո Ի Է Ս

Ազուէսը սովորական շներից և գայլերից տարբեր-  
 ւում է հետեւեալ կողմերով. նրա մարմինն երկարաւուն է,  
 գլուխն երկար է ու դունչը՝ սուր. բիբերը կլօք և մի  
 փաթը ծուռ. ոտներն աւելի կարճ են, պոչը շատ երկար  
 և փափուկ մազով ծածկուած. նրա մորթու գոյնը շատ  
 փոփոխական է և նուրբ երանգներով զարդարուած:

Ազուէսները տարածուած են մեր կիսագնդի հիւսի-  
 սային մասերում: Ամբողջ Եւրոպան, հիւսիսային Աֆրի-  
 կան և Ասիայի մեծ մասը մինչև Հիմալայեան լեռները և  
 Չինաստանը ազուէսի հայրենիք կարելի է համարել: Իսկ  
 նրա հիւսիսային սահմանը հասնում է մինչև համարեա  
 արևդրանքը: Ազուէսը հիւսիսի կերպով յարմարում,  
 ապրում է նաև այնպիսի տեղերում, որտեղ միւս գիշա-  
 տիչները չեն կարողանայ ապրել: Որ շրջանում որ գայլեր  
 շատ կան, ազուէսը խոյս է տալիս այդպիսի տեղերից:  
 Մեծ զգուշութեամբ է ընտրում ազուէսն իւր բնի տեղը:  
 Նրա բունը մի ծակ չէ, այլ մի քանի ծուռ ու մուռ անց-  
 քերի ցանց է, որի մուտքը միշտ ներքեից վերև է լինում.  
 Խորութիւնը մօտ մի արշին է լինում, իսկ երկարութիւնը  
 մօտ 1 1/2—2 սաժէն: Բնի համար յարմար է համարում  
 նա բլուրների զառիվայրերը, քարքարոտ տեղերը, մեծ  
 ծառերի կոճղերի տակը և այլն: Աշնանն ու ձմրանը ա-  
 զուէսը մեծ մասով բնի մէջ է անցկացնում, իսկ միւս  
 ժամանակը՝ դուրսը:

Թէև ցերեկն էլ յաջող կերպով կարողանում է իւր  
 գործը տեսնել, բայց աւելի յարմար է համարում գիշե-  
 րով դուրս գալ որսի: Չափազանց զգուշութեամբ նա սո-

դասկում է թփերի և խոտերի միջով աննկատելի կերպով  
 դէպի իւր զօհը, ճանապարհին միշտ յետ է նայում և  
 վտանգի դէպքում սաստիկ արագութեամբ փախչում է։  
 Նրա վազքը խիստ արագ է, առանց յոգներու, ճարպիկ  
 և չափազանց մտածուած։ Նա շատ լաւ գիտէ, թէ որ-  
 տեղից անցնի, որ վտանգից խոյս տայ։ Վազելու ժամա-  
 նակ նա ընդունակ է մեծամեծ թռչուններ անել։ Լաւ լո-  
 ղում է։ Աղուէսները խմբերով չեն ապրում։ Շատ քիչ են  
 պատահում մի բնի մէջ մի քանի աղուէսներ։ Բերում են  
 4—7 ձագ, որոնց աչքերը 14 օրից յետոյ բացուում են։

Աղուէսների խորամանկութիւնը, նենգութիւնն ու  
 մտածուած քաջութիւնը մարդկանց մէջ բազմաթիւ պատ-  
 մութիւնների նիւթ են տուել։ «Խորամանկ աղուէս» դար-  
 ձուածքն արդէն սովորական խօսք է։ Նրանց ձագերը  
 հեշտութեամբ ընտելանում են և իրանց աշխոյժ, չարա-  
 ճճի բնաւորութեամբ մեծ զուարճութիւն են պատճառում  
 տէրերին։

Աղուէսներն ուտում են փոքրիկ վայրի այծերից ըս-  
 կած մինչև նոյն իսկ միջատները, նրանց սիրած կերա-  
 կուրն է նապաստակն ու ճագարը։ Թռչուններն ու նրանց  
 ձագերը, ձուերը, ընտանի թռչուններից ամենից շատ հա-  
 ւերը նրանց համար համեղ բաժիններ են։ Այգիներն ու  
 բանջարանոցները ազատ չեն աղուէսների գիշերային յար-  
 ձակումներից. աղուէսները շատ անգամ թափառում են  
 նաև գետերի ափերին—ձուկ և խեցգետին որսալու հա-  
 մար։ Ասածներից պարզ է, թէ աղուէսն ինչքան վնասա-  
 կար կենդանի է. մարդիկ ամեն կերպ աշխատում են  
 ոչնչացնել։ Մեծ գին ունի աղուէսի մորթը, որից Ռուս  
 սաստանում տարեկան ծախում է մօտ 300,000 մա-  
 նէթի։

Ը Ն Տ Ա Ն Ի Շ Ո Ի Ն

Ընտանի շները հաւատար չափով թէ գիշերային և  
 թէ ցերեկուայ կենդանիներ են. նրանք գիշերը կարող են  
 նոյնքան արթուն և աշխոյժ լինել, ինչպէս և ցերեկը։  
 Մարդու հետ անյիշելի ժամանակներից կապուած լինե-  
 լով, շունը սովորել է ուտել այն ամենը, ինչ որ մարդն է  
 ուտում։ Բայց միտք, այն էլ մի փոքր հստած միտք, երե-  
 ւում է, որ ամեն բանից բարձր է գերադասում։ Շան  
 կերակուրը մեծ մասամբ կախուած է տեղի բերքից. ծո-  
 վափնեայ տեղերում՝ յատկապէս կամչատկայում՝ և Նոր-  
 վեգիայի մեծ մասում շները ձուկ են ուտում։ Խաղողա-  
 շատ տեղերում շներն ուտում են նաև խաղող. Շների  
 շատ տեսակների շքար ուտելը սովորական բան է։ Երբ  
 շունն ուտում, կշտանում է, կերակրի մնացած մասը վեր-  
 ցնում, թաղում է մի տեղ, որպէս զի յետոյ դարձեալ  
 հանի։ Շները բաւականին ախորժակով քնում են և քնել  
 շատ են սիրում. բայց նրանց քունը խիստ դիւրզգաց է  
 և ընդհատ. քնած ժամանակ նրանք հէնց որ փոքրիկ մի  
 շշուկ լսեն, իսկոյն վեր կը թռչեն։ Սիրում են, որ իրանց  
 բները մաքուր լինին։

Շունը կարող է հիանալի կերպով վազել և լողալ և  
 մասամբ էլ մազլցել։ Վազելիս նա կարող է ահագին ու-  
 տիւններ անել, բայց յանկարծակի չի կարող ուղղութիւնը  
 փոխել։ Նրա արտաքին զգայարանքները խիստ զարգա-  
 ցած են—բայց տարբեր տեսակների մէջ տարբեր չափով։  
 Շներ կան, որոնց զգայարանքներից ամենից շատ զար-  
 գացած է հոտատելիքը, ուրիշների մէջ լսելիքը կամ տե-  
 սանելիքը։ Նրանց զգայութիւններն այնքան նուրբ են և  
 զարգացած, որ չեն կարող դիմանալ ծանր և ուժգին  
 զգայութիւնների. օրինակի համար օդը կոլոնի, էֆիրի կամ  
 սպիրտի սաստիկ հոտը եթէ մտեցնենք շան քթին, նա  
 զայրացած կը փախչի. կամ երաժշտութեան ուժեղ ձայ-  
 ներ լսելիս շունը կը թողնի, խոյս կըտայ։

Բայց այն, ինչ որ շանը մարդուն այնքան մտեցրել, նրա մշտական բարեկամ է գարձրել—դա նրա մտաւոր կարողութիւնն է: Շունը միակ կենդանին է, որ միշտ մարդու հետ է. ուղեկցում է նրան աշխարհի բոլոր մասերում. նրա հետ է ծովի ալիքների մէջ, հիւսիսային սառուցեալ ձիւների շրջանում, հարաւային այրեցեալ շագերի մէջ: Շան և մարդու բարեկամութիւնն այնքան հին է, որքան հին են շունն ու մարդը: Մարդու և շան այդպիսի անկեղծ բարեկամութեան պատճառը շան մտաւոր յատկութիւններն են: Շատերն են ասել, որ շանը մի բան է միայն պակասում. շունը միայն խօսել չգիտէ, նա միայն լեզու-բերան չունի: Մնացած բոլոր լու յատկութիւններն ունի նա: Ոչ մի կենդանի այնքան հասկացող, դատող չէ, ինչքան շունը: Նրա մէջ ամենից աչքի է ընկնում տիրասիրութիւնը: Նա իւր տիրոջն հաւատարիմ է մինչև իւր կեանքի վերջը. ամենանեղ ժամին, երբ արդէն զգում է իւր մահը, նա դարձեալ չի թողնի տիրոջն ու չի հեռանայ. դարձեալ պահպան հրեշտակի պէս նրա շուրջը կը պտտի, նրա ստացուածքը կը պահպանի, նրա թշնամիների հետ կը կռուի: Վերին աստիճանի քնքոյշ է վերաբերում նա իւր տիրոջն ու նրա երեխաներին: Նա թոյլ է տալիս սրանց չարածճիւթիւններ անել և մեծահոգութեամբ ներում է փոքրների արարքները: Բայց կատաղի և անցուսպ գազան է դառնում, երբ իւր տիրոջը վտանգ է սպառնում: Մինչդեռ իւր տէրը օրուայ ծանր աշխատանքներից յոգնած պառկել է գիշերը քնելու, շունը աշարուրջ կերպով հսկում է նրա տանն ու դռանը: Տիրոջ բացակայութեան ժամանակ նա աւելի նախանձախնդիր է դառնում, աւելի եռանդով է կատարում իրան յանձնարարած գործը: Դժուար է թուել շան խելքի, հասկացողութեան ապացոյցները. նա կարողանում է պարել, թըմբկահարել, լարախաղացութիւններ է անում, ամբողջների պաշարման ժամանակ օգնում է զինւորներին և պաշտպանուողների հետ ինքն ևս քաջաբար դիմադրում է պաշարողներին: Ատրճանակ է արձակում, շամփուրներով խո-

րոված է սքառաստում, սահնակներ է քաշում, ճայնանիշներ է ջոկում, թուեր և գրեր է կարգում, մարդու գլխից գլխարկ է վերցնում, հանում է նրա կոշիկները: Նա պատրաստ է տիրոջ ամեն մի հայեացքն ըմբռնել և խսկոյն կատարել: Եւ այդ ամենը նա մարդուց է սովորել. ճիշտ է, շունը բնականից խելք և ընդունակութիւն ունի, բայց մարդը շատ բան է սովորեցնում նրան: Մարդիկ մեծ խնամքով պարապում են շան հետ, կրթում են նրան, բաներ են սովորեցնում: Բացի դրանից շները առանց այն էլ ազդում են իրանց տէրերից: Եթէ տէրը փափկաօէր մի տիկին է, որը իւր օրը անց է կացնում շարունակ պարապ-սարապ, սենեակների ու բազմոցների մէջ թաղուած, նրա շունն էլ այդպիսի բնավորութիւն է ստանում. նա կը լինի ծոյլ, թուլամորթ, քմահաճ: Եթէ շան տէրը մի դիւղացի է, բերտ ու կսպիտ բարբերով, անտաշ ձևերով, բայց աշխատասէր, ազնիւ ու շիտակ բնավորութեան տէր, նրա շունն էլ կազդուի տիրոջից և կը լինի հաւատարիմ իւր տիրոջը մինչև մահ, աշխոյժ, աշխատասէր և ազնիւ: Չար, կռուարար մարդու շունն էլ իւր տիրոջ հետ ունեցած յարատե շփումից կազդուի: Շանը կրթել, դանազան արուեստներ սովորեցնելը մեծ վարպետութիւն է պահանջում, այնպէս որ ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ միայն լու մարդը կարող է լու շուն ունենալ: Զանազան մարդկանց ազդեցութեան և շների բազմատեսակութեան պատճառով բոլոր շները միատեսակ խելքի, ընդունակութեան տէր չեն:

Մի քանի սովորութիւններ յատուկ են անխտիր կերպով բոլոր շներին. նրանք բոլորն էլ լուսնի վրայ հաչում են, որի պատճառը մինչև օրս յայտնի չէ: Բոլոր շներն անհանդուստանում կամ հաչում են այն ժամանակ, երբ նկատում են արագ անցկենող օր և է մի առարկայ կամ մի կառք կամ մի մարդ և այլն: Այդպիսի գէպքում նյւրանք խսկոյն վազում են առարկայի յետևից, հաչում և աղմկում են: Նրանք երբէք չեն սիրում ցնցոտիներ, հագած, պատառուտուն շորերով մարդկանց: Յայտնի է, թէ

նրանք ինչպիսի եռանդով հաչում են աղքատներին, մու-  
րացկանների վրայ և հալածում են նրանց իրանց տիրոջ  
դռնից: Բոլոր շներն էլ թշնամի են կատուին և ոգնուն,  
չունեն ու կատուն իրար տեսնելիս բարկանում, զայրանում  
են ու մոմռոցով իրարից հեռանում: Մի յատուկ թիւն ևս  
խիտ աչքի ընկնող է. բոլոր շները զգում են եղանակի  
մէջ կատարուող և կատարուելիք փոփոխութիւնները. այդ-  
պէս օրինակ, նրանք գիտեն, թէ երբ է անձրև գալու,  
երբ է փոթորիկ լինելու, երբ է ցրտելու և ըստ այնմ  
իրանց պատրաստութիւններն են տեսնում:

Շները բերում են 3—10 ձագ. և շատ սիրում են  
իրանց ձագերին. բազմաթիւ պատմութիւններից միայն  
մէկը առաջ բերենք, որի մէջ երևում է շան սէրը դէպի  
իւր գաւակները: Մի վաճառական քաղաք է գնում առե-  
տուր անելու, նրա հետ գնում է նաև նրա շունը. քա-  
ղաքը դիւղից 20 վերստ հեռու էր: Քաղաքում շունը 7  
ձագ է բերում, և վաճառականը մտածելով, որ այլ ևս  
անհնարին է շանը հետը տուն տանել, գործը վերջացնե-  
լուց յետոյ տուն է դառնում շանը թողնելով քաղաքում:  
Բայց օր ու կիսից յետոյ նա մեծ զարմանքով տեսնում է  
իրանց տան դռան առաջ իրանց շանը 7 գաւակների հետ  
միասին: Յետոյ իմացում է, որ շունը այդ կարճ ժամա-  
նակուայ ընթացքում ահագին ճանապարհը 7 անգամ  
գնացել ու եկել է—ամեն անգամին գաւակներից մէկին  
բերանն առած: Այդ օրինակը բացի այն, որ ցոյց է տա-  
լիս շան մայրական սէրը, այլ և սրա մէջ աչքի է ընկնում  
շան տիրասիրութիւնը. նա չի կամեցել օտար քաղաքում  
մնալ, չի էլ կամեցել մենակ գնալ, առանց ձագերի: Այդ  
օրինակը վերջապէս ցոյց է տալիս, թէ մարդիկ երբեմն  
ինչքան եսասէր են լինում ու երախտամու:

Շներն երկար չեն ապրում. 12, 15 տարեկան շունն  
արդէն ձեր է համարւում. բայց եղել են դէպքեր, երբ  
շունը ապրել է մինչև 20—30 տարի. սակայն դրանք բա-  
ցառութիւններ են: Շան ծերութիւնը նրա արտաքինից էլ  
է երևում. ճակատի ու դունչի բուրդը նոսրանում,

թափւում է. մազերը կորցնում են իրանց նախկին փայլը,  
գեղեցկութիւնը, ասամները բթանում են և նոյն իսկ  
թափւում են. շունը ծուլանում է, թոյլ և անտարբեր է  
դառնում. շատերի ձայնը կտրւում է և կուրանում են:  
Շներից շատ քչերն են իրանց բնական մահով մեռնում.  
Նրանց մէջ սաստիկ տարածուած են հիւանդութիւններ,  
մանաւանդ կատաղութիւն կոչուած հիւանդութիւնը, որ  
ահագին քանակութեամբ զոհեր է տանում: Կատաղած  
շունը վնասակար է թէ միւս շների համար և թէ այլ  
կենդանիների ու մարդկանց համար. նրա խայթը մահա-  
ցու է, որովհետև նրա բաց արած վէրքը թունաւոր է:  
Շները իրանց վէրքերն իրանք են լուանում. նրանք այն-  
քան են լիզում, մինչև որ վէրքն սպիանայ: Առողջ շանը  
շատ հեշտ է ճանաչել. նրա քիթը և դունչը միշտ թաց են  
լինում, պոչը վեր ծռած կոչորածև, ականջներն աշխոյժով  
և ինքն ընդհանրապէս եռանդուն:

Շների տուած օգուտն անթիւ է ու անհամար. այժմ  
ոչ մի քաղաքակիրթ ազգ չկայ, որ շներից ահագին օգուտ-  
ներ չըստանայ: Բացի շների մատուցած անհաշիւ ծառա-  
յութիւններից, նրանք օգտակար են մարդուն նաև իրանց  
մարմնով. շատ տեղերում շան միսն ուտում են (Խաղա-  
ղական օվկիանոսի կղզիներում, Չինաստանում, Նիամ-  
Նիամում, Իրենլանդիայում, տունդրաների և էսկիմոս-  
ների աշխարհում): Շան կաշուից ձեռնոցներ և մաշիկ-  
ներ են պատրաստւում. նրա ոսկրից սոսինձ են շինում,  
մազերից բարձ են լցնում:

Շների տեսակները խիտ բազմաթիւ են. իւրա-  
քանչիւր տեսակ ունի իրան յատուկ լաւ կամ վատ կողմը:  
Այդ տեսակներից յայտնի են պուդել, տաքսա, որսկան,  
գամփու, դոգ, շրասոյդ, սուրբ բերնարդեան, բուլդոգ,  
մոպս, բարակ, քերձէ և ուրիշ շներ. մեզ համար աւելի  
հետաքրքիր են սրանցից մի քանիսը:

Սուրբ բերնարդեան շուն. Եւրոպայում մի բարձր և  
ձիւնապատ լեռնաշղթայ կայ, որի գագաթներից մի քա-  
նիսը ծածկուած են յաւիտենական ձիւնով: Ալպեան շղ-

Թան է դա, Եւրոպայի հիացմունքի, դարմանքի առարկանս։ Իսկ ընկնում է Բապտիստի, Շվեյցարիայի և Գերմանիայի սահմաններում, այնպէս որ Գերմանիայից հարաւանցնողը պիտի այդ բարձունքների վրայով անցնի զնայք Այդ լեռնաշղթայի վրայ եղանակները միշտ ցրտալի, փոթորկալի և բքախառն են, յաճախ ձիւնախառն փոթորիկը գալիս ծածկում է ամեն բան, լցնում, փչացնում է ճանապարհը։ Այդպէս երբեք տաք օր չի անում—միշտ ցուրտ, միշտ սառնամանիք։ Իսկ իսկ ամառը շատ քիչ օր է պատահում, որ բուք ու թխիլ չըլինի։ Եւ ճանապարհորդներն հազար գժուարութիւնների են հանդիպում այդ կողմերից անցնելիս։ Նրանցից շատերը կորցնում են ճանապարհը, շատերին բուքը թաղում է ձիւնալի խոր անգունքների մէջ, շատերը գլորում են սառցադաշտերից ցած և քչերն են միայն կարողանում ազատ, ապահով անց կենալ։ Այդ շղթայի բարձրութեան կիսին, մօտ 8000 ոտնչ, ծովի մակերևոյթից, մի վանք է շինուած, որ կոչւում է Սուրբ Բերնարդուսի վանք։ Մեղանից շատ տարիներ առաջ մի խումբ մարդիկ կամենալով իրանց կեանքը նստիւել բարեգործութիւնների, եկել այստեղ վանք են հաստատել և իրանց նպատակ գրել մօլորուած ճանապարհորդներին փրկել, սառոյցներից հանել, պաքացնել, կորածներին գտնել ու գրանց բոլորին խնամել։ Այդ նըպատակով նրանք մեծ քանակութեամբ հարկաւոր բաներ են պահում իրանց մօտ։ Այդ գործում նրանց իսկական օգնականը լինում է իրանց բրգատ ու ազնիւ շուներ, որ վանքի անունով կոչւում է Բերնարդեան շուն։ Վանականները կապում են շան վզից մի զամբիւզ, մէջը դնում են գինի, հաց և անհրաժեշտ իրեղէններ ու շան հետ միասին դուրս են գալիս կորած, մոլորած մարդկանց որսնելու։ Շունը առաջնորդուելով իւր զարմանալի հափառութեամբ՝ գնում է փնտրելու ձիւների մէջ, նա մէկ կանգ է առնում այս փոսի մօտ, ախանջ է դնում, հրամայում է, ապա արագ կերպով գնում է, մի ուրիշ ձիւնախոյտի մօտ է կանգ առնում, փոքրում է, և երբ որ և է մի մարդու

հետք է գտնում, իսկոյն վազում, իւր տէրերին իմաց է տալիս, իսկ ինքը դարձեալ յետ է գալիս, ձիւնը յետ է անում մարդու վրայից, պառկում է մարդու մօտ, շունչը մօտեցնում է նրան, տաքացնում է նրան և անհամբեր սրտով սնրասում է, թէ արդեօք մարդն անշնչացել է բոլորովին, թէ միայն սառել է։ Ապա երբ սառուցը մի վտրք ժաժ է գալիս, շունը բաց է ոնում կողովը, հանում, նրա բերանը լցնում է օգելից խոխիքներ, յետոյ երբ վրայ են հասնում վանականները, ուրախ սրտով ընդունում է նրանց։ Վանականները վերցնում, տանում են նրան վանք և այնտեղ դարմանում նրան։ Սուրբ Բերնարդեան շներից մէկը մանաւանդ շատ նշանաւոր էր. նրա անունը Բառուի էր։ Նա մեծ, խելացի կենդանի էր. նա քառասուն մարդու կեանք էր ազատել. հացի և դինու կողովով նա ամեն փոթորկալի և բքաքեր ժամերին դուրս էր գալիս վանքից—որոնելու, ազատելու կորածներին։ Եւ երբ գտնում էր, աշխատում էր հանել ու վանք տանել. իսկ եթէ մենակ չկարողանար, վանք էր վազում և իմաց էր տալիս բարի վանականներին։ Նա սիրալիր և մեղմ էր վտրուում փայտացած մարդկանց հետ. նա մի անգամ այդ եղանակով ազատում է մի մանկան և մէջքին դրած վանք է դառնում, իսկոյն զանգի սրարանը քաշում է, որպէս զի վանականները շուտով վրայ հասնեն և տանեն մանկանը ինձմեն. և երբ նրանք ներս են տանում, շունը նորից դուրս է վազում մարդ ազատելու։ Երանտագետ մարդիկ այդ տեսակ շների մասից յետոյ յուշարձաններ են կանգնեցնում նրանց համար։

Էսկիմոսեան օւնն. Ասիայի և Ամերիկայի ամենահիւսիսային մասերում բնակուած է էսկիմոս կոչուած ցեղը։ Այն կողմերը մշտական ձմեռ է հասարեւս. բնակիչներն աղքատ են և իրանց խղճուկ կեանքը ազատուելու համար թափառական կեանք են վարուած։ Էսկիմոսներն ու հիւսիսային միւս ցեղերը շունին ընտանի անասուններս ինչպէս մեզանում կովը, ձին, ոչխարը։ Մշտական ձիւների և սառոյցների մէջ մեր երկրի կենդանիները չեն

կարող դիմանալ: Սակայն եղջերուն և շունը այդ ցեղերի համար այն են, ինչ որ մեզանում բոլոր ընտանի կենդանիները: Շունն այնտեղ բեռնակիր անասուն է այնպէս, ինչպէս մեզանում ձին, էջը, եզը, ուղտը: Չմեռը մանաւանդ ձիով ճանապարհորդելն անկարելի է այնտեղ: Ահագին խորութեամբ ձիւն է գալիս, որի մէջ ձին մինչև փորը կը խրուի-կը մնայ, մինչդեռ շունը ամենայն թեթևութեամբ կարող է սահել անցնել: Բացի դրանից դառնվայր բարձրութիւններ կան, նեղ հովիտներ, անանցանելի անտառներ, բազմաթիւ գետեր և առուներ, որոնք դիմանալ չեն կարող ձիու ծանրութեանը: Ահա այս հանգամանքների շնորհիւ և տեղացիների ազբատութեան պատճառով շունն է կատարում ձիու և եղան գործը: Առանց այդ շների ոչ ոք չի կարող ապրել այնտեղ: Մարդիկ շներին լծում են սահնակների: Երկու կամ երեք զոյգ շները միասին լծած կարող են տանել երեք մարդ և 3 փութ ծանրութիւն և օրական 50—100 վերստ տեղ են անցնում: Նըրանք շատ արագ են անցնում, բայց ճանապարհին շուտ շուտ յոգնում են և կանգ են առնում: Շները լաւ գիտեն ճանապարհները, փոթորիկների և բքերի ժամանակ նրանք կարող են իրանց տէրերին ազատել կորստից և երբէք ճանապարհը չեն կորցնում: Իսկ եթէ թիփին շատ զօրեղ է, այնպէս որ հարկաւոր է կանգ առնել, այդտեղ էլ նրանք ահագին ծառայութիւն են անում իրանց տէրերին: Պառկում են նրանց մօտ, տարացնում են նրանց և ազատում սառչելուց և վտանգից: Շատ անգամ թիփի բորանք օրեր ու շաբաթներ է տևում և շունը անխօս ու լուռ տանում է ամեն տեսակ զրկանք՝ առանց հեռանալու տիրոջ մօտից: Էսկիմոսեան շները շատ բրդոտ են լինում և նրանց մորթին բաւական թանկ արժէ: Տեղացիները մորթուց չոր են պատրաստում: Մինչդեռ եղջերուի մորթին նրանց մի տարի է դիմանում, շան մորթին ընդհակառակը—չորս և աւելի տարի է գնում: Չնայած շան մատուցած այդքան ծառայութիւններին, էսկիմոսներն ի-

րանց շների հետ դարձեալ լաւ չեն վարուում: Էսկիմոսն իւր երկրի պէս դաժան և անսիրտ է:

Նիւժամուդիէնդի կամ ջրասոյգ շուն. Շների այս տեսակի հայրենիքը Նիւժամուդիէնդն է. դրանք մարմնով մեծ են, գեղեցիկ ու գրաւիչ տեսք ունին. գոյնը բոլորովին սև է՝ զանազան գունաւոր խալերով դարդարուած: Նրա մարմնական այդ յատկութիւններին կից են նաև հոգեկան յատկութիւնները. նա վերին աստիճանի տիրասէր է, խելացի և հասկացող: Չուրը նրա ամենատիրած բանն է, առանց որի նա ապրել, ուրախանալ չի կարող. սաստիկ սիրում է լողալ: Նա կարող է ջրասոյգ լինել և ամբողջ փամբով ջրի տակ մնալ: Նա առանց յոգնելու մտնում, դուրս է հանում այն բոլոր առարկաները, որ ջրի տակն են գնացել, և ուրախութիւնը դէմքին բերում տալիս է տիրոջը: Չրասոյգը հրճուանքի մէջ է, երբ խաղ է անում իւր տիրոջ հետ ջրի մէջ. նա ամեն կերպ աշխատում է իւր ուրախութիւնն արտայայտել և երբ տէրը յոգնած ուզում է դուրս գալ, շունը ջանք է գործ դնում չթողնել նրան ջրից ելնելու: Իէպի ջուրն ունեցած այդ բնածին սէրը շատ օգտակար կենդանի է դարձնում ջրասոյգ շանը, մանաւանդ ջրափնեայ տեղերում: Յայտնի են հարիւրաւոր օրինակներ, երբ ջրասոյգը խեղդողների կեանքն է ազատել ջրի միջից այնպէս, ինչպէս Ալպեան ձիւների միջից սուրբ բերնարդեան շունը սառածներին է փրկում: Նաւաստիներն ահագին քանակութեամբ վերցնում են նաւերի վրայ այդ շներից, որպէս զի նաւաբեկութեան կամ այլ դժբախտութեան ժամանակ շներն օգնեն նրանց. շատ անգամ պատահում է նաև, որ ջրասոյգը ափից նըկատում է, որ ծովի վրայ նաւին դժբախտութիւն է պատահում, իսկոյն նետում է ջուրը և խեղդուող մարդկանց մէկ մէկ բերանն առած բերում, ափ է հանում: Չրասոյգը կարող է լաւ գայեակի կամ պահապանի դեր ևս խաղալ: Ամենայն վստահութեամբ կարելի է նրան հաւատալ ափին խաղ անող երեխային և գնալ-հեռանալ. շունը օչալուրջ կերպով կը հսկի տիրոջ զաւակին և չի թողնի

Չուրն ընկնելու. իսկ եթէ ընկաւ էլ, իսկոյն անփրատ կերպով կը հանի: Բայց Նիւֆանուդէնդում ապերախտ մարդիկ դարձեալ վատ են վարուով այդ օգտակար, խելացի կենդանու հետ: Այնտեղ շանը լծում են փոքրիկ կառքերի, փայտ են կրել տալիս և շատ վատ են կերակրուած: Ծներից շատերն ի հարկէ չեն գիմանում և մեռնում են, իսկ մի քանիսը ազատուելու միջոցների վրայ են մտածուած:


Որսկան շուն. Որսկան շների շատ տեսակներ կան. բայց դրանք բոլորն էլ ունին միեւնոյն յատկութիւնները. դրանք ուժեղ, վերին աստիճանի արագաշարժ, ճարպիկ ու ճարտար կենդանիներ են, մանաւանդ որսորդութեան մէջ, որովհետև դրանց հոտառութիւնը անհաւատալի կերպով զարգացած է: Ժամերով, նոյն իսկ օրերով առաջ անցկացած կենդանու հոտը նրանք առնում են և նրա հետքով առաջ գնալով՝ գտնում են նրան: Որսկան շունը միշտ քամու հակառակ է գնում. նա շարունակ աջ ու ձախ է թեքուում, միշտ նայելով, հոտմտալով, շուտ շուտ յետ է նայում տիրոջը, որի ամեն մի նշանն իսկոյն հասկանում է և ճշտութեամբ կատարում: Հէնց որ շունն զգում է իւր հոտառութեամբ որսի մօտիկութիւնը, յանկարծակի կանգ է առնում և յետ նայում, պոչն այլ ևս չի շարժում և անձոյն սպասում է տիրոջը. իսկ եթէ տէրը բաւական հեռու մնացած է լինում նրանից, խելացի կենդանին յետ է վազում, իմաց է տալիս տիրոջը և ապա դարձեալ դիմում գէպի օրսը: Նա նապաստակներին, ազուէսներին որջից դուրս է հանում և հալածում, մինչև որ տէրը նրան բռնի: Որսկանի մէջ սաստիկ զարգացած է հնազանդութեան, ինքնազսպման գիտակցութիւնը: Ինչպէս յայտնի է, շունը գիշատիչների ընտանիքին է պատկանում և որպէս գիշատիչ ամենայն ախորժանօք կը պատառոտի նապաստակ, ճագար, թռչուններ: Բայց որսկանն իւր տիրոջից հրաման ունի, որ ձեռք չտայ և լուռ իւր որսին ըստ պատէ. և որսկանը կատարում է այդ դարձանալի ճշտութեամբ: Նոյն իսկ այն ժամանակ, երբ թռչունը կամ կենդանին արիւնաշաղաղ վայր է գլորւում, շունն իրաւունք

չունի նրա վրայ յարձակուելու, մինչև որ նրան նրան շտայ որսորդը: Չարմանալի է նրանց հասկացողութիւնը և տիրոջ նկատմամբ նրանց ցոյց տուած հնազանդութիւնը: Նրանք անխղելի կերպով կապուած են որսորդների հետ և սիրում են մանաւանդ այն որսորդին, որ նպատակին անվրէպ խփել զիտէ, իսկ սխալողներին արհամարհում են: Նրանք քաջ որսկաններ են և ուզում են, որ իրանց տէրերն էլ հմուտ որսորդներ լինին: Բերենք մի օրինակ, որի մէջ երևում է, թէ շան համար ինչքան նշանակութիւն ունի իւր տիրոջ լաւ որսորդ լինելը:

Լաւ որսորդներից մէկը ունենում է մի շուն Բասկո անունով. որսորդը անվրէպ խփում էր նոյն իսկ թռչուններին նրանց թուած ժամանակ: Ծունն էլ հրճուանքի և բաւականութեան մէջ էր, տեսնելով իւր տիրոջ լաւ յատկութիւնները: Մի օր որսորդի մօտ գալիս է իւր հարևանի որդին և խնդրում է շանը թոյլ տալ իրա հետ որսի տանելու: Որսորդը տալիս է, բայց աւելացնում է, «Գնացէք, բայց զգոյշ կացէք, լաւ արձակեցէք, եթէ ոչ Բասկօն խիստ կը զայրանայ»: Որոն սկսում է: Ծունը անսխալ կերպով իւր գործն անում է. նա ահագին քանակութեամբ կաքաներ է թոցնում և քարացածի պէս կանգ է առնում, սպասելով որսորդի հրացանի յաջողութեանը. հրացանի տրաքոցը լուում է, բայց կաքաներից ոչ մէկը վայր չի ընկնում: Բասկօն զարմացած մնում է. նրա արամադրութիւնը փչանում է. բայց նա հնազանդուում է որսորդին և երկրորդ անգամ կաքաներ է գտնում և դարձեալ մարդուն նայում. կաքաները թռչում են, զնդակը սուլում է, բայց այս անգամ էլ ապարդիւն. այն ժամանակ Բասկօն մօտենում է որսորդին, նրա վրայ մի արհամարհական ակնարկ է ձգում և նետի նման սլանում է իւր տիրոջ տունը: Այդ անյաջողութիւնից յետոյ տիրոջ հարևանի որդին ինչ անում էր, չէր կարողանում շանը դարձեալ որսի տանել, շան մէջ արհամարհանքը գէպի այդ անվարժ նորելուկը խոր արմատներ էր ձգել:

Այդ բոլոր օրինակները և շների զանազան տեսակ-

ների մասին մեր պատմածները ցոյց են տալիս, թէ ինչքան օգտակար և անհրաժեշտ կենդանիներ են շները: Դրանք ցոյց են տալիս միևնոյն ժամանակ, թէ ինչքան սխալ և թիւր է այն տարածուած դարձուածքի իմաստը, երբ վատ բնաւորութեան տէր մարդու համար ասում են «չան բնաւորութիւն ունի»: Մարդուն առանց շան երևակայել չի լինի այժմ. և շան ու մարդու բարեկամութիւնը ամենաանկեղծ բարեկամութիւնն է. նրա տուած օգուտներն անթիւ են և անհաշիւ. նրա խելքի, հասկացողութեան փաստերն անհամար են. շունը գիտէ ուրախանալ, ամաչել, սիրել, բարկանալ և ընդունակ է ամեն բան հասկանալու. միայն թէ այդ ընդունակութիւնները դարգացնելու համար նա աշակերտ պիտի լինի մարդու մօտ. և մարդը փոխադարձապէս զգալով շան կարևորութիւնը հին ժամանակներից սկսած կրթել, դաստիարակել է այդ խելացի, ազնիւ, հաւատարիմ ու տիրասէր կենդանուն:



ՈՉՆԻՆԵՐԻ ՅԵՂ

Քիչատիչների ընտանիքին պատկանող այս ցեղն այնքան բնորոշ, աչքի ընկնող արտաքին ունի, որ անմիջապէս ճանաչոււմ է: Բոլոր ոգնիները ծածկուած են սուր, դուրս ընկած ու ծակող փշերով, և նրանց ատամները գիշատիչի կատարեալ տիպին են պատկանում: Ոգնու մարմինն անճուռնի է, ոտքերը կարճ, պոչը շատ կարճ կամ բոլորովին աննկատելի, ականջները բաւականին երկար, դունչը կնճթաձև ու երկար, ոտքերի վրայ սովորաբար հինգ հինգ մատ, որոնք և վերջանում են ճանկերով:

Ոգնիների ցեղն այժմ տարածուած է ամբողջ Եւրոպայում, Աֆրիկայում և Ասիայում, Ոգնիները մեծ մասամբ սիրում են ապրել հարթավայրերում և ամենից շատ չոր տեղերում, թէև երբեմն կենում են նաև գետերի ու ծովերի ափին: Անտառներն ու մարգագետինները, դաշտերն ու պարտէզները և լայն, ընդարձակ տափաստանները նրանց գլխաւոր բնակարաններն են: Այդ տեղերում նրանք ապաստան են գտնում թփերի, մացառների, ծառերի դատարկ բների մէջ, արմատների ու քարաժայռերի տակ, քարերի ու միւս կենդանիների թողած փոսերի մէջ: Յաճախ նրանք իրանք են բուն շինում իրանց համար: Տարուայ մեծ մասը նրանք առանձին կամ զոյգերով են ապրում և կատարելապէս գիշերային կեանք վարում:

Նրանց կերակուրը բուսեղէն է ու մսեղէն, բայց աւելի շատ վերջինը: Ուտում են պտուղներ, բանջարեղէն, հիւթալի արմատներ, սերմեր, փոքրիկ կաթնասուններ,

թուշուններ, երկակենցաղներ, միջատներ և նրանց թըր-  
թուրները, անձրևային որդեր և ամեն տեսակ բզեզներ  
ու զեռուններ:

Ողնիները դանդաղաշարժ, ծանրաբարոյ և բաւակա-  
նին ծոյլ կենդանիներ են. ապրում են բացառապէս դետնի  
վրայ, ոչ թէ գետնի տակ: Նրանցից ոչ մի տեսակը չի  
կարող մագլցել կամ թուչկոտել: Զգայութիւններից ամե-  
նից շատ զարգացած է հոտոտելիքը. լսողութիւնն ևս բա-  
ւականին նուրբ է. տեսողութիւնն ու ճաշակելիքը շատ  
թոյլ են, իսկ շոշափելիքը բոլորովին բութ է: Նրա մտա-  
ւոր կարողութիւններն ևս շատ ստոր են. Բոլոր ողնիները  
վախկոտ են, յիմար և մաշդկանց չեն սիրում. բայց միև-  
նոյն ժամանակ նրանց մէջ նկատելի է նաև բարեսրտու-  
թիւն:

Ողնիները բերում են 3—8 ձագ, ձագերի մասին շատ  
հոգ են տանում և սահմանջուած դէպքում քաջաբար դի-  
մազբում են յարձակողներին: Ողնիների շատ տեսակ-  
ները ընդունակ են իրանց մարմինը գունդ դարձնել, կրճ-  
կուել, այնպէս որ դրսից միայն նրանց աւեղնաձև ծա-  
կող փշերն են երևում, որով համարեա անմատչելի դառ-  
նում թշնամու համար: Նրանք այդ դրութեան մէջ էլ  
քնում են: Հիւսիսային աշխարհների ողնիները տարուայ  
ցուրտ ժամանակը անց են կացնում մշտական, անընդ-  
հատ քնի մէջ, իսկ այրեցեալ գոտու ողնիները նայնպէս են  
փարում տաք եղանակներին:

Ողնին անմիջական օգուտ համարեա թէ չի տալիս.  
միայն գնչուններն են, որ նրա միսն ուտում են տեղ տեղ:  
Բայց ողնու կողմնակի օգուտը մեծ է. նա ահագին քա-  
նակութեամբ փաստակար կենդանիներ է ոչնչացնում, որով  
և դաշտերին զգալի օգուտ է հասցնում:

Ողնիներից ցեղը քիչ տեսակներ ունի իւր մէջ: Ամե-  
նից տարածուած տեսակը մեղ բոլորիս յայտնի հասարակ  
ոզնին է:

### Խ Լ Ո Ւ Բ Գ Ն Ե Ր Ի Յ Ե Ղ

Գիշտօրիների ընտանիքին պատկանում է նաև այս  
խաւարասէրների ցեղը: Խլուրդները տարածուած են հա-  
մարեա ամբողջ Եւրոպայում, Ասիայի մեծ մասում, հարա-  
ւային Աֆրիկայում և հիւսիսային Ամերիկայում: Խլուրդի  
կազմուածքի ամենաբնորոշ կողմն այն է, որ խիստ ուժեղ,  
չափազանց զարգացած է կրճքի սակորների առաջին մասը.  
Թիկունքը նայնպէս խիստ լայն է, ոտքերը բաղկացած են  
տասն սակորներից, կարճ մատները վերջանում են երկար,  
ուժեղ և փորելու յարմարեցրած ճանկերով: Նրա ատամ-  
ները փոքր, բայց չափազանց սուր և բարակ են:

Այս ցեղի բոլոր տեսակները ստորերկրեայ կեանք են  
վարում և սիրում են գլխաւորապէս հարթ, տափակ տե-  
ղեր: Սրանք էլ կուղբերի նման բուն շինելու մէջ հմուտ  
ճարտարապետներ են: Խլուրդի բունը մի քանի յարկից է  
և ամբողջովին գետնի տակ, դրա համար էլ նրա կեանքն  
անցնում է խաւարի մէջ, նա խսկական խաւարի զաւակ է  
և լոյսը հիւանդագին կերպով է ներգործում նրա աչքերի  
վրայ: Նրա մարմնի կազմն այնպէս է, որ չի կարող ոչ մա-  
գլցել, ոչ թուչել և ոչ էլ կարգին ման դալ: Նա չի սի-  
րում նաև ջրի մէջ լողալ, թէև մի քանի տեսակները լաւ  
լողալ են իմանում: Սակայն իրանց ստորերկրեայ պալատ-  
ներում խլուրդներն անհամեմատ արագութեամբ են ման  
գալիս:

Խլուրդի զգայարանքներից ամենից շատ զարգացած  
է քիթը, ախանջը և ապա շոշափելիքի գործարանը. նրա  
տեսողութիւնն ուղղակի վատ է: Խլուրդների մէջ վատ

յատկութիւններն աւելի շատ են լաւերից: Նրանք ընդհանուր առմամբ խաղաղասէր չեն, կռուարար, գիշատիչ և յափշտակող. դաժանութեան և դազանութեան կողմից նրանք նոյն իսկ վագրին են գերազանցում: Բոլոր խլուրդների կերակուրը բացառապէս մսեղէն է. նրանք ուտում են գետնի տակ եղած ամեն տեսակ որդեր, միջատներ և վերին աստիճանի շատակեր ու ագահ են. և հէնց դրահամար էլ մասամբ օգտակար են, որովհետև դաշտերի ֆլասակար միջատները նրանք ոչնչացնում են: Ընտանի խլուրդներ համարեա թէ չկան, որովհետև խիստ դժուար է այդ շատակեր և խաւարասէր կենդանուն պահելը:

Հ Ա Ս Ո Ր Ա Կ Խ Լ Ո Ւ Ր Դ

Խլուրդների այս տեսակը սովորական է բարեխառն գօտու վրայ ընկած բոլոր երկրների համար. նա ապրում է տափաստաններում, բայց պատահում է նաև ծովի մակերևոյթից 6000 ոտնաչափ բարձրութեան վրայ: Նրա բնակութեան տեղը շատ հեշտ է իմանալ այն հողաթմբերից, որոնք նրա բնակարանի մօտերը դարսուած են լինում: Ստորերկրեայ բոլոր գիշատիչ գազաններից խլուրդն ամենից շատ է աշխատում իւր պալատի կամ բնակարանի համար: Եւ նրա բնակարանը հասարակ բան չէ, ինչպէս միւս կենդանիներինը: Դրսից նրա բնակարանը մի փոքրիկ անցք ունի, իսկ շինութեան ամբողջ փայլն ու հրաշալիքը ներսն է, գետնի տակ: Մի շարք երկար ու նեղ միջանցքներ միանալով կազմում են բաւականին լայն ու ընդարձակ մի սենեակ, որտեղ խլուրդը քնում է. դա նրա ննջարանն է: Ննջարանը դրսից քիչ մատչելի կամ բոլորովին անմատչելի տեղերում է լինում, ծառերի արմատների մօտ, կամ պատերի հիմքի տակ: Ննջարանի ու նրան կից միւս սենեակների պատերը յղկուած ու սուղաղած են: Խլուրդի անկողինը բաղկացած է փափուկ տերեւներից, մատղաշ հացահատիկների ցողուններից, մամու-

ռից, ծղօտից: Ննջարանից զանազան ուղղութեամբ բազմաթիւ ճանապարհներ են շինուած: Եթէ խլուրդին վերեւից վտանգ սպառնայ, նա իւր ներքևի պալատներն է քաշում, իսկ եթէ կողքից թշնամին նեղացնի, անմիջապէս միւս կողմի միջանցքներով գնում, կորչում է անցքերի մէջ: Նրա ամբողջ բնակարանը 1—2 ոտնաչափ խորն է գետնի մէջ: Գլխաւոր միջանցքը խլուրդի մարմնից մեծ է: Ստորերկրեայ բազմաթիւ անցքերը դրսից նրանով են յայտնի, որ այդ շերտի վրայ բուսած խոտերը չորանում են և գետինը մի փոքր փոս է ընկնում: Կացարանի ներքին մասը հաղորդակցութիւն չունի դրսի աշխարհի հետ, բայց և այնպէս ծակոտիքներից բաւականին օդ է ներս թափանցում: Խլուրդները իրանց գլխաւոր կացարանից բաւականին հեռու, գետնի տակ պահում են առանձին ջրհորներ և ջրամբարներ, որոնք խլուրդին միշտ խմելու ջուր են մատակարարում:

Խլուրդի միակ և գլխաւոր պարապմունքը փորելն է: Նրա կազմուածքը հէնց դրահամար էլ ստեղծուած է: Նա քանդում, փորում է գետինը իւր սուր դնչով և փորածը մի կողմ է ձգում, ճանապարհը մաքրում իւր թաթերով. և այդ բոլորը անպատմելի արագութեամբ: Եւ աշխատելիս խլուրդը միշտ ծածկուած է լինում 5—6 մատնաչափ փափուկ հողով: Շատերն ասում են, որ նա հողի տակ այնպէս արագ է փորում, անցնում, ինչպէս ձուկը ջրի մէջ սահում, սուրում է: Կամ թէ նա իւր ստորերկրեայ թագաւորութեան մէջ այնպիսի արագութեամբ է սլանում, որ հաւասար է լաւ նժոյգի քառասոմբակ արշաւելուն: Դրանք չափազանցութիւն էլ լինեն, յամենայն դէպս ցոյց են տալիս, թէ իրօք շատ արագ է շարժում խլուրդը գետնի տակ:

Եւ չի էլ կարող նա այդպէս արագ կերպով չշարժուել, որովհետև նա փորելով և ման գալով է գտնում իւր կերակուրը: Եթէ ի նկատի ունենանք խլուրդի չափազանց ագահութիւնն ու որկրամոլութիւնը, նաև այն, որ նա խիստ ստէպ ստէպ է քաղցածանում, այն ժամանակ հաս-

կանալի կը լինի մեզ համար նրա այդ արագաշարժութեան պատճառը: Որտի դուրս գալիս խլուրդը մեծ մասամբ առաջնորդուում է իւր հօտառութեամբ: Նա իւր միջանցքներէց մէկուում կանգնած ժամանակ շատ լաւ իմանում է, թէ ձօտերքը սրտեզ շարժուեց մի օրդ, սրտեզ ժաժ եկաւ մի ճիճու և իսկոյն, անպատմելի ճարպիկութեամբ փօրելով վրայ է պրծնում, հասնում, բռնում է: Նա սարսափելի գիշատիչ կենդանի լինելով իւր կացարանի մէջ չի կարող իւր նման մի ուրիշի ներկայութիւնը տանել, և երբեմն երբեմն թոյլ է տալիս միայն իւր էգ բարեկամին: Մնացած ժամանակ նա անագօրոյն գաղան է և մահուան ու կեանքի կռուի մէջ է իւր բնակարանի անկոչ այցելուներէ հետ: Խլուրդն այնքան գիշատիչ ու գաղանական վատ բնագոյնելով օժտուած է, որ շատ անգամ կուռում է նոյն իսկ ուրիշ խլուրդների հետ և թոյլը զոհ է լինում ուժեղին ու կերակուր դառնում նրա անագօրոյն օրկորին:

Ինչպէս որ վագրը դարան է մտնում անմեղ եղջեւրուին ու վայրկենաբար յարձակուում է նրա վրայ ու խեղդում, ճիշտ այդպէս է վարում նաև խլուրդը իւր զոհի հետ: Ահա նա զգում է, որ գետնի մէջ, իրանից քիչ հեռու օրդերը ժաժ են գալիս, քաղցր, հիւթալի արմատներ են ուտում, նա մի քիչ հանգստանում է, բայց և իւր ճաշակելիքը պարարում է այն զոհի համով, որին շուտով բռնելու է: Նա վեր է կենում և ուժեղ հարուածով քանդում է գետինը, վրայ է պրծնում օրդերին, խեղճերն աշխատում են խուսափել, նրանք զգում են իրանց երգուեալ թշնամուն, բայց ուշ է, խլուրդի դունչը գիպում է անձրևային թրթուրին, որը մի ակնաթարթում յայտնում է գաղանի գիշատիչ ատամների տակ: Իսկ միւս ճիճուները, օրդերը, տես, թէ ինչպէս գալարում, ինչպէս աշխատում են փախչել այդ ողորմելի էակները, բայց ի զուր, խլուրդի սրատես հետամտութիւնից չեն կարող ազատուել, դժուար է պրծնել այդպիսի ոստիկանից: Նա իւր հատառութեամբ զգում է զոհին, նրա քաղցն աւելանում է, ախորժակը գրգռում, նրա փորը հակայական

գերեզման է այն բոլոր արարածների համար, որոնք գետնի տակ սողում ու թափառում են, և խլուրդի նման դատաւորի հարցաքննութիւնը կարճ է լինում, դատավճիռը նրա ախորժակից է կախուած, և պատիժն անմիջապէս յանցանքին է հետևում: Այդ տեսակ ճաշից յետոյ շատ հաճելի է ջուր վայելել, և ահա խաւարասէր գաղանը դիմում է իւր ջրամբարները ջուր խմելու: Զովարար խմիչքը թարմացնում է նրան և նա անմիջապէս ուղղում է իւր ամրոցը: Բայց այդ ինչ է, որ այնտեղ խորքում ժաժ է գալիս խլուրդի դիմաց, նա կատաղած կանգ է առնում, այդ ո՞վ է հաժարձակուել մտնել նրա բերդը: Ահա մէկը մօտենում է, աւանդ, դա նոյնպիսի մի խլուրդ է, շար աստիճ է նրան ձգել օտարի սահմանները: Ատամները կրճատացնելով, վայրի կատաղութեամբ նրանք մօտենում են իրար, պինդ, սուր ատամները մեխում են իրար մօրթու մէջ, ճանկերը քար ու քանդ են անում փափուկ հողը և այնտեղ՝ գետնի տակ սկսում է յանդուզն ու հոյակապ ճատաւարտը: Յաւի ու մահացու երկիւղի սուր ճիչը խառնուած կատաղի աղաղակների հետ գալիս հասնում է հեռուն: Վերջապէս քիչ քիչ լուում է ամեն ինչ: Տանտէրը յաղթանակը տանում է: Մնչարժ, մեռած, ջարդուած գլխով ընկած է անկոչ այցելուն, իսկ յաղթողը, թէպէտ և վիրաւոր, ուրախութեան ձայներով շարունակում է ճանապարհը դէպի իւր ամրոցը, օրպէս զի ճաշից ու մենամարտից յետոյ նորից կաղբուրուի լուս, խաղաղ ընով:



ԱՐՁԵՐԻ ՅԵՂ

Այս ցեղի կենդանիները շատ տարածուած են ամբողջ Եւրոպայում, Ասիայում և Ամերիկայում, նաև Աֆրիկայի արևմտեան մասերում։ Բաւականին հաստավիզ, հաստադուրխ կենդանիներ են։ Նրանց դուռնը սուր է, աչքերը մանր են, ականջները կարճ և փոքր, ոտները չափաւոր, չորս ոտներն էլ հինգ հինգ մատով են վերջանում, որոնք զինուած են սուր և ուժեղ ճանկերով։ Ճանկերը ընդունակ չեն թաթերի միջից ներս ու դուրս անելու։ Ունին ատամների երեք տեսակն էլ 40—49 հատ, նրանց ատամնաշարն հետևեալ պատկերն ունի  $\frac{2-4-1-6-1-4-2}{3-4-1-6-1-4-3}$ ։ Ատամների այդ կարգից արդէն պարզ պիտի լինի, որ արջերը կերակրի մէջ խտրութիւն չեն դնում։ Նրանք հաւասար սիրով ուտում են թէ բուսեղէն և թէ մսեղէն։ Պտուղներն ու հիւթալի բոյսերը նրանց սիրած կերակուրն են։ Փոքր ու մեծ կաթնասուններն էլ նրանց յաճախ աւար են լինում։ Թռչուններն իրանց ձագերով և ձուերով արջերի համեղ կերակուրներից են։ Արջը մարդու վրայ միայն այն ժամանակ է յարձակւում, երբ նրան բարկացնեն, երբ մարդ առաջ ինքը յարձակուի։ Արջերը մարմնով բաւականին անճուռնի կենդանիներ են, բաւականին էլ դանդաղաշարժ, բայց կարող են ծառեր բարձրանալ, իսկ նրանց շատ տեսակները գիտեն լաւ լողալ։ Հոտոտելիքի գործարանը առանձնապէս զարգացած է, մի քիչ պակաս նաև լսելիքը։ Արջերին, մանաւանդ նրանց փոքր ձագերին, շատ հեշտ է ընտելացնել և զանազան ծաղրածու բաներ սովորեցնել, թէև նրանք մարդու հետ երբէք չան պէս չեն

բարեկամանում։ Արջերը բերում են 1—5 ձագ։ Բոլոր արջերը, բացի սպիտակ արջերից, ձմեռն ու աշնանը ընկնում են մի տեսակ նիրհի մէջ, նրանք չեն քնում իսկապէս, այլ թմրում են և ամեն մի անակընկալ բանից իսկոյն զարթնում են ու դուրս վազում։ Իրանց բները նըրանք շինում են ծառերի կոճղերի տակ, խոր անտառների մէջ և ջրառատ տեղերում։ Արջերն այնքան էլ վրասակարկենդանիներ չեն, եթէ ի նկատի առնենք, որ նրանց միսը շատ տեղ ուտում են, նրանց ճարպը մեծ գին ունի իբրև մազեր երկարացնելու միջոց, իսկ ամենից շատ նրանց մորթին իբրև փափուկ վերարկու ահագին արժէք ունի մարդկանց մէջ։ Շատ տարածուած են արջերի հետևեալ տեսակները. խարտեաշ կամ հասարակ արջ և սպիտակ կամ Գրիչլի արջ։

Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Ր Ձ

Եւրոպայի արևմտեան մասերում կան խուլ հինաւորաց անտառներ, անմատչելի ժայռերով շրջապատուած, հիասքանչ հովիտներ, մթին քարանձաւներ ու ծուռ գահավիժող ձորեր—դրանք բոլորը գեղեցիկ յարմարաւոր բնակավայրեր են հասարակ կամ խարտեաշ արջի համար։ Սակայն դրա իսկական հայրենիքը Ռուսաստանն է, Լեհաստանը, Կալիցիան և Սկանդինաւեան, այս երկրներում մթին ու մռայլ անտառների մէջ, սար ու ձորերի խորշերում, որտեղ դեռ մարդկային ոտքը չատ էլ չէ կոխել, արջն իրան բոլորովին ազատ է զգում, թափառում է լեռնից լեռ, անում է ուղածը և սչ ոք չի խանգարում նրա մենաւոր, խորհրդաւոր կենցաղը։

Արջը քանի դեռ փոքր է, կերակրւում է մեծ մասամբ բուսեղէնով, կովի պէս արածում է հացադաշտերում, խոտ է ուտում, ուտում է նաև ծառերի պտուղներ, անտառի զանազան բոյսեր, քար ու քանդ է անում

մեղուանոցները, դուրս է հանում մեղուների պատրաստած լաւաշներն ու մեղրը: Մեղուներն ի հարկէ ամեն կերպ աշխատում են ընդդիմանալ. կծում են, բայց հաստամորթ արջի համար դրանք նշանակութիւն չունին: Նրա բրդոտ մորթը լաւ պաշտպանում է նրան. վերջապէս նրա չարածճի թշնամիների ամբողջ բանակը թափւում է նրա քթի վրայ, կծում, ծակոտում է և նրանից յետոյ միայն արջը տեղի է տալիս: Իսկ ինչ վերաբերում է հասակն առած մեծ արջին, նա դրանցով չի բաւականանում: Պատահմամբ եթէ նրա ձեռքն ընկնի որ և է կաթնասունի միս և եթէ նա մի անգամ մտի համն առնի, էլ այնուհետև վազ չի գայ նրանից. արջն այնուհետև կը դառնայ իսկական գիշակեր, պատառոտող գազան: Նա սկսում է դրանից յետոյ հետևել և հալածել ամեն տեսակ կենդանու՝ եղջիւրաւոր անասուններին, ոչխարներին, մինչև անգամ ձիերին ու եզներին: Այդ տեսակ զոհի վրայ նա յետևի կողմից է յարձակում, նախապէս նրանց երկար հալածելով բոլորովին ուժասպառ անելուց յետոյ: Եթէ այդ հալածելը սարերի կողերով է լինում, արջն աշխատում է վայր գլորել իւր զոհին, սպանել, որից յետոյ նա կամացուկ և զգուշութեամբ գնում, սկսում է ուտել: Արջերը շատ անգամ դարան են մտնում հոտերի ու նախիրների ճանապարհներին. և եթէ հոտից կամ նախիրից որ և է մի կենդանի յետ է մնում, նրա բանը պրծած է: Արջը դարան մտած տեղից անմիջապէս վրայ է պրծնում և պատառ պատառ անում:

Արջերը շատ անգամ գալիս հասնում են նոյն իսկ գիւղերն ու քաղաքները. մտնում են աները և օրը ցերեկով ահագին վրասներ են տալիս մարդկանց: Նրանք կոտորում, ջարդում են կողպուած դռները, ներս են մտնում և իրանց ուղածն առնում, տանում են: Սկանդինաւիայում նոյն իսկ կոտորատում են երգիկները, որոնք այնտեղ շատ էլ հաստ ու պինդ չեն, ինչպէս մեզանում: Այնտեղ անկողիները ձգում են ոչ թէ յատակի վրայ, այլ առաստաղի մօտ, այնպէս որ պատահում են դէպքեր,

երբ արջը ծակում է երգիկը և ուղղակի ընկնում է երգիկի տակ քնած մարդու ծոցը:

Եթէ արջը յաջող կերպով կարողանայ մտնել գոմ, սպանում է մի կով կամ եզ, քանդում է նրա կապերը, գրկում է նրան առաջի թաթերից մէկով, միւսով բռնում է առաստաղի գերանից և այնքան ուժեղ է, որ կարողանում է այդ եղանակով վեր հանել ահագին կովեր առաստաղից: Եւ ապա երգիկից ցած իջնելով նա ամենայն թեթևութեամբ քաշ է տալիս իւր յետևից աւարը և շատ անգամ մի գիշերուայ մէջ ամբողջն ուտում է: Պատմում են, որ արջը շատ անգամ այդպիսի բեռով ճարպիկ կերպով կարողանում է անցնել դժուարին ու վտանգաւոր անդունդների բերանով, կամուրջների ու կիրճերի վրայով: Դեռ զոհը չմտած արջն սկսում է յօշոտել նրան: ասում են, որ նա ամենից շատ սիրում է պլոճիկներն ու կաշու տեղերը, և ամենից առաջ այդ մասերն է պոկում: Եղջիւրաւորներն ու վայրի այծերը շնորհիւ իրանց արագոտութեան, կարողանում են ազատուել, բայց և այնպէս արջը նրանց էլ է շատ հալածում: Արջերը որսում են նաև ձկնեղէն: Կամչատկայում ահագին քանակութեամբ արջեր կան. նրանք գարնան սկզբին մեծ բազմութեամբ սարերից իջնում են դէպի մեծ գետերը, որոնց ափին նրանց խմբերը կանգ են առնում և ձուկ որսում. և եթէ ձուկ շատ է լինում, արջերը շների նման միայն գլուխն են ուտում: Երբ նրանք գետի մէջ նկատում են ձկնորսական ցանց կամ օւռկան, իսկոյն գնում խուզարկում են և միջի եղածը իրանց սեփականացնում: Աշնանը, երբ ձուկը գետի հոսանքին հակառակ վեր է բարձրանում, արջերն էլ նոյն ուղղութեամբ գնում են ձկան յետևից: Կամչատկայիները շատ էլ չեն վախենում արջից և չեն վրասում նրան, որովհետև այդտեղի արջն էլ անվրաս է համարեա մարդու համար: Բայց երբ արջին բարկացնեն, նա կը կատաղի և անից բաներ կը փախցնի: Մի անգամ մի անից կորչում են չորս և վեց տարեկան երկու երեխայ, նրանց ծնողներն երկար որոնելուց յետոյ վեր-

Ղապէս գտնում են նրանց արջի մօտ: Տղաներից մէկը կերակրում էր արջին, իսկ միւսը նստել էր մի ուրիշ արջի վրայ, ձի էր շինել նրան ու քշում էր. իսկ արջը այդ շարձճի տղաներին ամենայն սիրալիրութեամբ էր պատասխանում: Ծնողներն այդ տեսնելով սարսափած ազաղակ են բարձրացնում և երեխաների հաստալիզ ու ահազին խաղակիցները թողնում, փախչում են:

Ամուր գետի հովտում ապրող արջերն ևս շատ բարեօիրտ և հեղ կենդանիներ են սովորաբար. տեղացիները նրանց յարգում են և համարում են արգարադատ կենդանի: Տեղացու այն երդումն է սուրբ համարում, որը կատարում է արջի մազի վրայ: Տեղացի եակուտները համոզուած են, որ արջը հասկանում է նրանց լեզուն, դրա համար էլ արջի մասին նրանք երբէք վատ չեն խօսում, այլ միշտ շողքորթութեամբ ու կեղծաւորութեամբ, ինչպէս քուրմերը իրանց կուռքերի առաջ:

Հասարակ արջն այնքան էլ աչքի չի ընկնում իւր մտաւոր ընդունակութիւններով. նրան նոյն իսկ համարձակօրէն կարելի է յիմար, ծոյլ կենդանի անուանել: Երներն ու կատուններն անհամեմատ խելօք են նրանից, և եթէ շատ անգամ արջերն բարեօիրտ են համարում, դա միայն նրա համար է, որ արջը չի կարող ճարպիկութեամբ մագլցել կամ սողալ և այդ եղանակով յափշտակել կամ գողանալ: Կատուացեղ կենդանին ուժեղ է և ճարպիկ, շնացեղը՝ խելօք և հնարագէտ, իսկ արջը՝ անտաշ և կոպիտ. նրա յիշողութիւնը թոյլ է, գատողութիւն ամենեւին չունի, նրան երբէք չի կարելի կապել մարդկանց հետ բարեկամական սերտ կապերով. նա սիրում է ոչ թէ կերակուրը բերող մարդուն, այլ հէնց կերակուրը:

Արջերն ապրում են բաւականին երկար. մինչև 40, 50 տարի:

Արջ որսալը ամենազժուարիին ու խիզախ ձեռնարկութիւններից մէկն է: Որսորդի անբաժան ընկերն ու մեծագոյն օգնականն այդ դէպքում շունն է. սա ոչ միայն փնտռում, գտնում է գազանին, այլ նաև շճեցնում,

չարչարում և յօգնեցնում է նրան, այնպէս որ որսորդը դրանից յետոյ շուտով կարողանում է իւր հաշիւը տեսնել նրա հետ: Արջը միայն այն ժամանակ է սոսկալի թըշնամի դառնում մարդուն և վտանգաւոր, երբ նրան ամեն կողմից շրջապատում են և նեղում: Միւս բոլոր դէպքերում, երբ նոյն իսկ վիրաւորուած լինի, աշխատում է փախչել: Ուրիշ բան է, երբ արջը իւր զաւակների կամ քոթոթների հետ է, այն ժամանակ նա շատ կատաղի է լինում և երբէք տեղի չի տալիս. և որսորդը եթէ երկրորդ անգամ իսկոյն չկարողանայ հրացանը լցնել, ստիպուած պիտի լինի մենամարտի դուրս գալ նրա հետ: Եւ դա այնքան էլ հեշտ չէ. բաւական է յիշել, որ արջը մի հարուածով շատ անգամ կարող է սովորական կովին կամ եզանը տապալել: Սպանիայում նոյն իսկ արջ որսողների յատուկ ցեղ կամ ժողովուրդ կայ, որ կոչւում է օզեռոս: Ամեն մի օզեռոս շատ մեծ յարգանք է վայելում ժողովրդից միայն նրա համար, որ արջ սպանելով է պարապում, որովհետև ահազին քաջութիւն և սրտի արիւթիւն է հարկաւոր օզեռոս դառնալու համար: Օզեռոսը որսի դնալիս իւր հետ վերցնում է երկու որսկան շուն և դրանց հետ գնում է լեռնոտ անտառների մթին թաւուտները: Հէնց որ արջն յայտնւում է, սկսւում է ըմբշամարտը: Որսորդը հրազէն չունի, այլ միայն դանակ. և նա ապաւինած իւր բազկի զօրութեանը, դուրս է գալիս այդ գազանի դէմ և շատ անգամ յաղթում է: Պատահում է ի հարկէ և հակառակը:

Արջ որսալը բաւականին շահաւէտ է որսորդի համար: Որսորդը կառավարութիւնից նպաստ ստանալուց զատ, ծախում է արջի մորթին, նրա միսը, ճարպը, և սպանողի անունն էլ առասպելական է դառնում շրջակայ ժողովրդի մէջ:

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՁ

Հիւսիսային կամ սպիտակ արջը ապրում է ծայրագոյն հիւսիսում՝ յաւիտենական ձիւների և սառոյցների սահմանում։ Այնտեղ մշտական ցրտի ու խաւարի մէջ ոչ ոքից չնեղուելով ապրում է նա հանգիստ կերպով, ապահով ամեն տեսակ յարձակումներից, չունի ախոյեան, չունի թշնամի։ Ամերիկայի արևելեան ամերքը, Բաֆֆինի և Հուգսոնի նեղուցները, Գրենլանդիան, Սիբիրի հիւսիսային մասն ու Նոր Սիբիրը, Եպիցքերգէնն ու մինչև Իւլանդիայի հիւսիսային ամերքը—այդ տեղերն ահա այս արջի իսկական հայրենիքն են։ Եւ այդ մենաուոր, մեծ մասամբ անմարդաբնակ տեղերում ապրում է արջը, շատ անգամ սառցէ կոյտերի հետ լողում է աշխարհից աշխարհ, գնում, ճանապարհորդում է և Ասիայից Ամերիկա է անցնում և հակառակը։ Նա չի մրսում, ցուրտն է նրա սիրածը և սաքութիւնը նրա մահուան պատճառ կարող է լինել։ Նրա բրդոտ սպիտակ մորթու տակ ահագին քանակութեամբ ծածկուած ճարպը մեծ ծառայութիւն է մատուցանում ցրտի դէմ։ Արջի կերակուրը բնականաբար աղքատիկ պիտի լինի, նա ուտում է այն, ինչ որ գտնում է հիւսիսային անհիւրընկալ և ցուրտ ամերում։ Նա իւր ահագին ուժեղ թաթերով ծակում է սառոյցը, մանում է ջրի մէջ և ձուկ է որսում, ուտում է նաև ջրային այլ կենդանիներ։ Շատ անգամ ջրի մէջ նա սպանում է ջրային մի կենդանի և ահագին մղոններով քաշում տանում է իւր գոհին։ Չուկը և կէտը նրա գլխաւոր ուտելիքներն են։

Համեմատաբար աւելի հարաւային մասերում ապրող սպիտակ արջերը, շատ դէպքերում պատահել է, որ չեն դիպել կովերի նախիրներին։ Նրանք մարդկանց էլ չեն դիպչում, քանի դեռ մարդը նրան չի նեղացնում։ Բայց եթէ ստիպի նրան կռուի դուրս գալ, արջն ընդունում է մենամարտի հրաւերը և անվեհեր կերպով թշնամու առաջ է գալիս. վրիպած գնդակն աւելի սաստկացնում է գա-

զանի կատաղութիւնը. նա մոլեգնաբար խլում է որսորդի ձեռքից նրա նիզակը և փշուր փշուր անում, այնպէս որ միշտ պէտք է զգոյշ կենալ, չբարկացնել կամ անխոհեմաբար դուրս չգալ արջի առաջ։ Այդպիսի անխոհեմութեան դէպքեր շատ են պատահում։ Պատմենք մի դէպք, որտեղ սակայն վախճանն աւելի ծիծաղաշարժ է, քան ցաւալի։ 1820 թուին Գրենլանդիայի ամերում մի նաւ է խարխիս ձգում։ Նաւաստիները ճաշում են և նրանցից մէկը, որը բաւականին ուր էր խմել, խիզախաբար ուզում է մենակ դուրս գալ արջ որսալու, նա իւր հետ վերցնում է միայն կէտի մի ոսկոր և գնում, կէս ժամաչափ անցնում է ձիւնի վրայով և վերջապէս պատահում է արջին, որը սակայն ի մեծ զարմանս նաւաստու, ամենին չի վախենում նրանից, այլ համարձակ նայում է նրա աչքերին, կարծես ուզում էր կռուի կանչել։ Նաւաստու քաջութիւնը գնալով նուազում է, մասամբ գուցէ նրա համար, որ ուր սկսել էր իւր ազդեցութիւնը թողնել, մասամբ էլ նրա համար, որ թշնամին անվախ էր ու յանդուգն։ Նաւաստին կանգնում ու նիզակով երկու անգամ թափահարում է օդի մէջ, արջը տեղից չի շարժւում։ Ի դուր է ազաղակում նաւաստին և բղաւում, որպէս զի վախեցնի արջին. արջը դարձեալ անշարժ էր։ Խեղճ մարդու ծնկներն սկսում են թուլանալ, նիզակը դողում է նրա ձեռքում, բայց ընկերների առաջ պարծենալն յիշելով և նրանց ծաղրից վախենալով, դեռ չի ուզում տեղի տալ։ Այժմ արջն ամենայանդուգն խիզախութեամբ առաջ է շարժւում, նրա մօտիկութիւնը, վեհութիւնն ու արիութիւնը մարում են մեր խեղճ նաւաստու քաջութեան վերջին կայծը և նա թողնում վախչում է։ Եւ այստեղ ահա սկսւում է իսկական վտանգը։ Արջն ամենայն արագութեամբ սկսում է հետեւել նրան և հալածել։ Մարդը յետ է նայում և արջի ուշադրութիւնը մի կողմ գրաւելու համար նետում է իւր նիզակը։ Արջը կանգ է առնում, բերանն է առնում նիզակը, ծամծամում է, ապա թողնում և նորից հալածում է մարդուն, որին հասնելու վրայ է

արդէն։ Նաւաստին սարսափահար ձգում է իւր ձեռնոցներին մէկը, ապա միւսը, ապա իւր գլխարկը, և ամեն անգամ արջը կանգ է առնում, բզիկ բզիկ է անում և դարձեալ անողք կերպով շարունակում է հալածել։ Վերջապէս նա հասնելու վրայ է լինում մարդուն. բայց նաւաստու ընկերները, սրոնք դուրս էին եկել իրանց քաջ ուղեկցի որսը տեսնելու, առաջ են գալիս և ամուր շարքով կանգնում, որ դիմադրեն արջին. արջն այդպիսի փոփոխութիւն տեսնելով, խոհեմութիւն է համարում թողնել գնալ։ Ըսկ նաւաստին թէպէտ և այժմ բոլորովին փրկուած էր, վախից դեռ շարունակում է վազել և վազում է մինչև որ նաւին է հասնում։

Սպիտակ արջը իւր արարքների մէջ բաւականին խելք ու մտածմունք է ցոյց տալիս։ Ծանապարհորդներից մէկը հետևեալն է պատմում, մի նաւավար ցանկանում է արջի մորթ ձեռք բերել, այն էլ բոլորովին անջլաս, գնդակով չծակծկուած։ Դրա համար նա թակարդ է լարում, ցանց է դնում ձեան տակ և վրան մի կտոր կէտի ճարպ, որ շատ սիրում է արջը։ Ծարպի հոտը շուտով առնում է արջը և գալիս ու դանում է. խկոյն վրայ է պրծնում, բայց նկատելով, որ ստրը ցանցի մէջ է դնում, հանգիստ կերպով միւր վայր է դնում, միւս թաթով ցանցի հանգոյցը յետ է անում և ապա միւր վերցնում ու դանդաղ քայլերով հեռանում է։

Սպիտակ արջերը երբէք չեն ընտելանում. նրանք չեն թողնի երբէք ձիւների ու սառոյցների աշխարհը և չեն մտնի մարդու նեղ, գետնափոր խրճիթների մէջ։ Հիւսիսարեւակ մարդիկ ահագին օգուտներ են ստանում սպիտակ արջի որսորդութիւնից։ Ամենից առաջ նրա փափուկ, հաստ մորթուց պատրաստում են հիանալի մուշտակ, նաև ձեռնոցներ ու ոտնամաններ. նրա միսն ու իւղը համեղ կերակուր են այնտեղի մարդկանց համար. ճարպը փառում են. նա այն դերն է կատարում այնտեղ, ինչ որ մեզանում նաւթը։ Արջի շերտից պատրաստում են պարաններ ու կապեր։

### ՈՐՈՃՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔ

Այս ընտանիքին պատկանող կենդանիները, ինչպէս արդէն անունը ցոյց է տալիս, աչքի են ընկնում իրանց կերակուր ուտելու ձևովը, հետևապէս մարսողութեան գործարանի կազմութեամբ։ Որոճողների ստամոքսը բաղկացած է չորս մասից։ Երբ կենդանին խոտն ազահուլթեամբ հաւաքում, ուտում է, խոտը գնում է առաջին բաժանմունքը, որտեղից ապա անցնում է երկրորդ մասը. յետոյ մի հանգիստ տեղ նստած ժամանակ կենդանին յետ է բերում այդ խոտը և լաւ ծամում է, մանրում, ծնոտների ինքնատիպ շարժումներով, ահա այդ գործողութիւնը կոչում է որոճումն։ Դրանից յետոյ մանրած ու թրջուած կերակուրը գնում է երրորդ և չորրորդ բաժինները։ Որոճող կենդանիների առամները շատ միօրինակ են. ստորին ծնոտի վրայ 6—8 կտրիչ, վերին ծնոտի վրայ չկայ. իսկ սեղանատամներ երկու ծնոտի վրայ էլ միշտ վեց վեց են։ Սրանց գանգը դուրս ընկած է ու նեղ ծայրով։ Ողնաշարի մէջ պարանոցի ողերը երկար են ու շարժուն։ Կողերը շատ լայն են. բոլոր որոճողների մէջ երկու մասն է զարգացած միայն՝ երրորդ և չորրորդ։

Որոճողները վախկոտ, խաղաղասէր ու արագաշարժ կենդանիներ են, մաաւոր կարողութիւնների կողմից սահմանափակ։ Ապրում են խմբերով և սիրում են ընկերովի կեանքը։ Նրանցից ոչ մէկը ջրի մէջ չի ապրում, թէև մի քանի տեսակները լաւ լողալ գիտեն։ Կերակուրը բացարձակապէս խոտային կամ բուսեղէն է։ Ի նկատի ունենալով նրանց սակաւապէտութիւնը, մարդկանց մատուցած

ահագին ծառայութիւնները և տուած մեծամեծ օգուտները, նրանց հասցրած վնասներն աննշան կը թուան մեզ:

Ա. Յ. Ծ

Բոլոր այծերը միջակ մեծութեամբ որոճողներ են: Նրանց ամրակազմ մարմինը հանդուժ է բաւականին կարճ, բայց շատ ուժեղ տոների վրայ. վիզը հաստ է, գլուխը կարճ, աչքերը մեծ և աշխոյժ, ականջներն ուղիղ, նեղ, սուր և խիստ շարժուն: Նրանք եղջիւրաւոր են և նրանց եղջիւրները շատ բազմազան ծաւրերով, ճիւղերով են լինում: Երկու տեսակ մազ ունին. փափուկ, նուրբ ու քրնքոյշ մազերը արտաքուստ ծածկուում են երկար, կոշտ և պինդ բրդով, որ երբեմն շատ երկարանում է:

Այծերը տարածուած են ամբողջ երկրի վրայ, նրանք ապրում են գլխաւորապէս սարերի վրայ և սիրում են առանձնացած տեղեր. վազում, ցատկում են զարմանալի ճարպիկութեամբ. նրանց մեծ հաճոյք է պատճառում եղջիւրամարտը: Նրանք գիշեր ցերեկ դորժունեայ, եռանդուն են. խիստ ճարպիկ են մագլցելու, ոստոստելու մէջ և այդպիսի դէպքերում ցոյց են տալիս մտածուած վրձնականութիւն: Նրանք զարմանալի քաջութեամբ անցնում են այնպիսի ժայռերի վրայով, ուր ուրիշ կաթնասուն երբէք չի կարող ոտք դնել: Լեռների մէջ ամենավտանդաւոր տեղերը նրանք հաճոյքով են ման գալիս և անսխալ ու փտտահ քայլում են. անտարբեր, նոյն իսկ ուրախութեամբ կանգնում են ահռելի անդունդների բերանին և ներքև են նայում. գլխի պտոյտ չունին:

Այդպիսի ժայռ ու քարի վրայ ապրող կենդանին շատ էլ հեշտութեամբ կերակուր չպիտի գտնէր. և իրօք այծերը իրանց ամեն մի պատառը մեծ դժուարութեամբ են ձեռք բերում. միայն նրանց ամուր ու պինդ կազմուածքը կարող է դիմանալ այդքան դժուարութիւններին: Նրանք կերակուում են խոտերով ու լեռնային—ծերպերի

մամուռներով: Շատ սիրում են աղ, ուստի և աղով հարուստ տեղեր են գնում յաճախ: Բաւականին զարգացած են զգայութիւնները. շատ լաւ լսում և հոտոտում են. տեսողութիւնն համեմատաբար թոյլ է. մտաւորը շատ քիչ զարգացած է. յիշողութիւնն աչքի չի ընկնում. սակայն էլի կարելի է դրանց մի քանի բան սովորեցնել: Մարդիկ օգտուում են դրանց խելքից ու առաջնորդ են կարգում ոչխարների վրայ:

Բերում են 1—3, երբեմն էլ 4 ձագ. փոքրիկ այծերը ծնուելիս բոլորովին կազմակերպուած են աշխարհ գալիս: Վայրի այծերի ուղերն ծննդեան հէնց առաջին օրը սարերի ու ծերպերի վրայով վազում և ոստնում են նոյնպէս արագ, ինչպէս և իրանց ծնողները: Բոլոր այծերն անկասկած օգտաւէտ կենդանիներ են. նրանց միսն ու կաշին, եղջիւրն ու բուրդը, կաթն ու պանիրը միլիոնաւոր մարդկանց հարստութեան աղբիւր են:

Ո Չ Խ Ա Ր

Ոչխարի կազմուածքը ոչ մի աչքի ընկնող առանձնաշատկութիւն չունի համեմատած այծերի հետ: Նրանց կերակուրը, համատարած լինելը նոյնն է, ինչ որ այծերինը: Բնակուում են համեմատաբար աւելի ցած տեղերում, թէև նրանց վայրի տեսակները պատահում են նաև ահագին բարձրութեան վրայ: Սրանց մի քանի տեսակները եղջիւրներ չունին ամենևին. ոմանք պոչ ունին դրմակի փոխարէն:

Ոչխարը հեզ, խաղաղ, հանգիստ, համբերատար, յիմար և ստրկասէր կենդանի է. նա վախկոտ է և շատ հեշտութեամբ ընտելանում է: Ընտանի կենդանիներից ոչ մէկն այնքան սահմանափակ խելքի տէր չէ, որքան ոչխարը. նոյն իսկ դժուար է ասել, թէ ոչխարի նկատմամբ խելքի մասին խօսք կարելի է բաց անել թէ ոչ. նա երբէք չի կարող որ և է բան սովորել, ուստի և երբէք չի

կարող իրան պաշտպանել արտաքին թշնամիներէց. դրա համար էլ ամենաանօգնական կենդանին է: Եթէ չլինէր մարդը, որ նրան խնամում և պաշտպանում է, նրա գոյութիւնը վաղուց դադարած կը լինէր: Այդ ողորմելի կենդանիները չափազանց վախկոտ են. բաւական է թեթև աղմուկը, աննշան շշուկը, որ ամբողջ հօտը թողնի, գըլուխը կորցրած փախչի: Կայծակը, որտեղ կամ փոթորիկը նրանց բոլորովին շշմեցնում է և այնուհետև մարդն անկարող է այդ յիմար կենդանիներին ազատել կորստեան անդունդից: Թիփի և բուր օրերին, նրանք անմիա կերպով փախուստ են տալիս առանց իմանալու— ուր: Քաշուում են անապատի խորքը, ընկնում են ջուրը, նոյն իսկ ծովը, շատ անգամ նրանք կանգնում են ճանապարհի կիսին, որպէս զի բուրը գայ ծածկի ամբողջ հօտը: Նրանք այնքան յիմար են, որ եթէ պատահմամբ մի ոչխար անդունդ գլորուի, բոլորը միասին կերթան կը թափուին ներքև: Այդպիսի դէպքերում դրանց առաջնորդ խելացի այծերն անգամ անկարող են նրանց յետ կանգնեցնել: Եթէ նրանց գոմը հրդեհ ընկնի, հնար չկայ նրանց այդ տեղից դուրս հանելու. բոլորն ուղղակի կերթան կրակի մէջ կընկնեն:

Ոչխարների լողութիւնն արտայայտուում է նրանով, որ նրանք սիրում են երաժշտութիւն, մանաւանդ հօփուի միօրինակ, մելամաղձոտ շափն, որի ձայնին նրանք հրահանգանք են: Ոչխարներն էլ շների նման նախօրօք իմանում են եղանակի փոփոխութիւնները, բայց ի հարկէ ոչ մի օգուտ չեն հանում այդ գիտելիքից, ընդհակառակը աւելի վախենում են, աւելի գլուխները կորցնում են:

Ոչխարի միակ պաշտպանը, տէրն ու տիրականը մարդն է, իսկ նրա թշնամիները շատ են և ահարկու: Դայլը նրա հինաուորց և երգուեալ թշնամին է. վայրի շունը նոյնպէս ոչխարաորս է. արջի համար ոչխարի միտք համեմակ պատառ է. գառները արծիւների աւար են լինում շատ անգամ: Բայց շնայած այդքան աւերումների, ոչխարներ դարձեալ կան և բազմանում են մանաւանդ նրա

համար, որ նրանց մէջ հիւանդութիւններ շատ քիչ են տարածուած: Ոչխարի տուած օգուտն ահագին է, ուտաի և մարդը անյիշատակ ժամանակներից ստրկացրել, ծառայական դրութեան մէջ է դրել նրան: Ամբողջ Եւրոպայում ոչխարի բուրդը շատ մեծ գին ունի. միտը, կաթը, պանիրը ամենատարածուած կերակուրներն են մարդկանց համար: Սակայն ազնիւ ոչխարներին չեն կթում, որպէս զի բուրդը չփչանայ: Ոչխարն ազրում է մինչև 15 տարի: Ցասն տարեկան հասակում արդէն նրա ատամներն ընկնում են և նա ձերանում է: Ընտանի ոչխարներ ամեն տեղ կան և տարածուած են. նրանց ամենայայանի տեսակը համարուում է Մերինոսեան կոչուած ոչխարը, որի իսկական հայրենիքը հիւսիսային Աֆրիկան է համարուում, որտեղից բերուել է Սպանիա և Պորտուգալիա: Մերինոսեան ոչխարը խիստ նուրբ բուրդ ունի: Այժմ Մերինոսեան ոչխարներ տարածուած են և աւելի ազնուացրած՝ Գերմանիայում: Նշանաւոր են նոյնպէս Անգլիայի ոչխարները:

Ե 2 — Կ Ո Վ

Եզները մեծ, ուժեղ և ծանրաշարժ որսօղններ են. նրանց մարմինն աչքի է ընկնում զանգուածական բնաւորութեամբ: Եղջիւրները համեմատած այծերի և ոչխարների եղջիւրների հետ, կլոր են և հարթ. դունչը լայն և ունգները աւելի յետ ձգուած: Պոչը երկար է և փլնջածև մազերով է վերջանում: Շատ տեսակ եզների պարանոցի և կրծքի մէջ տեղում կաշին կախուում է կազմերով բոխախը: Նրանց բուրդը սովորաբար կարճ է լինում և պինդ կերպով կպած է մարմնին. բայց նրանց մի քանի տեսակների մէջ մազերն երբեք բաշ են կազմում պարանոցի վրայ: Ընտանի եզներն այժմ ամբողջ երկրագնդի վրայ տարածուած են. նրանց վայրենի տեսակները ասորում են թաւ անտառներում, երկար ու լայն անապատ-

ներում, դաշտերում, բարձրաբերձ սարերի լանջերին: Լեռներում ապրող եզները ձմեռը հովիտներն են իջնում, և թափառական կեանք վարելու պատճառը մեծ մասամբ կերակուրն է, որ բացառապէս բուսեղէն է:

Եզները գիշեր ցերեկ աշխատում են. նրանք արտաքուստ ծանրաշարժ և անճուռնի կենդանիներ են, բայց իրօք շատ արագ կարող են շարժուել և երբեմն այնպիսի ճարպիկութիւն են ցոյց տալիս, որ ոչ ոքի մտքով չի անցնի: Լեռներում ապրողները գիտեն շատ լաւ մազլցել և կարող են մեծ թուխքներ անել: Բոլորն էլ լաւ լողալ գիտեն, մի քանի տեսակները նոյն իսկ շատ վարպետ կերպով լայն գետեր են անցկենում լողով: Նրանց ուժը ահագին է և նրանց կատաղութիւնն անզուսպ. նրանց անկարելի է գիմադրել զայրացած ժամանակ: Առիւծի կամ վագրի բարկութիւնն երբեմն պակաս վտանգաւոր է լինում, քան վայրի եզների կատաղութիւնը, որոնք իրանց աւերիչ ուժով ընկնում են հէնց առաջին պատահած դըժբախտ զոհի վրայ:

Եզների հոտոտելիքը բաւական զարգացած է. լսելիքը նոյնպէս լաւ է. բայց տեսանելիքը թոյլ է: Եզների մտաւոր ընդունակութիւնները ոչինչ բան են: Վայրի տեսակներն համեմատաբար խելքի նշաններ ցոյց են տալիս: Եզների կեանքը, բարձր ու կենցաղավարութեան եղանակը խիստ բազմազան է: Նրանք բոլորն համարեա հեղ և վստահելի կենդանիներ են, բայց ինչպէս ասուեցաւ, կան սարսափելի կատաղի և դաժան տեսակներ, որոնց զարհուրելի եղջիւրների առաջ ամեն ուժ փշուր փշուր կը խորտակուի. միայն գնդակն է նրանց լուեցնում: Կատաղած ժամանակ նրանք խուլ մռնչում են:

Կովը բերում է մի կամ երկու (սակաւ դէպքերում երեք, չորս) հորթ: Հորթը ուլերի և գառների պէս կաղմակերպուած է աշխարհ գալիս: Եզների կեանքը տևում է մինչև յիսուն տարի: Նրանց ամենակատաղի տեսակներն անգամ շատ հեշտութեամբ ընտելանում են և մարդկանց հլու ստրուկներ են դառնում: Սրանց տուած օգուտն ան-

չափ է: Շատ տեղերում բեռնակիր կենդանին բացառապէս եզն է. շատ տեղեր նրանք հեծնելու համար են ծառայում, մեքենաներ են շարժում, իսկ նրանց միսն ու կաշին, ոսկորներն ու եղջիւրները, մազն ու սմբակները, կովի կաթնն ու պանիրը, իւզը—այդ բոլորը խիստ անհրաժեշտ են դարձնում եզների և կովերի ներկայութիւնը մարդկանց շրջանում: Եզները շատ բազմատեսակ են. նրանց մէջ են մտնում գոմէշները, զուբրը, բիզոնը, Աֆրիկայի սապատաւոր եզը: Ընտանի տեսակներից ամենից գովականն ու ընտիրը շտախանդական՝ ձիւնի նման սպիտակ եզն է:

Ո Ւ Ղ Տ

Անապատի նաւ—ինչպէս շատերը պատկերաւոր կերպով կոչել են նրան: Աֆրիկայի ընտանի կենդանիներից ամենից օգտակարն է. նրա տուած օգուտն ահագին է, մատուցած ծառայութիւնները՝ մեծ, բայց նրա ընաւորութիւնը չունի իւր մէջ ոչինչ գրաւիչ. յիմար է ուղտը, անհաճոյ և դժկամակ: Ոչ մի արաբ չի գովել նրան իւր երգերում:

Միասապատ ուղտը շատ մեծ որոճող է. բարձր, երկար մարմնամասերով, երկարատու. նրա անեղջիւր գլուխը բաւականին փոքր է, իսկ դունչը դուրս ընկած: Աչքերը մեծ են և բութ հայեացքով. ականջները խիստ փոքր են և յետ ձգուած: Վերին շրթունքներն այնքան շարժուն են և ցած են գալիս, որ թւում են իբրև ստորին շրթունք: Վազելու ժամանակ նրա անճուռնի շրթունքներն այս ու այն կողմն են շարժուում: Վիզը խիստ երկար է ու տձև. փորը շատ մեծ է: Սապատը ուղղաձիգ է, բայց տարուայ մէջ բազմիցս փոփոխական: Քանի կերակուրը առատ լինի, այնքան սաքաթը կը մեծանայ և ընդհակառակը: Անձրևային եղանակներին, երբ հիւթալի բուսականութիւնն առատանում է, ուղտի սապատը զարմանալի մեծութեան

է հասնում, երբեմն 30 գրուանքայ: Ոտները շատ անկարգ են դասաւորուած և յետին ոտները ընդհանուր կազմից կարծես բոլորովին դուրս են մնացած, որով և ուղտը աւելի անճառնի է երևում: Բաւականին երկար ու լայն մատները մինչև վերջը ծածկուած են կաշիով: Մազերը շատ փափուկ, բրդոտ ու երկար են գլխի, ծոծրակի, բիւի, թեւերի և սապատի վրայ, պոչի ծայրին նրանք աւելի հաստ են:

Ուղտը անապատի կենդանի է. նրա հայրենիքը անապատների բուն հայրենիքն է՝ Աֆրիկան: Քարքարոտ տեղերում դժուարութեամբ է դիմանում նա: Ուղտի կերակուրը բացառապէս բուսեղէն է. ուղտը բաւականանում է ամենակոշտ կերակրով. ամբողջ շաբաթներով նա կարող է ապրել անպէտք ու չոր խոտերի մնացորդներով: Աֆրիկայում ուղտերն յաճախ ուտում են ճիւղածածկ տներ և փշատերև բոյսեր, եթէ ուղտի կերակուրը առատ լինի և հիւթալի, նա շաբաթներով կարող է անշուր մնալ, եթէ բարձուած կամ յոգնած չէ: Ուղտերը անջրգի անապատներում յաճախ ծարաւի անլուելի պահանջին են ենթարկուում: Եւ հետաքրքիր է նայել, երբ քաղցած ու յոգնած ուղտերը երկար գրկանքից յետոյ վերջապէս մտնենում են որ և է ջրաւազանի: Գժի պէս, ականջ պատառոտող ձայներով թափուում են ջրի մէջ: Աղը զգալի կերպով բաց է անում նրանց ախորժակը:

Ուղտերն արագաշարժութեան կողմից հազիւ թէ տեղի տան ձիերին: Նրանց մէջ լսողութիւնը շատ զարգացած է, իսկ հոտառութիւն համարեա թէ չունին. ուղտն իւր յիմար աչքերով այնքան էլ սրատես և հեռատես չէ: Նոյն փիճակի մէջ են նաև մտաւոր կարողութիւններն ու բնաւորութիւնը: Ուղտը յիմար կենդանի է, մանաւանդ յամառ և քմահաճ: Նրան անկարելի է բան հասկացնել, երբ նա զայրացած է. եթէ նրա վրայ նստած մարդը ուզենայ ձախ ելթալ, ուղտը ավ կուզգուի. եթէ ուղենայ կանգնել, ուղտը բոլոր ուժով առաջ կընթանայ. եթէ ուզենայ վազել, ուղտը կանգ կառնի: Եզը նրա հետ համեմատած վերին աստիճանի ազնիւ և յարգելի կենդանի է:

ոչխարը՝ ուղղակի խելօք, իսկ էջը իւր ամբողջ յամառութեամբ մէկտեղ՝ սիրալիր: Եւ եթէ չլինէր այն օգուտը, որ տալիս է ուղտը մարդուն, մարդիկ վաղուց կազատուէին այդ յիմար, յամառ և սեահոգի կենդանիներից: Ուղտի միւր պինդ է և բաւականին անհամ, բայց և այնպէս շատ տեղերում ուտում են. բուրդից հազուատեղէն են պատրաստում. բայց դրանք ոչինչ են այն ահագին օգուտի հետ համեմատած, որ մարդ ստանում է նրանցից գործ դնելով ուղտերին իբրև բեռնակիր անասունների:

Ը Ն Չ Ո Ւ Ղ Տ

Արձօղների ընտանիքին պատկանում է նաև աշխարհիս ամենաբարձր կաթնասունը՝ ընձուղտը: Այդ ցեղի միակ ներկայացուցիչը աֆրիկական ընձուղտն է, որ իւր անհամեմատ բարձր ոտներով, երկար ու բարակ վզով, հաստ, պինդ իրանով, գեղեցիկ, բարեկազմ գլխով, մեծ ու գեղեցիկ աչքերով տարօրինակ տպաւորութիւն է թողնում տեսնողի վրայ: Նրա գլուխը կարող է գետնից բարձրանալ մինչև 2<sup>1</sup>/<sub>2</sub> — 3 սաժեն: Այժմ ընձուղտներն ապրում են Աֆրիկայի միջին և հարաւային մասերում, հիւսիսային լայնութեան 17<sup>0</sup>-ից մինչև հարաւային լայնութեան 24<sup>0</sup>-ը: Նրա տարածման շրջանն ուրեմն մի կողմից ձգուում է մինչև Սահարայի անապատը, միւս կողմից մինչև Օրանժ գետը: Աֆրիկայի այդ մասերում ձգուում են հինաւուրց, կուսական անտառներ, սրտեղի ծառերը ծածկուած են մամռանման բոյսերով ու կոշտացած սունկերով: Նրանց մարմնի գոյնը խիստ նման է շրջապատող առարկաներին, մանաւանդ ծառերի փայտալի բներին, այնպէս որ այդ տեսակ բների մօտ կանգնած ընձուղտը շատ դժուարութեամբ է նկատում որսորդի կողմից և շատ անգամ ծառերը ընձուղտի տեղ է ընդունում և ընդհակառակը:

Ընձուղտները պատահում են սովորաբար փոքրիկ

խմբերով 8—15 հատ: Ընձուղտի գնացքը բաւականին տարօրինակ է և այլակերպ. նրա քայլուածքը մեծ մասամբ բողկացած է տռանձնակի մեծ թռիչքներից. նրան հալածելու և հասնելու համար որսորդը պիտի ունենայ արագօտն նժոյգ: Նա սովորաբար յոգնեցնում է իրան հալածող բոլոր կենդանիներին. և փախչելիս նա իւր երկար պոչով խփում է շարունակ իւր մէջքին և յաճախ յետ է դառնում և իւր խելացի, գեղեցիկ աչքերով նայում է իրան հալածողին:

Ընձուղտը հանգստանում է սովորաբար զիշերը. նա ուղտի նման ծալում է իւր առաջին ոտները և այդպէս պառկում է. քնում է շատ կարճ և նրա քունը շան քնի նման դիւրազգաց է: Նա կերակրում է բացառապէս բուսեղէնով. ճիւղերն ու սաղարթները նրա սիրած կերակուրն են կազմում: Նրա լեզուն այնպէս է յարմարեցրած, որ նա կարող է ծառից վերցնել ամենափոքր տերևն անգամ: Առ հասարակ նրա լեզուն այն դերն է խաղում ընձուղտի համար, ինչ դեր որ կնճիթը փղի համար: Կենդանաբանական այգիներից մէկում ընձուղտը տիկիներին գլխից ասեղներ և գնդասեղներ էր վերցնում իւր լեզուով, զարդեր էր պոկում, մօտենում, շոյում էր նրանց: Ընձուղտը ուղտի պէս կարող է երկար ժամանակ առանց ջրի մնալ: Տարուայ երաշտ ժամանակը, երբ ծառերի վերայ տերևներ չեն լինում, ընձուղտները մի քանի մղոն ճանապարհ կտրելով գնում են ջրաւազաններն ու ջուր խմում: Ընձուղտն իւր կերակուրը կանգնած է որոճում և ոչ այնքան երկար, ինչպէս այդ անում են միւս որոճողները:

Ընձուղտի մտաւոր ընդունակութիւնները բաւականին բարձր են. նա չափազանց բարեհոգի, խաղաղասէր, հեզ ու գրաւիչ կենդանի է և սիրում է խաղաղութեամբ ապրել բոլոր նրանց հետ, որոնք նոյն ցանկութիւնն ունին: Իսկ կարիք եղած դէպքում նա գիտէ նաև շատ լաւ պաշտպանուել. նրա ջլոտ, երկար ու հզօր ոտքերի հարուածը փտանգաւոր է նոյն իսկ առիւծի համար:

Մեծ ընձուղտներին որսալը և մանաւանդ նրանց

ողջ ողջ բռնելը բաւականին դժուար է: Ընձուղտ որսալու համար հարկաւոր է ամբողջ շաբաթներով դաշտերն ու անապատներն ընկնել, գեղեցիկ արագավազ ձիեր վերցնել, ուղտերի ու կովերի մեծ պաշար ունենալ և արաբներից կամ տեղացիներից լաւ հմուտ առաջնորդներ վերցնել: Փոքրիկ ընձուղտները բռնուելու ընթացքից սկսած մեծ խնամատարութիւն են պահանջում, ուստի և կովերն ու ուղտերը նրանց կաթ ու ջուր են մատակարարում: Որսորդներից մէկը գեղեցիկ կերպով նկարագրում է իւր որսը «Ոչ մի գրիչ, ոչ մի խօսք չի կարող նկարագրել այն զգացումը, որ մարդ զգում է այդ ահագին կենդանիների նախրի մէջ մտնելիս: Վախեցած ընձուղտները ամեն հընար գործ էին դնում ազատուելու և նրանք վազում էին առանց ուշադրութիւն դարձնելու ճանապարհին պատահած արգելքների վրայ: Նրանք ընթանում էին բաւականին դանդաղ, իսկ իմ նժոյգը սլանում էր նրանց յետւից և հետզհետէ ես մօտենում էի ընձուղտներին: Վերջապէս ձիս մտաւ նրանց մէջ և ես ընտրելով նրանցից մէկին, ամենայն արագութեամբ հալածել սկսեցի: Ընձուղտը նկատելով իմ ոգևորութիւնն ու հետամտութիւնը ամբողջ ուժով սկսեց փախչել և ճանապարհին պատահած ծառերի ճիւղերն ու սաղարթները ջարդում, պոկում էր և իմ ճանապարհին ձգում: Վերջապէս 8 քայլի վրայ հասայ նրան և կրակեցի երկու անգամ: Ըստ երևոյթի այդ երկու գնդակներն էլ առանձին ցաւ չպատճառեցին նրան. երկու ուրիշ գնդակից յետոյ ես վայր իջայ ձիուցս և հիացայ առաջիցս գանդալ կերպով գնացող կենդանիով: Ինձ թւում էր, թէ այդ բարի կենդանին իւր մեծ, խելացի և գլխոտ աչքերով ինձ խնդրում, աղաչում էր խըզճալ. և ես մի րոպէ ուզում էի խղճալ նրան և չսպանել. բայց որսորդական արիւնն իսկոյն շարժուեց մէջս և նոր գնդակը մեխուելով ընձուղտի գեղեցիկ վզի մէջ, վայր տապալեց նրան: Արեան յորդ հեղեղ դռնս պրծաւ նրա վերքից. հսկայական ոտքերը դողդողացին. և մի րոպէ ես, ահագին կենդանին անչնչացաւ»:

Ընձուղտի միսն ուտում են տեղացիները. բայց որսորդներն աւելի շատ ցանկանում են ողջ բռնել ընձուղտին, որովհետեւ իբրև տարօրինակ ու հազուադէպ կենդանի, նա մեծ գին ունի:

### Հ Ի Խ Ի Ս Ս Յ Ի Ն Ե Ղ Ջ Ե Ր Ո Ւ

Սա իւր արտաքինով աւելի շատ տգեղ, անձուռնի է, քան գեղեցիկ. յատկապէս տգեղ է գլուխը. ոտքերն համեմատաբար ցածր են. պոչը կարճ: Աչքի է ընկնում իւր չափազանց լայն սմբակներով և երկար, բութ յետին ճանկերով: Բնակում է հիւսիսային աշխարհներում 60<sup>0</sup>-ից հիւսիս, թէպէտ տեղ տեղ պատահում է նաև հարաւ: Վայրի տեսակը պատահում է Սկանդինաւիայի, Լապլանդիայի և Ֆինլանդիայի լեռնոտ մասերում, ամբողջ հիւսիսային Սիբիրում, Գրենլանդիայում և Աֆրիկայի հիւսիսային լեռներում: Ապրում է նաև Շպիցբերգէսում:

Հիւսիսն ընտրելով իրան հայրենիք, նա բնականաբար պիտի յարմարուէր ցուրտ և սառցային աշխարհների կլիմային, կեանքի եղանակին: Յիրաւի, նրա մարմինը ծածկուած է թաւ ու թանձր մազածածկ մորթով: Վզի առաջին մասում մազերը բաշի նման յաւելուած են ձեւացնում, որ երբեմն հասնում է մինչև կուրծքը. երբեմն այտերի մազերն էլ են երկարում: Մորթու գոյնը նայած տեղին և ժամանակին փոխում է: Այդ փոփոխութիւնն սկսում է միշտ գլխից, աչքերի մօտից և տարածում է նաև միւս մասերը: Մազերը շատ խիտ են լինում, որով և եղջերուն յարմարութիւն է ունենում սարերի ու ձիւների մէջ ապրել:

Հիւսիսային եղջերուն սարերի իսկական զաւակն է. նա անտառ չի սիրում և պատահում է միայն մամուռ պատ ու արպեան ուրիշ բոյսերով ծածկուած լեռնաշղթաների վրայ: Նա եբբէք չի մօտենում անտառի շերտին և ամեն կերպ խոյս է տալիս անտառից: Բայց Սիբիրում նա պա-

տահում է նաև անտառներում: Չմեռը, երբ ցուրտը սաստկանում է, նա թողնում է բարձր լեռներն ու ժայռերը և իջնում է անտառները ցրտից մի փոքր պատուարուելու համար: Գարնանը նա կրկին թողնում է անտառները և դիմում լեռները: Եղջերուները ճանապարհորդելիս խմբերով են լինում և լաւ եղանակներին նրանց խմբերը շատ անգամ հազարից անցնում են: Նրանց երթեկութեան ճանապարհը միշտ միևնոյնն է, ճանապարհին նրանք անցնում են գետերով. նրանք հիանալի լողալ գիտեն:

Եղջերուների բոլոր արտաքին զգայութիւնները շատ լաւ զարգացած են. նա հիանալի հոտ է առնում և 500—600 քայլի վրայ նոյնչափ լաւ է լսում, որչափ և նոյն ցեղի միւս տեսակները: Եղջերու որսողները միաբերան վիսյում են, որ նա շատ խելօք և զգոյշ կենդանի է. երբէք չի թողնում մօտենալու իրան:

Նրանք կերակրում են բուսեղէնով այն էլ մի քանի տեսակով միայն. նրանք շատ ջոկող են կերակրի նկատմամբ և ամեն բոյսի բերան չեն խփի: Չմեռը, երբ ձիւնը ծածկում է գետինը, եղջերուն իւր սմբակներով յետ է անում ձիւնը և նրա տակից բոյսերի արմատներ, զանազան խոտեր է հանում, ուտում: Նա գլխաւորաբար երեկոներն ու առաւօտներն է դուրս գալիս կերակրի, իսկ կէսօրին հանգստանում է: Շատ դժուար է այն որսորդի բանը, որ գործ ունի եղջերուի հետ: Այն բարձունքների վրայ, որտեղ ապրում է այս զգոյշ կենդանին, չկան ոչ հովաւական խրճիթներ, ոչ տնակներ, որտեղ կարելի լինէր հանգստանալ և գիշերել: Սարերը շատ տեղ անանցանելի են իրանց սահուն և լարժուն քարերի պատճառով. անձրևների առատութիւնն ու միւս կողմից ցրտի սաստկութիւնը ոչինչ գրաւիչ բան չեն թողնում որսորդի համար: Հարկաւոր է խիստ զգոյշ լինել եղջերու որսալիս, որովհետեւ ինքը եղջերուն էլ խիստ զգոյշ է: Շատ դժուար է մօտենալ նրան 200—300 քայլից աւելի, որովհետեւ թեթև շուկն անգամ նա իմանում է և իսկոյն

փախչում: Նրա գոյնը սովորաբար այնքան նման է լինում շրջապատող բնութեանը, որ մօտ պառկած եղջերուին նկատելը խիստ դժուար է լինում. որսորդը շարունակ քարերի կոյտը հեռուից եղջերուի տեղ է դնում. շատ անգամ էլ եղջերուներին քարերի տեղ է ընդունում և առանց ուշադրութեան մտեանում է 200, 300 քայլ, մէկ էլ տեսնում է, որ իւր մօտից թողնում, փախչում է եղջերուների նախիրը: Կրակելն արդէն ուշ է լինում: Որսորդներին փորձից յայտնի է, որ հրացանի առաջին կրակոցը շժմեցնում է եղջերուների ամբողջ նախիրը և նրանք փոխանակ իսկոյն փախչելու, մի րօպէ սպասում են, շուտ րած դէս ու դէն են նայում և ապա ամբողջ ուժով փախչում են: Դրա համար սովորաբար որսորդները մէկ մէկ չեն գնում, այլ 2—3 հոգով: Երբ առաջին որսորդն արձակում է, դրանից անմիջապէս յետոյ երկրորդը, ապա երրորդը: Եւ դեռ յաջող ու ճարպիկ որսորդները կարողանում են երկրորդ անգամ լցնել իրանց հրացանները և արձակել: Այդպիսի դէպքերում պատահում է, որ նախիրից 5—6 եղջերու է սպանւում մի անգամից:

Ամերիկայում և Սիբիրում բոլորովին այլ կերպ են որս անում: Թէ Լապլանդիայում և թէ Սիբիրում տեղացիների կերակուրը բացառապէս եղջերուի միսն է: Բացի այդ, եղջերուն է նրանց պահողը, նրանց ընտանի անասունը և փոխադրութեան միակ միջոցը: Ամբողջ ժողովուրդներ ապրում են նրանով և այդ հիւսիսաբնակ ժողովուրդների կեանքը կը դադարէր գոյութիւն ունենալուց, եթէ վերջանար յանկարծ այդ կենդանու ցեղը: Փինլանդացու կամ լապլանդացու համար եղջերուն աւելի անհրաժեշտ և կարևոր է, քան մեղ համար կովը կամ ձին, քան արաբի համար՝ ուղտը: Սրանից յետոյ պարզ է, թէ ինչպիսի հպարտութիւն է լապլանդացու համար եղջերուների նախիրը: Այդ երկրներում եղջերուն մեծ մասամբ ընտելացրած է, իսկ Սիբիրի և Ամերիկայի լեռնոտ բարձր տափաստաններում պատահում է վայրի տեսակը: Եւ հէնց այդ վայրի տեսակն էլ ահագին

օգուտներ է տալիս սիրիւրացուն և ամերիկացուն: Արդէն յիշեցինք, որ եղջերուները ահագին խմբերով տարուայ մէջ մի քանի անգամ տեղափոխւում են, և Սիբիրում օգուտւում են հէնց այդ տեղափոխութիւնից և ահագին քանակութեամբ որսում են: Երբ կենդանիները մեծ բազմութեամբ մօտենում են գետին և ընկնում ու լողում են միւս ափն անցնելու համար, որսորդները փոքրիկ բաւտերով վրայ են պրծնում և սկսում են անխնայ կոտորել նրանց. և այս դէպքում նրանց զէնքը ոչ թէ հրացանն է, այլ սուր, երկսայրի գաշոյնը: Նրանք մորթոտում, վիրաւորում են աջ ու ձախ, և երբ ամբողջ նախիրն անցնում է, որսորդները գնում ջրից հանում են վիրաւորներին և սպանուածներին: Բայց որտալու այդ եղանակը խիստ վտանգաւոր է, որովհետեւ եղջերուների նախիրների մէջ այնքան էլ հեշտ չէ բաժանում գործեր, Ամեն րօպէ լաստը շուռ գալու վտանգի մէջ է. եղջերուները ամեն կերպ պաշտպանւում են և շատ անգամ որսորդը զոհ է գնում իւր յանդուգն ձեռնարկութեան:

Նոյն կերպ որսում են և ամերիկացի հնգիկները: Այնտեղ էլ եղջերուն գոյութեան միակ միջոցն է: Գարնանը եղջերուների ահագին խմբերը 10 հազարից մինչև 100 հազար, թողնում, հեռանում են գէպի Սաուցեալ օվկիանոսի ափերը. այնտեղ նրանք ապահով պատասպան են գտնում միջասների և շոգի դէմ: Եւ կերակուրում են հիւսիսային հիւթալի բոյսերով, իսկ աշնանը նորից դառնում են իրանց տեղը: Վերադարձին նրանց մէջքի վրայ ու կողերին 3—6 դժաշափ հաստութեամբ իւղ է պատած լինում, դրա համար էլ հնգիկներն այդ ժամանակ են որսի դուրս գալիս: Եւ այդ խեղճ կենդանուն դարան են դնում, ցանցով են որսում, ջրի մէջ են սպանում, գաշոյնով են մորթում և ամեն կերպ հալածում են: Միւս կողմից նրանց նախիրներին հետևում են ահագին բազմութեամբ գայլերի վահմակներ, որոնք ամեն օր մեծ քանակութեամբ եղջերու են յափշտակում: Հնգիկները մեծ հմտութեամբ գիտեն գործ ածել վայրի եղջերուներին այն-

պէս, ինչպէս այդ անուամբ են լապլանդացիք ու Փինլանդացիք ընտանի եղջերուների նկատմամբ: Եղջերուի եղջիրները, ոսկորը, մազերը, միսն ու իւղը, ուղեղը, ջիւերը, մորթին—բոլորը բոլորը պիտանի առարկաներ են հնդիկի համար: Սիբիրացու և ամերիկացու համար եղջերուի ոչ մի կտորը ի դուր տեղը չի կորչում: Այդ է պատճառը, որ վայրի եղջերուին ամեն կերպ հալածում և սպանում են, իսկ ընտանի եղջերուին մեծ խնամքով պահում, պահպանում են:

Բացի մարդուց, հիւսիսային եղջերուն ունի ուրիշ շատ թշնամիներ: Ամենից առաջ գայլերը, որոնց վոհմակները շարունակ հետևում են եղջերուների նախիրներին և շատ անգամ եղջերուների տէրերին ստիպում են թողնել այդ պարապմունքը և ձեռք քաշել եղջերուներից, որովհետև անխնայ կերպով կոտորում են: Բացի գայլից նրանց մեծ մնաս են հասցնում նաև գայլի միւս բարեկամները: Իսկ միջատները, խայթող ու անհանգիստ մոծակները նրանց թափառումների ու տեղափոխութիւնների իսկական պատճառ են հանդիսանում: Տարուայ ամենատաք ժամանակը (ցերեկն այնտեղ ամիսներ է տևում) նրանք տանջում, չարչարում են եղջերուներին, վէրքերի մէջ ձուեր են ածում, բշտում է նրանց մարմինն ամբողջապէս ու խոցալից դառնում և ամենասոսկալի ցուեր պատճառում կենդանուն:

Լապլանդացու կեանքն ինչպէս ասացինք ամբողջապէս եղջերուից է կախուած. դրա համար ոչ մի ցեղ այնքան հոգ չի տանում այդ կենդանու վրայ, որքան լապլանդացին: Նրանց մէջ շատերը կան, որոնք 40, 50 հազարանոց նախիրներ ունին և դեռ այդ ահագին բազմութեան մէջ նրանք գիտեն ճանաչել իրանց նախիրները, ջոկել իրանց եղջերուներին ուրիշներից: Լապլանդացու համար նրա նախիրները հպարտութեան և բաւականութեան աղբիւր են, հարստութիւն և պարծանք են, բայց միևնոյն ժամանակ տանջանք ու ծանրութիւն: Լապլանդացու կեանքը, ապրելու տեղն ու եղանակը ամբողջապէս եղջերուի տրա-

մադրութեան տակ է: Երբ գալիս է տարուայ շոգ ժամանակը, եղջերուները թողնում հիւսիս են քաշուում և լապլանդացին էլ ստիպուած է իւր նախիրների հետ գնալ, հիւսիս քաշուել, որովհետև առանց նրանց նա չի կարող ապրել: Եւ այդ ճանապարհորդութեան ժամանակ ինչեր ասես չի քաշում խեղճ, աղքատ ու տոկուն լապլանդացին. ինչ դժուարութիւններ, ինչ կռիւ ցրտի ու բքի դէմ, ինչ տանջանք քաղցի ու ծարաւի համար, նա պիտի տանի այդ բոլորը ի սէր իւր նախիրների, ի սէր իւր սեփական դոյութեան: Եւ այդպէս լինում է ամեն տարի: Հիւսիսային եղջերուների նախիրները շատ սիրուն և փառահեղ տեսարան են ներկայացնում. կենդանիները իրար կողք կողքի խիտ շարքերով գնում են արագ քայլերով, շատ անգամ այնքան արագ, որ վազքի է նմանում: Նախիրների կողքերից գնում են հովիւները, իսկ չորս կողմից հոտապահ շները, որոնք այնքան նախանձախնդրութեամբ են հետևում տիրոջ հարստութեանը. նրանք աչալուրջ կերպով հսկում են, որ եղջերուները դուրս չգան շարքից, շատ չհեռանան նախիրից, և այս կամ այն եղջերուին բռնելու դէպքում օգնում են իրանց տիրոջը:

Այնտեղ ճանապարհի վրայ հեռու հիւսիսում լապլանդացին պարապում է իւր պարզ, անպաճոյճ տնտեսութեամբ. նա եղջերուի կաթից պանիր և իւղ է շինում, միսը չորացնում է, ջլերից պարաններ ու թելեր է շինում, մորթուց մուշտակներ, ձեռնոցներ և ստնամաններ է պատրաստում: Բացի դրանից լապլանդացին գործ է ածում իւր եղջերուին նաև իբրև բեռնակիր անասունի: Առանձին յատուկ պատրաստած սահնակների է լծում նա և սահնակը ձիւնի վրայ թռչում է յաճախ ամեն մի ժամում 8—10 վերստ:

Շատ փորձեր են եղել եղջերուին բազմացնելու նաև միջին, բարեխառն գօտու երկրներում. բայց չի յաջողուել: Հիւսիսային եղջերուի տեղը սառոյցների և մամուռների ախարհն է և նրա տէրը՝ աղքատ, ժրջան, չարքաչ Փինլանդացին, լապլանդացին, սիբիրացին ու հնդիկն է:

ԿՐԾՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔ

Այս ընտանիքը չափազանց հարուստ է սեռերով և տեսակներով. այդտեղ են սկիւռները, ճագարները, նապաստակները, Սիբիրիայի մուկը, գետնափորը, առնէտը, կողզը, հասարակ մուկը և այլն: Նրանց կազմուածքի և մեծութեան ընդհանուր բաղադրանութեան մէջ կայ մի գիծ, որ յատուկ է բոլոր կրծողներին — դա նրանց ատամնաշարն է և ատամների ինքնատիպ զարգացումը: Ատամնաշարի պատկերն հետևեալն է.  $\frac{3-0-2-0-3}{3-0-2-0-3} = 16$ . կտրիչները աւելի մեծ են միւս ատամներից, բոլոր ատամները շատ պինդ են, ամուր և սուր: Բայց այդ ամուրութիւնն ու սրութիւնը շուտով կանհետանային նրանց ամեն ինչ կրթման հակումի պատճառով, եթէ նրանց ատամները չափազանց զարգանալու յատկութիւնը չունենային: Կտրիչները մանաւանդ խիստ շատ են ածուս, այնպէս որ եթէ կրծողներից մէկը սրոջ ժամանակ չկրծէր, նրա կտրիչներն այնքան կը մեծանային, որ նա այլ ևս անկարող կը լինէր բերանը փակել և կենդանին կը սատկէր: Կրծողների արտաքին զգայութիւնները շատ էլ զարգացած չեն. նոյնը և մտաւոր ընդունակութիւնների նկատմամբ: Նրանց կերակուրը մեծ մասամբ բուսեղէն է, ուտում են արմատիք, կեղև, տերևներ, ծաղիկներ, պտուղներ, խոտ, հացահատիկներ: Մի քանի տեսակներն ուտում են նաև միս: Նրանք իրանց բունը շատ ճարպիկ կերպով են շինում գետնի տակ և ձմեռ ժամանակը թմրում են: Կրծողների աճումը չափազանց արագ է կատարւում և արգասաւոր է: Դրանով միայն կարելի է բացատրել այն հանգամանքը:

որ կրծողները թէպէտ և անհաշիւ թշնամիներ ունին կաթնասունների մէջ, սակայն այդքան մեծ քանակութեամբ ամեն տեղ երևում են: Կրծողներն աշխարհի բոլոր մասերում երևում են և նրանց պատճառած աւերմունքն ըզրգալի է ամեն տեղ:

ԸՆՏԱՆԻ ՄՈՒԿ

Իսկական կրծողի տիպը մեր ընտանի մուկն է: Մուկն համարեա համատարած է. սա խիստ ուրախ, կայտառ և գիւրաշարժ կենդանի է, որի արտաքինը շատ գրուել է: Նրա ամեն մի շարժումը չափազանց ճարպիկ է ու շնորհալի. նա ընդունակ է ամեն տեսակ ձեռնարկութիւնների: Սիրում է երաժշտութիւն և ինքն ևս աշխատում է դեղձանիկի նման երգել: Ընտանի մուկը ընդհանուր առմամբ բարեհամբոյր և գրաւիչ կենդանի է: Բայց նրա գրաւչութիւնը կորչում է, երբ ի նկատի առնենք նրա որկրամուրութիւնը և այն մեծ վնասները, որ առաջ է գալիս նրա նուրբ ճաշակից և ամեն բանի վրայ իւր ատամների ուժը փորձելու ցանկութիւնից: Նա ամենայն սիրով ամբողջ գիշերներով կաշխատի հաստ գունների և արկղների վրայ, որպէս զի ծակի. և վերջը ծակում է: Ոչ մի պահարան, ոչ մի փականք նրա ուշադրութիւնից չի փախչում և նա գիտմամբ ընտրում է իւր համար ամենահամեղ պատանները: Զուր չի խմում, բայց գրա փոխարէն շատ մեծ հաճոյքով քաղցր խմիչքներ է վայելում: Սակայն այդ բոլորը շատ այնքան էլ մեծ վնաս չէր հասցնի մարդուն, եթէ մուկը ամեն բան կրծելու մի բնական հակումն չունենար: Ամենաթանկագին գրուածքներն ու շորերը այդ չարածճի կենդանիների հետամուտութիւնից չեն ազատոււմ: Նա թըշնամի է մանաւանդ գրքերի ու ձեռագրերի:

Ընտանի մուկը չափազանց արագ է աճում. տարուայ մէջ 5—7 անգամ ձագ է բերում և իւրաքանչիւր անգամ 5—8. այնպէս որ մի տարուայ մէջ մի զոյգից կարող է

առաջ գալ մինչև հազար մուկ: Մուկը իւր բունը շինում է մի յարմարաւոր անկիւնում, ծղօտից, խոտերից, թղթից ու փետուրից և ուրիշ փափուկ առարկաներից: Փոքրիկ մկները 10—15 օրից յետոյ չափահաս են դառնում և անկախ կեանք են վարում: Մայրը քնքշաբար սիրում է իւր ձագերին: Մկների բազմաթիւ թշնամիներից ամենից կատաղին և անգուլթը կատուն է:

Կ Ո Ւ Ղ Բ

Կուղբը ամենամեծ կրծող կենդանիներից մէկն է: Նա տարածուած է Ասիայի, Եւրոպայի և Ամերիկայի այն բոլոր երկրներում, որոնք ընկած են հիւսիսային լայնութեան 33<sup>0</sup> և 68<sup>0</sup>-ի մէջ: Հասակաւոր կուղբը ունի 75—95 սանտիմետր երկարութիւն, պոչը 30 սանտիմետր, մարմնի բարձրութիւնը 28 սանտ. իսկ քաշը 40—50 գրուանքայ: Կուղբի մարմինը կարճ է, անճուռնի և հաստ, յետևից բաւականին հաստ, մէջքը դուրս ընկած, փորը ուռած և կարծես կախ ընկած, վիզը կարճ ու հաստ. գլուխը յետևից լայն, առաջից նեղ, տափակ գանգով ու կարճ, բութ դնչով: Ոտները կարճ են և շատ ուժեղ. յետևի ոտները մի փոքր մեծ են քան առաջիները: Թաթի վրայ հինգ հինգ մատներ կան, յետևի թաթի մատները իրար հետ միացած են լայն լողաթաղանթով: Երկարաւուն ականջները փոքր են և բոլորովին համարեա ծածկուած մորթու մէջ և կարող են ծալուել. փոքրիկ աչքերը արտևանունքներ ունին: Բացի գարշապարից, լողաթաղանթից և պոչի <sup>2</sup>/<sub>3</sub> մասից կուղբն ամբողջապէս բրդոտ մորթով է ծածկուած. նրա մորթը շատ թաւ, փափուկ է: Վերին ծնոտն ունի նոսր, կարծր ցցուած բեխեր, մէջքի մորթը մութ շագանակի գոյն ունի, փորի կողմն աւելի պայծառ: Պոչի առաջին մասը ծածկուած է շատ երկար բրդով, իսկ վերջին մասը լերկ է, չոր ու կարծր: Կուղբի ընդհանուր

գոյնը կամ սև է համարեա և կամ աւելի գորշ: Ճերմակ կամ խայտաբղէտ կուղբ շատ քիչ է պատահում:

Կուղբը յայտնի է կաթնասունների մէջ որպէս հմուտ ճարտարապետ. նա վարպետութեն բուն շինող կենդանիներից է: Նա ապրում է գլխաւորապէս լճերի և գետերի ափին և նա իւր բունն հետևեալ կերպով է շինում: Մըտնում է գետի մէջ, ջրի միջից ծակում է գետի ափը, գնում է դէպի գետինը հորիզոնական գիրքով, ապա գետնի տակից դէպի վեր է բարձրանում ուղղահայեաց կերպով, բայց չի հասնում գետի արտաքին մասին, չի ծակում գետինը. սակայն այնքան է վեր գալիս, որ բնի բարձրութիւնը վեր լինի ջրի մակերևոյթից: Ահա այդտեղ շինում է նա իւր հռչակաւոր բնակարանը. ջրի վարարումից փրկելու համար իւր բնի առաջ թոււմբեր է շինում. և յետոյ այս թոււմբերի յետևում սկսում է շինել իւր բունը, որ 1—2<sup>1</sup>/<sub>2</sub> ոտնչ. բարձրութիւն ունի և 3—4 ք. արշին տարածութիւն է բռնում: Նա իւր բնակարանը կառուցանում է ծառերի ճիւղերից, բաւականին հաստ փայտերից, ցեխով լաւ սուաղում է և ջրի համար անթափանց դարձնում: Կուղբի բնակարանը բաղկացած է լինում մի քանի բաժանմունքներից. մառան կամ շտեմարան, որտեղ նա պահում է սովորաբար ջրային վարդերի արմատներ, ուրիշ զանազան բոյսեր, ճիւղեր, սաղարթներ՝ ձմրանն ուտելու համար: Միւս բաժանմունքը գմբէթաձև յատակ ու առաստաղ է ունենում, որտեղ ապրում և քնում է կուղբը: Եւ եթէ ջրի վարարումից իրան և իւր բնին վաանգ սպառնայ, իսկոյն վերևի կողմից բնի պատը ծակում ու փախչում է դուրս: Շատ անգամ կուղբը 3—4 տարի շարունակ միևնոյն խրճիթի մէջ է ապրում: Ուրիշ անգամ էլ հին խրճիթի կողքին շինում է նորը և առանձին անցքերով միացնում է հնի հետ: Մեծ խրճիթները շինում են խմբովին, իսկ հատ հատ կուղբերը ապրում են հասարակ խրճիթներում այնպէս, ինչպէս ջրաղուէսները: Ուրեմն կուղբի գնալու գալու ճանապարհը գետի, ջրի միջով է. նա ջրի միջով է տանում իւր

բնի համար հարկաւոր նիւթերը: Նրա ատամներն այնքան ուժեղ են և սուր, որ նա կարող է 2<sup>1</sup>/<sub>2</sub>—3 սանտիմետր հաստութիւն ունեցող ծառը կտրատել, կտոր կտոր անել: Նա աւելի հաստ ծառերը քորահան է անում, առաջուց ծառի տակը փորելով. նա միշտ ծառը վայր է ձգում ջրի կողմից, որպէս զի ծառի ճիւղերն ու կտորտանքը հեշտ լինի բունը տեղափոխել: Ականատեսներից մէկը պատմում է, որ երեկոյեան մթնաշաղին կուղբի ընտանիքը արագ կերպով քաշում էր իւր բունը և այնտեղ մնում էր մինչև արևի ծագը: Առաւօտեան ամենից առաջ մայրն էր դուրս գալիս ցամաք, առանց պոչը ջրից հանելու, չորս կողմն էր դիտում, թէ վտանգ չկայ արդեօք և ապա դիմում էր դէպի ուռենու անտառակը. նրան շուտով հետևում էին նրա զուակները. հազիւ անտառին հասած, իսկոյն լսելի էր նրանց ատամների սղոցելու ձայնը. և մի քանի րոպէ անց մատղաշ ուռենին գետին էր տապալում: Մայրն ու ձագերը անընդհատ և եռանդով աշխատում էին և մի որոշ ժամանակից յետոյ դարձեալ մայրը՝ ինչքան որ կարող էր՝ վազելով յետ էր դառնում, այս անգամ բերանում բռնած ուռենու մի հաստ ճիւղ: Չուակներն օգնում էին իրանց մօրը բռնելով փայտի երկու կողմերից. ճանապարհին նրանք հանգստանում էին ժամանակ առ ժամանակ:

Այս կենդանիները թէ ուտելու և թէ շինուածքի համար գործ են անում գլխաւորապէս ուռենի և այլ ծառեր: Շատ կրծողների նման կուղբն ևս աւելի շատ դիշերն է գործում, քան ցերեկը. նա մարդուց վախենում է, դրա համար էլ իրան ազատ է զգում միայն այն ժամանակ, երբ տեղը բոլորովին անմարդաբնակ է: Կուղբերը շատ լաւ լողալ գիտեն. և լողով վերստերով հեռանում են իրանց բներից, բայց միշտ գիշերները դառնում են իրանց ապահով բունը: Նրանք ձմրանը, եթէ ջուրը սառչում է, ծակում են սառոյցը և նրա տակից ջրային բոյսեր են հանում: Կուղբը ջրի մէջ ճարպիկ, արագաշարժ ու մտածուած է գործում: Նա ուտելու ժամանակ սի-

րում է միշտ նստել դէմքը դէպի ջուրը դարձրած, որպէս զի վտանգի րոպէին իսկոյն ջուրը նետուի:

Կուղբի բոլոր զգայութիւններն անհամեմատ սուր են և զարգացած, մանաւանդ տեսողութիւնը, հոտառութիւնն ու լսողութիւնը: Դրա համար էլ նա ամենայն հեշտութեամբ համարեա միշտ կարողանում է խուսափել վերահաս վտանգից: Առանց այդ էլ նրա հետ շատ էլ հեշտ չէ գլուխ հանելը: Նրա սոսկալի ատամները քաջ պաշտպաններ են նրա համար. նա յաջողութեամբ կրուում է շան և այլ շնացեղ կենդանիների հետ. մեծ կատուներն ևս առանձին օգուտ չունին նրանից. կուղբի իրական թշնամին ջրաղուէտն է, որ կուղբի նման լաւ սուզուել գիտէ և կարող է իրան ամենայն ճարտարութեամբ պահել ջրի մէջ, ինչպէս և կուղբը: Բայց կուղբի ամենամեծ թշնամին մարդն է: Եւ դա շատ հասկանալի է. կուղբը որսորդին ահագին օգուտ է տալիս, որի առաջ ոչինչ է մատղաշ ծառերին ու մի քանի անպէտք բոյսերին նրա հասցրած փաստը: Կուղբի փափուկ մորթուց շինում են գլխարկներ, ձեռնոցներ, գուլպաներ, թանկագին թաշկինակներ: Նրա միսն ուտում են, նրա պոչի միսը, մանաւանդ առաջ, ահագին զին ունէր, արժէր մօտ 6 մանէթ: Կաթովիկ եկեղեցին այդ կենդանուն յայտարարել էր «ձկնակերպ» — հետեւապէս պատ օրերին կարելի էր դրա միսն ուտել, ուստի և նրա միսն առանձին գործածութեան առարկայ էր դարձել: Ամերիկայի հնդիկների մէջ կուղբը մեծ յարգանք է վայելում. նրանք կուղբին համարեա մարդկային բանականութիւն են վերագրում և կարծում են, որ այդ տեսակ հասկացող կենդանու հոգին անպատճառ պիտի անմահ լինի: Ի նկատի ունենալով կուղբի տուած ահագին օգուտը, մարդիկ ամեն կերպ որսում են նրան. շատերը հրացաններով, միւսներն ուռկաններով և ցանցերով: Չմրանը ծակեր են բաց անում սառոյցի մէջ և ուռկաններ կամ թակարդներ դրնում նրա մէջ. և երբ կուղբը գալիս է մի փոքր թարմ օդ ձծելու, իսկոյն ընկնում է թակարդի մէջ: Կուղբ որ-

սալու ժամանակ յաճախ տեղացիների մէջ վէճեր են ծագում, որոնք երբեմն արևունահեղութեամբ են վերջանում:

Կուղբը հեշտութեամբ ընտելանում է: Ճանապարհորդները պատմում են, որ ամերիկացի հնդիկներից շատերի տանը տեսել են ընտանի կուղբեր, որոնք շան նման իրանց տիրոջ յետևից գնում էին, հասկանում էին մարդկանց խօսքերը, ուրախանում էին և վերին աստիճանի հաւատարիմ էին իրենց տէրերին: Ընտանի կուղբերն իրանց շատ մաքուր են պահում մարդկանց շրջանում և ուտում են այն, ինչ որ մարդը:



### Մ Ի Ա Ս Մ Բ Ա Կ Ն Ե Ր Ի Ը Ն Տ Ա Ն Ի Ք

Ձ Ի

Քաւական է հարևանցի կերպով նայել ձիու աչքերին համոզուելու համար, որ նա խելացի և հասկացող կենդանի է: Ձին շան նման հաւատարիմ ու ընդունակ է: Նա իւր գեղեցիկ, մեծ, աշխոյժ և խելացի աչքերով, սուր ու շարժուն ականջներով, շնորհալի ձևերով առաջին անգամից իսկ գրաւում է մարդուն, և մարդը լաւ գնահատել է նրան. չորքոտանիներից ամենից շատ մարդը ձիու և շան հետ է կապուած բարեկամական անխղելի սերտ կապերով:

Երկրագնդի համարեա բոլոր մասերում ձիեր կան, բացի ամենահիւսիսային մասերից, որտեղ ձիերի գործը կատարում են շուներ, եղջերուն: Յուրա երկրներում ձիու մազը լինում է խիտ ու երկար, իսկ տաք երկրներում կան ձիերի տեսակներ բոլորովին անմազ, լերկ: Ձիու կերակուրը գլխաւորապէս բուսեղէն է. սիրում է խոտ և հացահատիկներ. յատկապէս գարին նրա սիրած կերակուրն է. խմում է պաղ, մաքուր ջուր: Ձին բերում է մի ձագ, որի աչքերը բաց են լինում և մարմինը մազով ծածկուած: Քուռակը ծնուելուն պէս կարող է ոտքի կանգնել և ման գալ. հինգ ամիս շարունակ նա ծծում է մօր կաթը. ապա ծծից կտրում են նրան և քուռակն այնուհետև ապրում է մօրից բոլորովին անկախ, բայց շարունակելով դարձեալ մօր հետ ման գալ: Ձին ապրում է մինչև երեսուն տարի. պատահել են ձիեր, որոնք ապրել

են մինչև 60 տարի. Բայց ձին կարող էր աւելի երկար ապրել, եթէ որ ապերախա մարդիկ նրանց ծերութեան ժամանակ նրանց հետ վատ չվարուէին:

Ձիու զգայարանքները բաւականին զարգացած են, յատկապէս լսողութիւնը: Սակայն ձիու մէջ ամենից աչքի ընկնողը ձիու խելքն է: Նրա յիշողութիւնն հիանալի է: Ճիշտ է, նրա տեսողութիւնն այնքան էլ լաւ չէ, նա հեռաւոր առարկաներն այնքան էլ լաւ չի կարող շօկել, բայց մօտիկ, իւր շուրջը դանուած առարկաները շօկելու, զանազանելու և ճանաչելու մէջ ձին զարմանալի ընդունակութիւն ունի: Ամեն օր տեսնում ենք, թէ ինչպէս ձին առանց մարդու առաջնորդութեան գնում է իւր գոմը. նա եթէ մի անգամ անցել է որ և է մի շաւիղով կամ դժուարանցանելի ճանապարհով, տարիներ շարունակ չի մոռանայ այդ ճանապարհը և երկրորդ անգամ անցնելիս անսխալ կերպով կառաջնորդի ձիաւորին: Մութ գիշերները, երբ իրանց շուրջը սչինչ չեն տեսնում ճանապարհորդները և կորցնում են ճանապարհը, ձիու սանձն ազատ են թողնում, և ձին հետևելով իւր յիշողութեան և խելքին, իւր տիրոջն ազատում է մօլորուելու վտանգից: Շատ անգամ պատահում է, որ կառապանը կամ ձիաւորը հարբած են լինում և ձիու կամ կառքի վրայ օրօրում են. խելացի կենդանին իսկոյն հասկանում է տիրոջ գրութիւնը, լարում է իւր ուժերը և փրկում տիրոջը: Եթէ նա մի անգամ իւր տիրոջ հետ ճանապարհորդելիս օր և է իջևանի առաջ կանգնել է տիրոջ պատուէրով, այդ բանը չի մոռանայ նա. երկար ժամանակից յետոյ, երբ երկրորդ անգամ նոյն տեղով անցնի, նա կրկին անգամ կանգ կառնի, եթէ տէրն այս անգամ չուզենայ էլ իջևանել. բարի կենդանին կարծում է, թէ տէրը սխալում է կամ մոռացել է, որ այդտեղ իջևան կայ: Մի անգլիացի օթամեայ բացակայութիւնից յետոյ Լոնդոնից վերադառնում է իւր քաղաքը. նրա ձին չնայած այդ ահագին միջոցին, յիշում է ճանապարհը, վազում է ուղղակի գոմը, որտեղ առաջ նրան կապում էին: Ձին շատ

լաւ ճանաչում է իւր տիրոջը և երկար տարիներ ի անշատումից յետոյ վազում է նրա մօտ, ուրախ ուրախ խըրխնջում է, լիզում է նրան և անկեղծ ուրախութիւն յայտնում: Նա շատ լաւ իմանում է, թէ իր մէջքին նստողը իւր տէրն է, թէ մի ուրիշը, և շատ անգամ էլ նայում է, որպէս զի համոզուի: Ձին այնքան հասկացող, սրամիտ ու ընդունակ կենդանի է, որ հեշտութեամբ վարժում է ամեն տեսակ արարքներ անելու. նրանք սովորում են հարցերին պատասխանել, գլխի շարժումով կամ սաքի դասիւնով այս կամ ոչ ասել: Բաւական է տիրոջ մի խօսքը վարժեցրած ձիու համար, որ նա ամենայն ճշտութեամբ կատարէ տուած հրամանը: Իրարից բաւականին հեռու դուրս զրուած օղակների միջով նրանք վարպետութեն թռչում անցնում են. ցիբկերի և կրկէսների մէջ նըրանք անսխալ և համաչափ կերպով պոռոյտներ են գործում շրջանի բոլորը. նրանց վրայ ոչ ոք չի նստում այդպիսի դէպքերում, ոչ ոք նրանց չի կառավարում, բայց նրանք գիտեն և կատարում են իրանց սովորածը զարմանալի ճշտութեամբ: Մարդու նկատմամբ այդ բաներն ի հարկէ զարմանալի չեն, բայց ձին որ լեզու-բերան չունի, իւր խելքով, իւր հասկացողութեամբ հաւատարմում է այդպիսի դէպքերում իւր տիրոջը: Ձիուն շատ բան կարելի է սովորեցնել, և աւելի հեշտ կը լինէր ասել, թէ ինչ չի կարող սովորել ձին, քան թէ ասել—ինչ կարող է սովորել: Բայց միայն մի բան պիտի ի նկատի ունենալ, որ ձիու հետ պէտք է կարգին վարուել, ինչպէս որ մարդկանց մէջ այն վարժապետը յաջողութիւն կունենայ, սովորեցնում է իւր սաներին վազաբշտնքով, համոզելով և ոչ թէ ծեծով ու բարկութեամբ, նոյնը կարելի է ասել նաև ձիերի համար: Ձին սիրում է, որ իւր հետ վարուեն մարդիկ այնպէս, ինչպէս նրանք իրար հետ են վարում. և նա արժանի է այդպիսի վարմունքի, որովհետև նա իւր խելքով շատ լաւ հասկանում է մարդկանց միտքը և հեշտութեամբ ընտելանում է խօսքերի իմաստին: Ձին իւր մէջ ունի սիրելու և ասելու, ուրախանալու և տրամելու

զգացմունքներ. նա ծանօթին տեսնելիս ուրախութեան խրխիւնջ է բարձրացնում, իսկ տիրոջ մահը տեսնելիս՝ լալիս է:

Յոյց տալու համար, թէ ձին իրօք խելացի կենդանի է, առաջ բերենք մի քանի օրինակներ: Անգլիայում մի մարդ իւր ձիու ոտներին պայտ խփել տալու համար տանում է ձիուն պայտառի մօտ: Վարպետը խփում է և մարդն իւր ձիու հետ հեռանում է: Հետեւեալ օրը ձին առանց թամբի և սանձի կրկին երևում է այդ վարպետի արհեստանոցի առաջ: Վարպետը կարծելով թէ ձին փախել է տիրոջ տանից քշում է նրան իւր խանութի դռնից: Ձին հեռանում է, բայց մի քանի րոպէից յետոյ կրկին գալիս է և իւր գլուխը ներս է կոխում խանութի դռնից: Վարպետն այս անգամ ուշի ուշով քննում է ձիուն և նկատում է, որ մի ստին մոռացել է պայտ խփել. իսկոյն խփում է և ձին համոզուելու համար թէ ամեն բան տեղն է, մի փոքր էլ սպասում է, նայում է իւր ոտքին և ապա ուրախ ուրախ վազում է դէպի տուն: Ամերիկայում այսպիսի մի դէպք է պատահել. մի կին ընկել է գետը, որի ջուրը շատ խորն է եղել. մի քիչ հեռու մի ձի արածելիս է եղել. տեսնելով կնոջ դժբախտութիւնը, վազում է օփի մօտ, ատամներով բռնում է խեղդուող կնոջ շորերից և այնքան է պահում այդպէս, մինչև որ մարդիկ գալիս ազատում են կնոջը: Անգլիացի գիտնական Ռոմենսը մի ձի ունէր, որ ճարպիկ կերպով բաց էր անում ջրանցքի փականքը, շոգ եղանակներին բաց էր անում գոմի պատուհանները, քաշելով պարանից: — Մերոնոն խալիֆոն մի ձի ունէր, որ առանց խրխիւնջի իրան մօտ չէր թողնում ծառային: Մի անգամ խեղճ ծառան մոռացել էր այդ հանգամանքը և առանց ձիու հրամանին ներս էր մտել գոմը. ձին բարկանում է այդ անպատուութեան համար, բռնում է ծառայի մէջքից և այնպէս է խփում նրան մարմարեայ մսուրքի պատերին, որ ծառան ջարդ ու փշշուր է լինում:

Ձին կարելի է ասել պատերազմական կենդանի է.


հին ժամանակներից սկսած, երբ մարդիկ սկսել են կռուել իրար հետ, մինչև այժմ չի եղել համարեա մի պատերազմ, որի մէջ ձին մասնակցութիւն չունենար: Եւ ինչպէս որ զինւորի սիրտը ուժգին բաբախում է կռուից առաջ, այնպէս էլ ձին սրտատրոփ սպասում է կռուի ըսկզբին: Ռազմի սկիզբն աւետող փողի կոչը նոյնքան ախորժելի է այդ քաջ կենդանու համար, որքան և քաջ զինւորի համար: Ձիերը շատ սիրում են պատերազմական փողերի թմբուկների ձայնը, հասկանալով որ այդ ձայները քաջերի համար կռուի ասպարէզ են բաց անում: Ձին պատերազմի մէջ քաջութեան կողմից յետ չի մնում իւր տիրոջից. նրա հետ մէկտեղ նա հարուածներ է հասցնում թշնամու ձիուն, կծում, քացի է տալիս և իւր կրծքի գնով պաշտպանում է իւր տիրոջ կեանքը: Բայց երբ տէրն սպանուի կռուի մէջ, ձին չի թողնի նրա դիակն ու չի գնայ. այլ երկար կը կանգնի նրա մօտ, կը հոտոտի նրան, երեսը կը մօտեցնի նրա երեսին, երկար կը նայի նրա փակուած աչերին, կը նայ՝ նրա բացուած վէրքերին և չի կամենայ հեռանալ իւր տիրոջ մօտից ցանկանալով հաւատարիմ մնալ նրան նոյն իսկ նրա մահուանից յետոյ: Եղել են շատ դէպքեր, երբ ձին վերցրել է տիրոջ դիակն ու տուն հասցրել և տիրոջ ազգականների հետ սղբացել նրա կտրուտը: Պատերազմի մէջ վիրաւորուելիս ձին քաջաբար դիմանում է մահուան և մեռնելիս հառաչում է միայն: Ծատ ձիեր իրանց քաջութեան համար յուշարձանների են արժանացել և տէրերի սրտում անջնջելի հետք են թողել:

Աշխարհի բոլոր ազգերից ձիուն ամենից շատ սիրողն ու նրա վրայ հոգ տանողն անգլիացիներն են, տաճիկներն ու պարսիկները: Բայց այն երկիրը, որտեղ ձին մարդուն հաւասար անուն ու պատիւ ունի—Արաբիան է: Արաբին առանց ձիու երևակայել չի կարելի. նա նրանից անբաժան է. նրա կեանքն է, հարստութիւնը: Արաբի պարծանքը նրա ազնուազարմ ձին է, նրա կեանքի էական պայմանը, նրա ուրախութիւնն ու հպարտութիւնը: Ոչ մի տեղ ձիու կրթութեան մասին այնքան հոգ չեն տանում,

ինչքան Արաբիայում. և շնորհիւ այդ հանգամանքի արաբական նժոյգը աշխարհի բոլոր ձիերից ամենից բնտիրն է ու գովականը: Արաբներն անասնապահութեամբ են պարապում, վարում են թափառական կեանք, շարունակ տեղից տեղ են փոխում: Այդ տեղափոխութիւնների ժամանակ արաբին անգնահատելի ծառայութիւններ է մատուցանում նրա ձին: Այդ է պատճառը, որ արաբը իւր տան անգամներից աւելի իւր ձիու վրայ է մտածում: Երբ արաբ զինուորը նժոյգն հեծած հրաժեշտ է տալիս իւր տնեցոյց, տնեցիք նախ բարի վերադարձ են ցանկանում ոչ թէ արաբին, այլ ձիուն. իսկ երբ ձին առանց տիրոջ տուն է գառնում, զինուորի կորուստը այնքան վիշտ չի պատճառում տնեցոյց, որքան ձիու վերադարձն՝ ուրախութիւն: Եթէ ձին պատերազմի մէջ սպանւում է և զինուորը ստով տուն է գառնում, տնեցիք շատ սառն են բնդուհում՝ նըրան, ամիսներ շարունակ սուգ են անում՝ ձիու համար: Արաբները երբէք չեն շրանում սակուց և իրանց ձին երբէք չեն ծախում: Զարմանալի չէ, որ արաբը իւր ձին գովելու համար չի խնայել ոչ մի գովեստ: Արաբները պատմում են, թէ երբ Աստուած ուղեց ձի ստեղծել, դարձաւ քամուն և ասաց. «Ի՞նչ պիտի մի էակ ծնես, որ ամեն կողմից ինձ արժանի լինի, իմ ծառաները (մարդիկ) պիտի սիրեն նրան և յարգեն. նրանից պիտի վախենան նրանք, որոնք իմ օրէնքները չեն պահում»: Ապա ստեղծեց Աստուած ձիուն և ասաց նրան. «Ինչ չի հաւասարուի ոչ մի կենդանի, աշխարհի բոլոր գանձերը քո աչքերի մէջ են. դու պիտի ստներով արորես իմ թշնամիներին և մէջքիդ վրայ կրես իմ բարեկամներին: Քո մէջքի վրայից պիտի լսուեն իմ աղօթքները. դու բախտաւոր կը լինես ամբողջ երկրի վրայ և քեզ բոլոր կենդանիներից բարձր կը գնահատեն, որովհետև քեզ պէտք է պատկանի երկրի տիրոջ (մարդու) սէրը. դու պիտի թռչես առանց թևի և պիտի յաղթես առանց սրի»: Հետաքրքիր են արաբի գովեստները. «Ի՞նչ մի ասիր, թէ նա իմ ձին է, ո՛չ, ասա՛, նա իմ օրգին է. նա մրրկից արագ է սլանում, հայեացքից արագ

թռչում: Նա սփռու պէս մաքուր է, նրա աչքերը լուսաւոր են և այնպէս լաւ են տեսնում, որ խաւարի մէջ էլ շոկում են մաղերը: Արծուին նա կարող է ասել. ես քեզանից դանդաղ չեմ սլանում: Երբ նա փոթորկի պէս սուրում է, նրա աչքերից կայծեր են թռչում, արցունքներ քամում: Աշխարհի մէջ չկայ նրան հաւասար կենդանի. նա ծիծեռնակից թեթե է արշաւում, նա այնքան թեթեաշարժ է, որ կարող է քո սիրուհու կրծքին պարգալ, առանց նրան անհանգստութիւն պատճառելու: Նրա վազքն այնքան հանգիստ է, որ դու կարող ես նրա վազած ժամանակ բաժակով սուրճ խմել ու ոչ մի կաթիլ չթափել: Նա ամեն բան հասկանում է. նա միայն լեզու չունի»:

Թէ ինչ օգուտներ են տալիս ձիերը աշխարհի բոլոր մասերում—այդ ամեն մի մարդու յայտնի է:



Կ Ն Ճ Թ Ա Ի Ո Ր Ն Ե Ր

Փ Ի Ղ

Փիղը աշխարհիս մէջ գտնուած ցամաքային բոլոր կենդանիներից ամենից մեծն է. նրա մարմինը 4—5 արշին բարձրութիւն ունի. պոչից մինչև գլուխը 2 սաժեն երկարութիւն. մօտ երեք հարիւր փութ միս ունի. նրա կաշին միայն 50 փութ ծանրութիւն ունի. իսկ նրա հաստ ու խոշոր ոսկորները 4—5 փութ են. նրա ոտները կարծես մի մի գերաններ լինին: Նա իւր ահագին մարմնով առաջին անգամ տեսնողին սարսափ և սլատկառանք է ազդում, բայց նրա հետ ծանօթանալուց յետոյ ամեն մարդ կը նկատի փղի բարեօրոտութիւնն ու խելացիութիւնը:

Փիղը պատկանում է կնճթաւոր, հաստամորթ կենդանիների խմբին. նրա մարմնի ամենից աչքի ընկնող մասը կնճիթն է, որ մօտ մի սաժեն երկարութիւն ունի: Նա փղի քիթն է, միայն աւելի երկար, շարժուն և դիւրազգաց. նա միևնոյն ժամանակ շօշափելու, հստոտելու և մի առարկայ բռնելու գործարան է: Փղի համար կնճիթը ամենապիտանի գործիքն է. Փիղը իւր հսկայական մարմնով անկարող է գլուխը հասցնել մինչև գետին, ուստի փղերը եթէ չունենային կնճիթ, պէտք է քաղցած ու ծարաւ մեռնէին: Փիղը իւր կնճիթով ջուրը հաւաքում է և ապա լցնում բերանը և նոր միայն խմում է. Բացի այդ ծառայութիւններից կնճիթը փղի ամենաուժեղ գէնքն է, նոյն իսկ աւելի քան նրա զարհուրելի ժանիքները: Փղի

աչքերը համեմատած նրա մարմնի հետ, շատ փոքր են, վախկոտ, բայց բարի արտայայտութեամբ. իսկ ականջներն այնքան մեծ են, որ հովանոցի են նմանուած: Փիղը ժանիքներով հարուածում է. ժանիքները շարունակ մեծանում են և երբեմն 4—5 փութ ծանրութեան են հասնում: Բացի ժանիքներից, փղերն ունենում են նաև չորս ատամ, որոնք նրա բերանի ներսի մասումն են շարուած և երբ ընկնեն, նորերը դուրս կը գան նրանց տեղը: Պատահում են փղեր, որոնք վեց անգամ են ատամ փոխում. բայց ժանիքներն երբէք չեն թափւում, և եթէ մի կերպ մնասուեն, նրանց տեղերը նորերը չեն գայ:

Այդ հսկաներն ամենաուժեղ կենդանիներն են. նրանք վախենում են միայն մարդուց և ճանճից: Շատ երկրներում, որտեղ նրանք ապրում են, ճանճերը շատ են չորշարում այդ բարի ու խելացի կենդանիներին (այնտեղի ճանճերն էլ մեծ ու ուժեղ են լինում): Մէկ ականջին են նստում, մէկ պոչին, երբեմն կնճիթի ամենազգայուն տեղը և ծծում ու արիւն են հոսեցնում նրա մարմնից: Փիղը ճիշտ է, կնճիթով պաշտպանւում է, բայց դարձեալ շատ է նեղւում: Ահա այդպիսի նեղ վիճակից փղերին փրկում է մի թռչուն, որի անունը ճայ է. նա գալիս, փղի վրայ որս է անում, կողցահարում է այդ ճանճերին. դրանցով ինքը կշտանում է և փղին էլ ազատում է անհանգիստ ճանճերի ձեռքից: Նրա համար է, որ փղերը չեն մնասում այդ թռչուններին:

Փղերն ապրում են խոր ու մեծ անտառներում, որտեղ ջուր շատ կայ: Նրանք չեն սիրում արևի ճառագայթները և միշտ խոյս են տալիս ստուերաշատ կողմեր. սիրով ապրում են նաև բաւականին ցուրտ բարձունքներում, միայն թէ ջուր լինի: Փղերը ճանապարհորդելու են դուրս գալիս միայն գիշերը, խաղաղ ու լուռ պահին: Եթէ անցորդը ցերեկով յանկարծ փղերի հօտին պատահի, նա կը տեսնի, որ բոլոր փղերը իրար կողքի կանգնած են լուռ ու անշշուկ: Փղերի մասին ի դուր են տարածել, թէ նրանք կատաղի, վայրենի ու վրիժառու կեն

դանիններ են: Հասակաւոր փիղը չափաւորութեան, խելքի օրինակ է փոքր փղի համար:

Շատ հեշտ է իմանալ, թէ անառի մէջ ուր տեղով փղեր են անցել: Նրանք սովորաբար բարձր մասերից իջնում են շուր խմելու և անցնելու ժամանակ ոչ մի արագելքի առաջ չեն կանգնում: Ճանապարհին նրանց պատահած ծառերի ճիւղերը նրանք ամենայն հեշտութեամբ շարդում են իրանց կնճիթներով և տեղն ու տեղը ուտում: Ահագին ստներով նրանք տրորում են գետնի կանաչը և այգախոտով ճանապարհ բաց անում իրանց զբօսանքների համար: Այնպէս որ կարելի է ասել, թէ անառի մէջ ճանապարհ չինելու գործում փղերը կարևոր դեր են խաղում: Նրանք իրանց ահագին մտտ մարմնով երբեմն այնպիսի գծուարին տեղերով են անցնում, որ ձին մեծ չարչարանքներով պիտի անցնէր: Անապատներից կամ լեռի դաշտերից տեղափոխուելիս պառկում են յաճախ աւազի մէջ հանգստանալու: այդ տեսակ տեղերում փղի մարմնի մեծութեամբ խոր փոսեր են նկատուում:

Ճիշտ է, փիղը շատ անճոռնի ու դանդաղաշարժ կենդանի է երևում, բայց այդպէս միայն թւում է: Իրօք նա խիստ ճարպիկ և արագաշարժ է: Նա հանդարտ գնալու ժամանակ ուղտի նման է քայլում, բայց վազելիս այնքան արագ է ընթանում, որ լաւագոյն ձին հազիւ կարողանում է հասնել: Միւս կողմից այդ մեծ կենդանին գիտէ այնպիսի զգուշութեամբ մօտենալ, որ նրա ներկայութիւնը չի մատնի ոչ մի շուկ, ոչ մի ստնաձայն, նոյնը և փղերի ամբողջ հօտի նկատմամբ կարելի է ասել: Լուռ, անձայն փղերն այնպէս են առաջ գնում, որ ոչինչ չի իմացում: Փիղն այնքան ուժեղ է, որ կանգնած է քնում, գիտէ շատ լաւ լողալ և մեծ հաճոյքով ջրի խոր տեղն է գնում: Փիղը իւր կնճիթով զարմանալի բաներ է կատարում: Նա կարող է դրանով կտրատել ահագին, հաստարմատ ծառեր և վերցնել գետնից ամենափոքր առարկաներ, նոյն իսկ ասեղներ: Փղի տեսողութիւնն այնքան էլ լաւ չէ, բայց նրա լսողութիւնն ու շօշափելիքը խիստ զարգացած են: Ուր

սորքները նրա լսողութեան մասին զարմանալի բաներ են պատմում: Բաւական է ամենաթեթեւ շշուկն անգամ, որ փղի խաղաղ տրամադրութիւնը վրդովուի: Չորացած ձիւղերի խշխշոցն անգամ նրան անհանգստութիւն է պատճառում:

Սակայն փղի մէջ ամենից գովելին նրա խելքն է: այդ կողմից նա հաւասար է շանը և ձիուն: Ամեն գործից առաջ նա մտածում է, կշռում, քննում է և ապա գործը սկսում: Փղերի խելքը երևան է գալիս նրանց բոլոր գործերի մէջ: Նրանք փոթորկալի օրերին, երբ կայծակը վերելից շանթում է, թողնում, հեռանում են անտառներից դէպի բաց դաշտը և այնտեղ մնում են, մինչև անցկենաց բնութեան արհաւիրքը: որովհետև փորձով գիտեն և տեսել են, որ կայծակը անտառի ծառերին աւելի շուտ է դիպում, քան բաց դաշտում: գտնուածների վրայ: Յոյց տալու համար փղի խելքը, նրա բարութիւնը, մի պատմութիւն առաջ բերենք: «Մի անգամ ձիով անտառի միջով անցնում էի, ասում է մի անգլիացի որսորդ: Չիս լսելով թաւ անտառից եկող մի խուլ ձայն կանգ առաւ յանկարծ: բանը պարզուեց, երբ մօտեցանք այդտեղին: աղմուկ հանողը մի փիղ էր, որ մենակ ծանր աշխատանքով էր պարապած: Փիղը իւր բոլոր ուժերը լարել էր տանելու համար այն դերանը, որ նրա տէրը դրել էր փղի առամների վրայ, բայց չէր կարողանում, որովհետև շաւիղը շատ նեղ էր: Նա ստիպուած գլուխն երբեմն աջ էր ծռում, երբեմն ձախ, բայց որովհետև գործը շատ դժուար էր, ուստի փիղը բարկացած մոմուում էր: Երբ խելացի կենդանին մեզ տեսաւ, իսկոյն գլուխը բարձրացրեց, մի րոպէ հայեց մեզ, ապա դերանը վայր ձգեց և որպէս զի մեզ ճանապարհ տայ անցնելու, յետ յետ գնաց: Չիս չէր համարձակուում օգտուել այդ սիրալիր վերաբերմունքից: Փիղն այդ նկատելով քաշուեց անտառի խորքը և շարու նուկեց իւր միօրինակ ձայնը, այս անգամ աւելի մեղմ ու կամաց, որպէս զի մեզ քաջալերի: Չիս դեռ վախճնում էր անցնել, ես մեծ հետաքրքրութեամբ նայում էի

այդ երկու խելացի կենդանիներին և սպասում էի, թէ ինչպէս կը վերջանայ դրանց փոխադարձ խաղը: Փիղը տեսնելով, որ ձիս չի գնում, դեռ աւելի և աւելի ներս քաշուեց և անհամբեր սպասում էր, թէ երբ պէտք է անցնենք, որպէս զի նա իւր գործով զբաղուի: Վերջապէս ձիս երկիւղեց դողալով առաջ շարժուեց: Փիղն իսկոյն առաջ եկաւ թաւ անտառից, կրկին վերցրեց գերանը և առաջուայ նման սկսեց իւր ծանր աշխատանքը:

Մի փիղ, որ պատկանում էր անգլիացի ճարտարագետներին մէկին, մի օր հիւանդանում է և երկու աչքերն էլ այնպէս սաստիկ ցաւում են, որ նա երեք օր շարունակ բան չի տեսնում: Տէրը բժիշկ է կանչում. բժշկը գալիս է և վճռում լեպպիսի միջոցով առողջացնել կենդանու աչքը: Փղին հրամայում են պառկել և լեպպիսի խառնուրդը լցնում են նրա աչքի մէջ. անտանելի ցաւից փիղը սարսափելի կերպով բղաւում, մոռնում էր բայց շուտով նրա աչքն այնպէս բժշկւում է, որ բոլորովին լաւ տեսնել է սկսում նա: Երբ այդ յաջողութիւնը տեսան տէրն ու բժիշկը, վճուեցին նոյն եղանակով բժշկուել նաև փղի միւս աչքը: Երբ բժիշկը երկրորդ անգամ եկաւ, խելացի հսկան ինքը պառկեց, գլուխը կողքի դարձրեց և ահագին քանակութեամբ օդ ներշնչեց, ինչպէս այդ անում են սովորաբար այն մարդիկ, որոնք պատրաստուում են սաստիկ ցաւ կրել: Բժիշկն երբ վերջացրեց իւր գործը, փիղը վերկացաւ, շունչ քաշեց թեթեւացած սրտով և իւր կնճիթի շարժումով շնորհակալութիւն յայտնեց բժշկին:

Հնդկական պատերազմի ժամանակ մի փոքրիկ փիղ գլխին վէրք է ստանում և այնպէս է կատաղում ցաւից, որ ոչ ոք չի կարողանում նրա վէրքը կապել: Երկար շանքերից յետոյ փղատէրը դիմում է փոքրիկ փղի մօրը և նշաններով հասկացնում է, որ զաւակին զսպի: Խելացի կենդանին իսկոյն իւր կնճիթով բռնում է տղային և չնայած նրա հառաչանքներին բաց չի թողնում, մինչև որ բժիշկը իւր վերակապութիւնը չի վերջացնում: Մայր փիղը

ամեն օր նոյն ծառայութիւնը մատուցանում էր, մինչև որ փոքրիկը բոլորովին առողջացաւ:

Որովհետև փղերն այնքան խելօք և բարի կենդանիներ են, դրա համար մարդիկ ընտելացնում են նրանց ու բանեցնում: Հարկաւոր է օրինակ անտառի մէջ ճանապարհ բաց անել. ո՞վ կարող է այդ հեշտութեամբ անել, ոչ ոք՝ բացի փղից: Նա իւր ահագին և ուժեղ կնճիթով արմատախիլ է անում ծառերը, վերցնում է ահագին գերաններ, մի տեղից միւսն է տեղափոխում, իւր մեծ ոտներով տրորում է անտառի խոտը և կարճ ժամանակուայ մէջ ճանապարհը պատրաստ է: Նրա խելքը նրա բոլոր գործերի մէջ աչքի է ընկնում: Մի կին տանից դրնում է գործի և իւր փղին պատուիրում է, որ աչք անցկացնի իւր փոքր աղջկան: Կինը հեռանում է. փոքրիկ աղջիկն սկզբում ուրախ է, խնդում, ծիծաղում է. փիղը միշտ պահապանի պէս կանգնած է նրա մօտ և կնճիթը պատրաստ պահել է, որպէս զի, եթէ աղջկան մի բան պատահի, իսկոյն բռնի: Բայց ահա աղջիկն սկսում է լաց լինել, սիրտը նեղանում է և քնել է ուզում: Փիղն հասկանում է այդ բանը. կնճիթով վերցնում է աղջկան, տանում դնում է օրօրոցի մէջ և կնճիթով օրօրում է երեխային և երեխան մի փոքր ժամանակից յետոյ քնում է: Կինը վերագարձին շատ զարմանում է իւր աղջկայ դաշեակի վրայ:

Փղի խելքը ցոյց տալու համար մի օրինակ էլ առաջ բերենք: Մի փղատէր իւր փղին կապում է հաստաբուն ծառից և ինքը այդտեղից մի փոքր հեռու փուռ է պատրաստում. շինում է մի քանի բրնձեայ լաւաշներ և ձգում փոսի մէջ, ծածկում է քարերով ու խոտով և ինքը հեռանում գնում է իւր գործին: Երբ նա բոլորովին հեռանում է, փիղը կնճիթով յետ է անում ոտքերի շղթաները, մօտենում է փոսին, բաց է անում և դուրս է հանում լաւաշները: Այդ համեղ կերակուրն ուտելուց յետոյ, նա առաջուայ պէս ծածկում է փուռը քարերով ու խոտերով և դառնում է իւր նախկին տեղը: Բայց չի կա-

բողանում շղթայով կապել իւր ոտքերը և որպէս զի ծածկի իւր արարքը, շղթայով իւր ոտքը մի քանի անգամ շրջապատում է: Երբ փղատէրը դալիս է, փիղն իւր տեղը կանգնած այնպէս է ցոյց տալիս, թէ ոչինչ չի եղել: Մարդը ոչինչ չկասկածելով դնում է լաւաշների մօտ, բայց բան չի գտնում այնտեղ: Յետ դառնալով նկատում է, որ փիղը ուշի ուշով նայում է նրան: Ապա քննելով շղթան, մարդն հասկանում է բանի էութիւնը և զարմանում:

Փղերն ապրում են խմբերով, ամեն մի խումբ մի ընտանիք է. ընտանիքներն երբեմն շատ բազմաթիւ են լինում. պատահում են խմբեր, որոնց մէջ 100—500 փիղ է լինում, բայց սովորական խմբերը ունենում են 50—80—100 անդամ: Ոչ մի օտար փիղ չի կարող ուրիշ ընտանիքի մէջ մտնել. և եթէ փղերից մէկը պատահմամբ զատուել է խմբից կամ քշուել է ընտանիքից, այն ժամանակ նա ստիպուած է մենակ, անընկեր կեանք վարել. նրան ոչ մի խումբ իւր շրջանի մէջ չի վերցնի: Եթէ նա մի կերպ օտար ընտանիքի մէջ ընկնի, նրան կը հրեն, լաւ կը ծեծեն. ամենախաղաղասէր փիղն անգամ կը չարանայ այդպիսի դէպքերում և կնճիթով կը հարուածի եկուրիս: Այդ տեսակ թափառական ու մենակեաց փղերը ոտքես են կոչուում և դրանք են, որ օտարափ են տարածում շրջակայքի վրայ: Նրանք իրանց վարած մենակ ու ճրդնաւորական կեանքի պատճառով դարձել են չար ու դիւրազրգիւ. շատ անգամ յարձակում են նաև մարդկանց վրայ. մինչդեռ ընտանիքաւոր փղերը ոչ միայն չեն յարձակում, այլ նոյն իսկ խուսափում են նրանցից:

Իւրաքանչիւր խումբ ունի իւր առաջնորդը, որ լինում է ընտանիքի ամենախելացի ու հասակաւոր անդամը: Առաջնորդն անսահման իրաւունք ունի ընտանիքի մէջ. միւս բոլոր փղերը պարտաւոր են նրան լսել: Ոչ մի անհնազանդութիւն չկայ փղերի ընտանիքի մէջ: Առաջ բերենք մի պատմութիւն, որի մէջ պարզօրէն երևում է առաջնորդ փղի և ընտանիքի միւս անդամների դիրքն ու նշանակութիւնը: Տարուայ ամենաչոգ ժամանակ չո-

բանում են դեռերը, լճերն ու ջրաւազանները: Հնդկաստանի փղերն այդպիսի ժամանակ ջրի մեծ կարիք են ըզգում և ահագին խմբերով հաւաքում են քիչ թէ շատ խոնաւութիւն պահող տեղերը: Այդպիսի ջրաւազաններից մէկի մօտ ես մի անգամ բախտ ունեցայ դիտելու փղերի զարմանալի զգուշութիւնը: Ջրաւազանի մի կողմը տարածւում էր թաւ, կուտական անտառը, իսկ միւս կողմը բաց էր: Այդ դիշերը պայծառ լուսնկայ գիշերներից մէկն էր. ես բարձրացայ մի հսկայական ծառի ճիւղերից մէկի վրայ և այնտեղ լարուած ուշադրութեամբ սպասում էի: Փղերն ինձանից 500 քայլ հեռաւորութեան վրայ էին գըտնուում, բայց և այնպէս ես ստիպուած եղայ ամբողջ երկու ժամ սպասել, մինչև որ նրանցից մէկին տեսայ: Վերջապէս ջրաւազանից մօտ 300 քայլ հեռու մութ անտառից դուրս եկաւ մի հսկայական փիղ, 200 քայլ առաջ եկաւ ամենամեծ զգուշութեամբ, ապա կանգ առաւ. նա այնքան հանդիստ էր գնում, որ ոչ մի շշուէ չէր լուսնու եւ այժմ կանգնած էր անշարժ, կարծես ժայռի մի բեկոր լինէր: Ապա նա առաջ շարժուեց, երեք անգամ դարձեալ կանգ առաւ և ամեն անգամ շարում էր իւր ականջները լսելու ամենաթեթիւ շշուէն իսկ: Այդ կերպ նա հասաւ ջրաւազանին և այստեղ էլ, չնայած որ ջրի մօտ էր և ինքն էլ սաստիկ ծարաւ էր, նա չմտածեց ծարաւը յագեցնել, այլ անշարժ կանգնած շարունակում էր լսել: Ապա հանդարտ յետ դարձաւ կրկին դէպի անտառ: Փոքր յետոյ նա դարձեալ եկաւ բերելով այս անգամ հինգ փիղ, որոնք բոլորը մօտեցան ջրին: Այդ հինգ փղին նա ջրի ափին պահապան դրեց, իսկ ինքը դարձեալ յետ դարձաւ: Եւտով ես նրան տեսայ մի ահագին խմբի հետ, թւով 80—100 հատ: Նրանք այնքան կամաց էին գնում, որ ես տեսնում էի այդ ահագին շարժուն մարմինները, բայց ձայն չէի լսում, չնայած այդքան մօտ էի: Ծանապարհի կիսին հօտը կանգ առաւ: Առաջնորդը նորից առաջ անցաւ, գնաց այն հնդի մօտ, փսփսաց նրանց հետ, ամեն բան քննեց, համոզուեց, որ տեղը բոլորովին ապա-

հով է և ապա վերագարձաւ հօտի մօտ և առաջ շար-  
 ժուելու հրաման տուաւ: Նոյն այդ բոլորէին հօտը ջուրը  
 թափուեց և բոլորովին անվախ, աներկիւղ անձնատուր  
 եղաւ ալիքներին: Այժմ չէր կարելի տեսնել առաջուայ  
 վախկոտութեան և զգուշութեան փոքրիկ հետքն անգամ:  
 Նրանք բոլորը շատ լաւ գիտէին, որ առաջնորդի ընտրած  
 տեղը բոլորովին ապահով ու անվտանգ կը լինի: Առաջ-  
 նորդը բոլորից յետոյ մտաւ ջրի մէջ: Ինձ թւում էր, թէ  
 նրանք միանգամից գլխովին կը չորացնէին աւազանի ջուրը:  
 Ես նայում և հրճում էի, տեսնելով այդ ահագին մտի  
 զանգուածները, որոնք այդպէս ճարպիկ կերպով ջրի մէջ  
 լողում էին: Յետոյ ես ցանկացայ իմանալ, թէ արդեօք  
 տերևի թոյլ խշխշոցը ինչ ազդեցութիւն կանէ նրանց  
 վրայ: Ես մի փոքր ճիւղ կտարեցի. մէկ էլ տեսնեմ ամ-  
 բողջ հօտը շփոթուած ու վախեցած արագ կերպով դուրս  
 եկաւ ջրից և ինչքան որ ուժ ունէր, փախաւ մտաւ մը-  
 թին անտառը»:

Փղերն իրանց առաջնորդին շատ են սիրում: Մի ան-  
 գամ որսորդները հալածում են մի քանի փղերի, որոնց  
 առաջնորդը մի ծեր, զօրեղ փիղ էր: Որսորդներն իրանց  
 գնդակներն հէնց այդ առաջնորդի վրայ ուղղեցին: Միւս  
 փղերն իմացան, որ իրանց առաջնորդը վտանգի մէջ է-  
 հաւաքուեցին նրա շուրջը, շրջան կազմեցին, նրան իրանց  
 մէջն առան, այնպէս որ նրան այլ ևս ոչ մի կերպ չէր  
 կարելի մօտենալ. և այդպէս քաշուեցին անտառ և չը  
 թողին, որ իրանց առաջնորդը խայտառակուի:

Բայց դրա փոխարէն առաջնորդներն էլ գիտեն իրանց  
 հօտի համար մեռնելու վայրենիների ահագին խումբը մի  
 օր հալածում էր մի փղի, որ իւր ձագի հետ ջրի ափին  
 կանգնած էր սկզբում: Մեծ փիղն ուղեց վագել և ազա-  
 տուել. բայց նա տեսաւ, որ փոքրը չի կարող հաս-  
 նել իրան, ճանապարհին կը մնայ և վայրենի մարդիկ  
 կը գան, կըսպանեն. դրա համար նա կանգնեց փոք-  
 րի առաջ, իւր ահագին մարմնով պաշտպանեց նրան  
 մարդկանցից և այդպիսով միջոց տուեց նրան փախչելով

ազատուելու: Վայրենիները նետերի և նիզակների ահա-  
 գին տարափ թափեցին մեծ փղի վրայ, բայց նա տեղից  
 չէր շարժուում. վերջը նա վիրաւոր ընկաւ և ձագին ա-  
 զատեց:

Փղերն ագահ չեն, ոչ էլ շատակեր. նրանք ամեն  
 բոլորէ կարող են իրանց կերակուրը պատրաստ գտնել:  
 Ուտում են ամեն տեսակ ծառերի ճիւղեր, սաղարթներ:  
 Նրանք գիշերային ճանապարհորդութիւնների ժամանակ  
 շատ անգամ մօտենում են ագարակներին ու արտերին  
 և երբեմն ահագին վնասներ են հասցնում: Հնդիկները  
 իրանց մշակած և դեռ չքաղած արտերը շրջապատում  
 են բարակ ցանկապատով, որ այնքան աննշան բան է, որ  
 փղի մի թեթև հարուածի առաջ կը փչուուի: Բայց փիղը  
 հասկանալով այդ ցանկապատի նշանակութիւնը, չի քան-  
 դում և չի մտնում մշակած արտը: Մի պարզամիտ սու-  
 դանցի ասում է. «Փիղը քեզ ոչ մի վնաս չի տայ, եթէ  
 դու նրան չվնասես կամ չվիրաւորես: Մեր փղերը ոչ ինձ  
 են վնասել, ոչ էլ իմ պապերին: Երբ հնձի ժամանակը  
 մօտենում է, ես արտերի մէջ տնկում եմ մի երկար ձող  
 և դա բաւական է, որ խելօք կենդանիները հասկանան և  
 ներս չմտնեն արտի մէջ: Նրանք շատ արդարասէր կեն-  
 դանիներ են»:

Ճիշտ յայտնի չէ, թէ քանի տարի կարող է ապրել  
 փիղը, բայց շատ փղեր ապրել են 150 տարի:

Փղերի տուած վնասը շատ էլ մեծ չէ. նրանք երբեմն  
 քմահաճ խաղեր են անում. այդպէս օրինակ, ճանապարհ-  
 ներին ճարտարապետների դրած ձողերը պոկում, դէն են  
 չպրտում, շատերը յամառ կերպով յարձակում են միև-  
 նոյն ագարակի վրայ և այդպիսով աղքատացնում են դրա  
 տիրոջը: Բայց այդ վնասները ոչինչ են, եթէ ի նկատի  
 առնենք փղի ատամների կամ փղոսկրի ահագին վարկը,  
 որ նա ունի մարդկանց մէջ: Դրա համար մարդիկ վաղուց  
 ի վեր փիղ որսալով են պարապում: Որսորդներից շատերը  
 անգութ կերպով չարչարում են այդ բարի և հեղ կեն-  
 դանուն: Մի անգլիացի որսորդ պատմում է. «Մի օր ան-

տառի մէջ եւս մի հսկայական փիղ տեսայ և գնդակն ուղղեցի նրա թևին. գնդակը գիպաւ և ջլատեց նրա թևը. ապա ես մօտեցայ և ուզեցի իմանալ, որն է նրա ամենազգայուն մասը. դրա համար նրա մարմնի զանազան մասերն սկսեցի գնդակահարել: Իւրաքանչիւր գնդակի ժամանակ նա կախում էր գլուխը, և ապա հեղ ու հանդարտ կերպով շոշափում էր վերքը: Ես զարմանում էի, տեսնելով թէ ինչպէս քաջ ու հանգիստ դիմադրում է նա մահուան և ինչպէս անձայն տանում է մահացու վերքերի ցաւը: Որպէս զի վերջ տամ նրա ջարչտրանքներին, նրա վրայ կենդրոնացրի կրակը. Ծ գնդակ արձակեցի թևի տակ և վերջին գնդակի ժամանակ փղի աչքերից արցունքի խոշոր կաթիլներ դուրս ցայտեցին. նա դանդաղօրէն բարձրացրեց արտեանունքները, ապա նորից իջեցրեց, նրա ահագին մարմինը կարծես փշաքաղուեց, նա կռացաւ կողքի վրայ և անշնչացած վայր ընկաւ:

Հնգկաստանի և Աֆրիկայի շատ մասերում ահագին քանակութեամբ վարժեցրած փղեր կան, որոնք մեծ օգուտ են տալիս տէրերին և նրանց ընտանիքի ապահովութեան միակ սիւները լինում: Փղերը գերութեան մէջ չեն բազմանում: Վարժեցրած փղերն ամենից շատ բեռնակրութիւն են անում: Նրանք կարող են երկու երեք հարիւր փութ ապրանք տանել և օրական այդ բեռով կարող են եօթանասուն վերստ տեղ գնալ: Մարդը նստում է նրա մէջքին՝ գլխի մօտ և իւր ձեռքի երկաթեայ մօրճով խըփում է գլխին, որպէս զի շուտ գնայ փիղը: Եթէ փղատէրն ուզում է աջ կողմը թեքուել, փղի աջ ալանջին է խփում, եթէ ձախ է ուզում գնալ, ձախ ալանջին է խըփում: Բայց փիղն աւելի շատ խօսքով է հասկանում: Նա խփոյն խմանում է իւր տիրոջ ցանկութիւնը և կատարում է անսխալ: Գերութեան մէջ փղերը շատ էլ ուրախ չեն և ստիպուած միայն հնազանդւում են մարդուն: Իօկ եթէ յարմարութիւն ունենան—կը փախչեն: Հարուստ մարդուն մէկը մի քանի փիղ ունէր, նրանք բոլորը փղապանի հետ աշխատանքի էին գնում: Մի օր նրանք ան-

տառի այն մասում պիտի աշխատէին, որանդ վայրի վըղեր էլ կային: Փղերից մէկը տեսնելով վայրի փղերին յիշեց իւր անցեալը. յիշեց, որ մի օր ինքն էլ ազատ էր և փախաւ նրանց մօտ: Փղապանը շատ այս ու այն կողմն ընկաւ, փիղը չկար ու չկար: Եկաւ իւր տիրոջ մօտ, պատմեց բոլորը, իսկ տէրը նրան չհաւատաց, ասելով թէ տարիլ ծախել է, հիմա եկել խաբում է և դուրս արաւ իւր ծառային: Խեղճ մարդն ահագին ընտանիքի տէր էր, առանց հացի մնաց: Չէ, այսպէս չի լինի, կերթամ, որսորդ կը դառնամ, մտածեց նա և դարձաւ որսորդ: Ճասնհինգ տարի յետոյ նա մի խումբ փղեր տեսաւ, որոնց մէջ ճանաչեց իւր նախկին փղին. առանց մի խօսք ասելու նա մօտեցաւ այդ փախստականին, նրա անունը բարձր ձայնով կանչեց և հրամայեց ծունկ չոդել: Փիղը յիշելով իւր գերութեան մէջ սովորածը խփոյն կատարեց մարդու հրամանը: Որսորդը նստեց նրա վրայ և ուղղակի եկաւ իւր նախկին տիրոջ մօտ: Տէրը ճանաչեց թէ ծառային և թէ փղին, հասկացաւ, որ ի դուր էր վերաւորել խեղճ մարդուն և առատ պարգևներ տալով նորից ծառայութեան մէջ ընդունեց նրան:

Փղերն այժմ քանի գնում քչանում են աշխարհի երեսից: Դրա պատճառն այն է, որ մարդիկ անխնայ կերպով սպանում են, որովհետև նրանցից ահագին օգուտներ են ստանում: Այժմ շատ հազուադիւր են փղերն այն տեղերում, որտեղ առաջ խմբերով կային և շուտով գուցէ կը դայ մի օր, երբ ոչ մի փիղ չի լինի այլ եւս: Գիտնականներն ասում են, որ այդ օրը շատ էլ հեռու չէ. 200 տարուց յետոյ բոլոր փղերը վերջացած կը լինին: Փողի, օգուտի համար մարդիկ վերջացնում են այդ բարի, խելայի և հզօր կենդանիներին:



ՀԱՍՏԱՄՈՐԹ ԿԵՆԴՍՆԻՆԵՐ

Խ Ո Ձ

Հաստամորթների անճոռնի և անկանոն շարքի մէջ խողը բաւականին վայելչակազմ է երևում. նրա դրւթը կրնուսած է և վերջանում է կարուած բութ դնչով, որի ծայրին գտնուում են կրճկային մի տափակ մասի վրայ երկու ուղեքերը: Սկանջները միջակ մեծութիւն ունին և ցցուած են, աչքերը ծուռ և շատ փոքր: Երեք տեսակ ատամներ էլ ունին, թէև զանազան քանակութեամբ: Ստամոնների մէջ յատկապէս աչքի են ընկնում ժանիքները: Վերևի ծնոտի ժանիքները ներքև են ուղղուում և դեռ չհասած ստորին ծնոտին, կեռանում են ու վեր բարձրանում բերանից դուրս. այդպիսով ժանիքներից կազմում է այն զարհուրելի զէնքը, որ այդքան սոսկալի է դարձնում մանուսանգ վայրի խողին կամ վարազին որսորդների համար: Խողի ոտքերը բարակ են և ուժեղ, վերջանում են զոյգ զոյգ մատներով, սրոնցից միայն միջինները կամ ամենից երկարներն են հասնում գետնին: Ստամոքսը կտր պարկի ձև ունի, աղիքները մարմնից 10 անգամ երկար են: Լաւ կերակրած խողի կաշու տակ մատից աւելի հաստութեամբ ճարպ է նստում:

Բացի նոր Հոլլանդիայից խողերը տարածուած են աշխարհի համարեա բոլոր մասերում. ջուրը նրանց համար էական պայման է, ուստի և ապրում են ճահճային տեղերում, մարգագետիններում, գետերի և լճերի ափե-

րին, եղէգնուտ շամբերում: Շինում են իրանց բունը ծառերի տակ և շատ յաճախ ցեխի մէջ թաւալ են տալիս մեծ բաւականութեամբ: Խողը ամենակեր կենդանի է այդ բառի ամենալայն իմաստով, նա բացի ամեն տեսակ բուսեղէնից, արմատներից ու պտուղներից, ուտում է նաև միջատներ, որդեր, փոքրիկ կենդանիներ, սողուններ, մրկներ, նոյն իսկ ձկներ: Խողերը մեծ մասամբ կերակրի են դուրս գալիս գիշեր ժամանակ և դուրս են գալիս եթէ ոչ խմբերով, գոնէ զոյգերով, այնպէս որ նրանք առանձնակի կեանք չեն սիրում: Քայլում են բաւականին արագ, իսկ նրանց վազքը անընդհատ թռիչքների մի շարք է: Գնալիս նրանք ինքնատիպ խորդխորդոց են հանում, որ միայն խողին յատուկ է: Շատ շաւ լողում են, թէև ոչ երկարատև: Նրանց զգայարանքներից յատկապէս զարգացած է հոտաութիւնն ու լսողութիւնը. աչքերը լաւ չեն տեսնում, ուստի և որսորդները սրան շուտ են կարողանում մտենալ: Խողի մտաւոր ընդունակութիւններն աննշան են. նրանք անհասկացող, յամառ և հաստագլուխ կենդանիներ են: Նրանց վայրի տեսակները հեշտութեամբ են ընտելանում, բայց ընտանի խողն էլ նոյնքան հեշտութեամբ վայրենանում է: Խողապահութիւնը շահաւէտ գործ է, որովհետև խողերը տարեկան երկու անգամ են ձագ բերում և իւրաքանչիւր անգամին 1—24 հատ: Բացի դրանից նրանց համար շատ հոգս ու խնամք հարկաւոր չէ. բաւական է մի խողարած, որ տանի նրանց արածացնի, այնուհետև ձմեռ-գարուն խողերը իրանք իրանց կերակուրը կը գտնեն: Շատ տեղերում, յատկապէս մացու խողերին պահում են դրա համար առանձնապէս պատրաստած շինութեան մէջ և անշարժ են թողնում ու կերակուրը առատօրէն տալիս. խողն այդպիսով շատ շուտ չաղանում է և նրա ճարպը հաստանում է ու ազնւանում:

Վայրի խողերից ուշագրութեան արժանի է վարազը, որի որսը ամենավտանգաւոր բանն է համարում որսորդների համար, բայց հէնց դրա համար էլ դրաւիչ է: Այժմ վարազներին ամեն տեղ ոչնչացնում են, որովհետև իրանց

կործանելի գնչով ու զարհուրելի ժանիքներով նրանք անասելի վնասներ են հասցնում մարդկանց, մանաւանդ ազա-  
րակատէրերին:

Ռ Ն Գ Ե Ղ Զ Ի Ի Ր

Ռնգեղջիւրը խիստ անճոռնի կենդանի է. նրա հասակը բաւականին մեծ է, մարմինը՝ ծանր, վիզը կարճ, գլուխը երկարաւուն, ոտքերն ու թաթերը կարճ ու հաստ, որոնք վերջանում են նուրբ սմբակաւոր մատներով: Կաշին լերկ է և շատ հաստ: Գանգի մէջ գէձքի մասն ամենից մեծն է. այդ մասը բաղկացած է ամուր, հաստատուն սկորներէց և մի տեսակ պատուանդան կամ յենարան է կազմում մէկ կամ երկու եղջիւրների համար, որոնք դուրս են գալիս նրա գէձքի առաջին մասում: Ռնգեղջիւրի կմախքը նոյնպէս ծանր է և մուտ. նրա գանգը խիստ երկար է և միւս հաստամորթների գանգից շատ աւելի ցած: Նրա բոլոր սկորները աչքի են ընկնում կարծրութեամբ, ամրութեամբ և պնդութեամբ: Ատամները շարքը զանազանում է սովորական ատամնաշարից: Երկու ծնոտների վրայ մեծ մասամբ չեն լինում ժանիքներ և չորս կտրիչ: Գլանց փոխարէն իւրաքանչիւր ծնոտի վրայ կան եօթ արմատական ատամներ:

Ռնգեղջիւրի մարմինը ծածկուած է շատ հաստ մորթով, որի համար էլ այդ կենդանիները կոչւում են հաստամորթ: Մորթու հաստութիւնը մէջքի վրայ մանաւանդ հասնում է մի մատնաչափի: Այս կենդանիների մի տեսակի մէջ նրանց մորթը բաւականին ամուր, պինդ կպած է լինում մարմնին, միւս տեսակների մէջ տեղ տեղ կախ է ընկնում և ծալքեր է կազմում: Եղջիւրը (մի քանի տեսակներն երկու եղջիւր են ունենում) բաղկացած է երկար ու փայլուն շերտերից, նրա երկարութիւնը հասնում է երբեմն երեք ոտնաչափի: Ռնգեղջիւրներն այնքան էլ

արագաշարժ կենդանիներ չեն: Այժմ նրանք ապրում են Ասիայում, ասիական կղզիներում և Աֆրիկայում: Իրանց վարած կեանքի եղանակով բոլոր ռնգեղջիւրներն համարեա միատեսակ են:

Ռնգեղջիւրի սիրած տեղը ջրառատ տարածութիւններն են, ճահիճները, լայն տարածուած դեղերն ու բուսազարդ լճերը: Իւրաքանչիւր ռնգեղջիւր ինչքան էլ որ հեռու լինի ջրից, օրական գոնէ մի անգամ պիտի գայ ջրի կամ աւելի շուտ աղմի մէջ թաւալ տայ, տղմակոյտ լինի, որովհետեւ զանազան միջատներն ու մոծակները նրա հաստ կաշին ծակծկում են և այդ հսկայ կենդանուն ահազին նեղութիւն պատճառում: Ռնգեղջիւրն աւելի գիշերն է գործում. նա շատ չի սիրում շոգը, ուստի և օրուայ այդ ժամին քնում է: Նրա քունն այնքան թանգ ու զօրեղ է, որ կարծես մի ժայռի կտոր է վեր ընկել ու մնացել. և դրա համար էլ շատ օրսորդներ ռնգեղջիւրին կէսօրին են սպանում, երբ նա ոչինչ չի զգում: Ռնգեղջիւրն ևս վագրի պէս քնից զարթնում է միայն նրա համար, որ կերակուր գտնի: Նրա կերակուրը միշտ էլ պարստ կայ: Նրա կերը բուսեղէն է, ուտում է կոշտ, փայտացած թփեր, փշալի ճիւղեր, եղէզն, անապատի խոտեր, ծակոզ միմզաններ: Անձրեային օրերը նա թողնում է անտառներն ու քաշւում է մշակուած դաշտերը և ահագին վնաս է հասցնում հողատիրոջը: Նա շատ ազահ կենդանի է, և եթէ ի նկատի ունենանք նրա ստամոքսի ահագին մեծութիւնը, մեզ համար հասկանալի կը լինի ռնգեղջիւրի պատճառած վնասը: Նա իւր ահուելի եղջիւրով արմատահան է անում նաև ծառեր:

Ռնգեղջիւրը խմբական կեանք չի սիրում, և թէպէտ շատ անգամ ռնգեղջիւրներն ապրում են փոքրիկ խմբերով 5—10 հատ, բայց գրանցից իւրաքանչիւրն անկախ կեանք է վարում բոլորովին. խմբական, համայնական ոչ մի բան չըկայ նրանց մէջ: Ռնգեղջիւրի բոլոր շարժումներն անճոռնի են և դանդաղ, թէպէտ և խիտ անտառների մէջ լուսնոյդն հազիւ է կարողանում հասնել նրան: Բայց այդ

նրանից է, որ մինչդեռ ձին ամեն մի քայլափոխում ճիշդերի և սաղարթների առաջ դէմ է առնում, ընդեղջիւրն անարգել առաջ է սլանում, քարուքանդ անելով ճանապարհին պատահած բոլոր արգելքները: Բաւական վարպետօրէն լողալ գիտէ և սիրում է ջրի երեսին մնալ:

Զգայութիւններից ամենից շատ զարգացած է լսողութիւնը, ապա շօշափելիքը և կաշու զգայութիւնը: Տեսողութիւնը թոյլ է: Իսկ ընդհանուր կերպով վերցրած ուրնգեղջիւրը շատ անտարբեր կենդանի է իւր շուրջը կատարուած իրականութեան նկատմամբ: Նրան եթէ չբարկացնեն և ինքնագոհ գրութիւնից չհանեն, ամենեւին չի էլ հետաքրքրուի որ և է բանով: Բայց տեսարանը բոլորովին փոխում է, երբ նա զայրացած է. այդտեղ նա արդէն ուշադրութիւն չի դարձնում ոչ թշնամու թուի, ոչ էլ ուժի վրայ, այլ կոյր կատաղութեամբ վազում է թշնամու վրայ: Նրա կատաղութիւնն անչափ ու անսահման է: Նա նետում է ոչ միայն իւր բարկութեան պատճառի վրայ, այլ և ճանապարհին պատահած ամեն մի բան նրա աւերիչ զայրոյթն աւելացնում է ու զոհ դառնում կատաղած հսկային: Քարերն ու ծառերը շատ անգամ տեղահան են լինում. իսկ եթէ դրանք էլ չկան, մոլեգնած գազանը սուր եղջիւրով գետնի մէջ 6—8 ոտնաչափ խորութեամբ փոսեր է փորում և այդ եղանակով միայն յազեցնում իւր զայրոյթը: Բարեբախտաբար, մարդ հեշտութեամբ կարող է խոյս տալ: Ընդեղջիւրի հետամտութիւնից, միայն սիրտ է հարկաւոր դրա համար: Փորձուած որսորդը թոյլ է տալիս մօտենալ 10—15 քայլ և ապա յանկարծ ծռւում է մի կողմ կամ մի ծառ է բարձրանում, մոլեգնաբար վրայ է հասնում գազանը և չկարողանալով թեքուել անմիջապէս մարդու կողմը, շարունակում է նոյն ուղղութեամբ առաջ սլանալ ու հեռանալ մարդուց: Ոնդեղջիւրը գնդակից չկատ վտանգաւոր թշնամի չունի. առիւծն ու վագրը խոյս են տալիս նրանից, հաստատ գիտենալով, որ իրանց ճանկերը չափազանց թոյլ են պատառելու հսկայի գրահապատ մէջքը: Առիւծի հարուածը, որ վայրկենապէս

տապալում է եզանը, ընդեղջիւրի համար ոչինչ է: Փղերի հետ ընդեղջիւրը հաւասար կռուի կարող է դուրս գալ և շատ անգամ լուրջ մտասուածքներ հասցնել ահագին կենդանուն: Ոնդեղջիւր որսալը խիստ վտանգաւոր է, ուստի և չափազանց դրաւիչ որսորդների համար: Յոյց տալու համար ընդեղջիւրի ահաւելի ուժը և որսի դժուարութիւնը, բերենք մի օրինակ: Յայտնի ճանապարհորդ ու քաջ որսորդ Անդերսոնը հետևեալն է պատմում:

Մի օր ես վերադառնում էի փիղ որսալուց. ճանապարհին ինձանից ոչ հեռու նկատեցի մի ընդեղջիւր. տակիս ձին ամենաարագօտն էր իմ ունեցած ձիերից. նա թեթև սիւքի պէս սլանում էր: Ես միշտ սովոր էի ուրնգեղջիւրի վրայ սոսով որսի գնալ, բայց այս անգամ ձիով փորձեցի: Խփեցի ձիուս կողերին և ձիս արշաւեց դէպի ընդեղջիւրը: Ամենակարճ ժամանակում ես արդէն հըսկայի մօտ էի. կրակեցի, բայց գնդակը մահացու չէր: Ոնդեղջիւրը փոխանակ անմիջապէս յարձակուելու, մի քանի վայրկեան կանգնած մնաց, ապա կամաց կամաց սկսեց մօտենալ: Ես դեռ չէի մտածում փախչելու մասին, բայց և այնպէս աշխատում էի ձիս մի կողմ դարձնել: Սակայն իմ ձին, որ միշտ իրան թեթևաշարժ ու խելօք էր ցոյց տուել, այս անգամ չհնազանդուեց, և երբ վերջապէս յետ դարձաւ, արդէն ուշ էր. ընդեղջիւրն այնքան մօտեցաւ, որ ընդհարումն ակներև էր: Յիրաւի, մի րոպէից յետոյ ես տեսայ, թէ ինչպէս հրէջը գլուխը կորացրեց, ապա նորից բարձրացնելով մխեց ուղղակի ձիուս կողերի մէջ. սուր եղջիւրն անցաւ խեղճ կենդանու ամբողջ մարմնով, հասաւ նոյն իսկ թամբին, այնպէս որ ես նրա ծայրն զգացի: Հարուածի ուժն այնքան մեծ էր, որ ձիս թռաւ օդի մէջ և ապա գանգաղ վայր ընկաւ: Ես էլ թամբից դուրս շարտուեցի և դեռ ուշքի չէի եկել, որ կողքիս նկատեցի գազանի զարհուրելի զէնքը: Բարեբախտաբար նրա զայրոյթն իջել էր և վրէժն յազուրդ ստացել: Նա անսպասելի կերպով յետ դարձաւ և թեթև գազանի հեռացաւ կռուի դաշտից: Մինչ այդ իմ ըն-

կերներն եկան վրայ հասան, և ես գժուածի նման վազեցի նրանց մօտ, մէկին թամբից վայր բերի և նստելով նրա ձին, քշեցի ռեզեղլիւրի յետեից: Մի քանի րօպէից յետոյ իմ ուրախութեանը չափ չկար, ռեզեղլիւրն անկենդան ընկել էր օտքերիս տակ:

Երբ նկատի ունենանք այն հսկայական փրատները, որ ռեզեղլիւրն հասցնում է գիւղացուն, այն ժամանակ մեր աչքում արժէք չի ունենայ նրա տուած բաւականին օգուտը: Ոչ միայն ռեզեղլիւրի արիւնը, այլ և նրա եղջիւրը խորհրդաւոր նշանակութիւն ունի տեղացիների մէջ, որպէս փրկարար և բուժիչ միջոց: Եղջիւրներից շինում են գինու, խմիչքի բաժակներ: Թուրքերի մէջ այն հաւատալիքը կայ, որ այդպիսի եղջերեայ բաժակը թոյն չի վերցնի, այլ խսկոյն իմաց կը տայ, որ մէջը թոյն կայ և խմօղն զգոյշ կը լինի: Փայլուն, յղկուած եղջիւրներից շինում են նաև դաշոյնների, սրերի կտթեր: Կաշուից տեղացիները շինում են նաև վահաններ, զրահներ, ամաններ և այլն: Միտն ուտում են, ճարպը մեծ գին ունի: Բայց և այնպէս ռեզեղլիւրը շատ աւելի մեծ փրատներ է տալիս կենդանի ժամանակը, ուտի նրան սպանելը կըրկնակի օգուտ է, մէկ որ մարդ ազատուում է նրա պատճառած փրատներից, մէկ էլ որ մարդ շահուում է նրա մարմնից:



ՋՐԱՅԻՆ ԿԱԹՆԱՍՈՒՆՆԵՐ

Կ Է Տ

Կէտը այն սակաւաթիւ կաթնասուններիցն է, որոնք ապրում են ջրի մէջ, նա թէ ջրի և թէ ցամաքի ամենամեծ կենդանին է: Նրա երկարութիւնը մօտ 8—10 սաժեն է, ծանրութիւնը հաւասար է 30 փղի, 40 ռեզեղլիւրի և 200 եզան ծանրութեան, որ անում է մօտաւորապէս 8000 փութ: Կէտի մարմինը ինչքան որ մեծ է, նոյնքան էլ անճուռնի է: Ահագին գլուխը բռնում է մարմնի 1/3 մասը, բերանի երկարութիւնը երեք օտեն է, իսկ լայնութիւնը 1 1/2—2 սաժեն: Փոքրիկ նաւակը մարդկանցով կարող է տեղաւորուել նրա բերնի մէջ, Վիդ համարեա թէ չունի, կրճքի մօտ դաստաւորուած են մի սաժեն մեծութեամբ լողակները, մարմինը վերջանում է պոչով, որ այնքան ուժեղ է, որ մի հարուածով կարող է նաւակներ խորտակել: Աչքերը փոքր են և լաւ չեն տեսնում, ականջների անցքը շատ նեղ է և ներսից փակ, այնպէս որ ջուրը չի կարող թափանցել ներս: Հսկայական բերանի մէջ երկու կողմից շարուած են 316—350 կռճկային ատամներ, որոնցից իւրաքանչիւրը մօտ 1 1/2 արշին երկարութիւն ունի: Մարմինը ծածկուած է համեմատաբար բարակ կաշիով, որի տակը 8—20 մատնաչափ հաստութեամբ ճարպ կայ:

Կէտը ապրում է բևեռային ովկիանոսներում, յատկապէս Հիւսիսային ովկիանոսում: Բևեռից հարաւ մինչև 60° նա յաճախ է պատահում: Չնայած իւր ահագին

ու անճոռնի մարմինն, նա շատ ճարպիկ կերպով լողում է և ճարտար շարժումներ ունի: Լողի ժամանակ նրա գլխաւոր գործիքը և ուղղութիւն տւողը նրա պոչն է: Կէտը շատ արագ է լողում, ժամը մօտ 12 վերստ, իսկ վիրաւոր ժամանակ՝ աւելի: Ջրի տակից շուտ շուտ երեսն է բարձրանում շունչ քաշելու, որովհետեւ թոքերով է շնչում: Սակայն կարեւոր դէպքերում նա կարող է 20—30 րոպէ ջրի տակ մնալ և երբ դուրս է գալիս, քթածակերից ջուրը շատրուանի պէս վեր է ցայտում 5—6 սաժեն բարձրութեամբ, որ նոյն իսկ հեռուից տեսնւում է:

Կէտը բթամիտ կենդանի է, միևնոյն ժամանակ վախկոտ: Բաւականին զարգացած է նրա կաշուի զգայութիւնը, հետեւապէս շօշափելիքը: Կէտն զգում է եղանակի փոփոխութիւնը և անհանգստանում է: Մինչև այժմ ոչ ոք չի լսել կէտի ձայնը, որից շատերը կարծել են, թէ նա ձայն չունի, բայց այդ սխալ է, որովհետեւ նրա կոկորդը ընդունակ է ձայնի:

Հիւսիսաբնակ մարդիկ առանձնապէս զբաղուած են կէտորսութեամբ, որից ահագին օգուտներ են անում: 9 սաժեն երկարութիւն ունեցող կէտը տալիս է մօտ 2000 փութ ճարպ, մօտ 1500 փութ ձկն իւղ, որի փութն արժէ մօտ 50 կոպ., մօտ 100 փութ բեխ, փութը 15 մանէթ: Եւրոպացիք գործ են ածում նրա ճարպն ու իւղը, նաև նրա ընչացքները, իսկ հիւսիսային ժողովուրդները ուտում են նաև նրա միտը: Էսկիմոսի համար կէտի կաշին համեղ պատառ է. այլ և նրանք կէտի կաշիով խրճիթներ են ծածկում և նաւակներ են շինում:



ԵՐԿՐՈՐԿ ԿԱՐԿ

Թ Ռ Չ Ո Ի Ն Ն Ե Ր

Ը Ն Գ Հ Ս Ն Ո Ի Ր Տ Ե Ս Ո Ի Թ Ի Ի Ն

Կենդանական այս կարգի ամենաբնորոշ յատկութիւնն այն է, որ նրա բոլոր ընտանիքները, ցեղերն ու տեսակները թռչելու ընդունակութիւն ունին և նրանց մարմնի բոլոր մասերն էլ այդ կարողութեանն են յարմարեցրած: Թռչունի ոսկորներն աւելի թեթեւ են, քան կաթրեցրած: Թռչունի ոսկորներն աւելի թեթեւաշարժ են: Մկաններն էլ շատ զարգացած են, մանաւանդ կրծքի ու թևերի մկանները: Թռչուններն ունին բոլոր արտաքին զգայութիւնները, որոնք բաւականին լաւ զարգացած են: Առաջին տեղը բռնում է տեսողութիւնը, որ թռչունների շատ տեսակների մէջ զարմանալի զարգացման է հասած: Նրանց աչքը փակւում է ոչ թէ երկու, այլ երեք կոպերով: Թռչուններն արտաքին ականջ չունին, բայց և այնպէս լաւ են լսում: Հոտոտելիքը պակաս է, քան կաթնասունինը, իսկ ճաշակելիքը շատ թոյլ է, որովհետեւ նրա լեզուն աւելի յարմարեցրած է առարկաները բռնելու կամ շօշափելու, քան համ առնելու: Արեան շրջանառութեան և շնչառութեան գործարանները կատարելութեան են հասած. նրանց սիրտը շատ նման է կաթնասունների սրտին. նոյնպէս բաղկացած է երկու հիմնական բաժանմունքից: Ծնչառութեան ժամանակ օդով լցւում են ոչ միայն թոքերը, այլ և օդային մի քանի պարկեր, որը և հնարաւոր

բութիւն է տալիս նրանց մարմինն աւելի թեթեանալու։ Մարտողութեան գործարանները բաւականին տարբերուով են կաթնասունների համանման գործարաններից, չունին ատամներ և կերակուրը ոչ թէ ծածուկ կամ սրածուկ են, այլ ամբողջովին կուլ են տալիս։ Թռչունների կաշին ևս բազկացած է երեք շերտից և ծածկուած է փոխանակ մազերի՝ փետուրներով, որ լինում է փափուկ կամ աղուամազ՝ կպած անմիջապէս մարմինն և կոշտ փետուրներ, որ բաւականին աճում, բարձրանում են։

Ոչ մի ուրիշ շնչաւոր չկայ, որ թռչուններից աւելի արագ շարժումներ ունենայ և այդ՝ շնորհիւ նրանց թռչելու կարողութեան։ Երբ նրանք թռչելը բարձրացնում են, թռչելի տակ երևան են գալիս ծակեր, որոնցով մշտնում է օդը, իսկ երբ նորից վայր են իջեցնում թռչելը, նրանք պատահում են օդի դիմադրութեան և այդպէս ամեն անգամ վեր ու վար շարժելով, նրանք կարողանում են վեր ելնել և շարունակել իրանց ընթացքն օդի մէջ։ զրա համար շատ անգամ կոչւում են նաև օդային արարածներ։ Թռչունների թռչելու կարողութիւնը շատ զարգացած է. նրանք կարող են ժամերով, օրերով թռչել և այդ եղանակով հաղարաւոր վերստեր կտրել, ժամում հարիւր վերստից աւելի անցնելով։ Բոլոր թռչունները գիտեն և կարող են թռչել, բայց կան և թռչուններ, որոնք երկրի վրայ ման են գալիս կամ վազում են. գըրանց կոչւում են ման եկող կամ վազող թռչուններ։ Դրանք կամ քայլում են կամ արագ ընթանում և վազում։ Բացի դրանից բոլոր թռչունները շատ լաւ լողալ գիտեն և մազլցել։

Թռչունները միւս բոլոր արարածներից տարբերուով են նաև իրանց մաքուր, բարձր, հնչուն և հաճելի ձայնով. նրանք ձայնի միջոցով կարող են արտայայտել իրանց մտքերը, զգացմունքները, ցանկութիւնները։ Իսկ նրանցից մի քանիսներն ուղղակի երգում են և այն էլ երաժշտական կանոնները խստութեամբ պահելով։ Թռչուններն իրար հետ խօսում են, իրար զանազան բան պատ-

մում, հարցեր առաջարկում, պատասխաններ լսում և այդ բոլորը իրանց ձայնի բարձր ու ցած աստիճաններով։ Թռչունների մտաւորը համարեա թէ չի տարբերուով կաթնասունների ընդունակութիւնից։ Չկայ հոգեկան ոչ մի կարողութիւն, որ ծանօթ չլինի թռչունին, եթէ ծանօթ է կաթնասունին։

Թռչունները տարածուած են ամբողջ երկրագնդի վրայ և նրանց տարածումը համեմատ է կենդանիների տարածմանը։ Յուրա երկրներում քիչ տեսակներ կան, թէև իւրաքանչիւր տեսակից ահագին քանակութեամբ, իսկ արևադարձային աշխարհներում ընդհակառակը։ Չուրն էլ որոշ փոփոխութիւն է մտցնում կենդանիների ու թռչունների մէջ։ Չրային թռչուններն համեմատաբար քիչ են և մի տեսակը միւսին բաւական նման, մինչդեռ ցամաքի վրայ եղած հետաքրքիր և բազմազան թռչունները թէ ցեղերով ու տեսակներով շատ են և թէ քանակութեամբ։ Համարեա ամեն աշխարհագրական շրջան ունի իւր յատուկ թռչունը։ Մինչև այժմ երկրագնդի վրայ հաշուով են մօտ 10,000—13,000 տեսակ թռչուն։ Այդքան տեսակներն իրանց անթիւ երամներով բռնել են մեր գետերն ու լճերը, մարգերն ու դաշտերը, անտառներն ու հովիտները, լեռներն ու բլուրները և ամեն տեղ մարդուն բաւականութիւն են պատճառում։

Թռչունը բազմանում է ձուերով. ձուն իւր ձևով և մեծութեամբ խիստ բազմազան է լինում. միայն կարելի է ասել, որ բաց երկնքի տակ ածուած ձուն ունենում է մանրիկ բծեր կամ սև կէտեր, իսկ մթութեան մէջ ածուածը՝ մի գոյնի, և յաճախ ճերմակ։ Չուերի քանակութիւնը լինում է 1—24։ Ընդհանուր առմամբ 18—26 օրուայ ընթացքում թուխսի տակ գտնուած ձուերից դուրս են գալիս ճուտերը, որոնք բաւականին երկար ժամանակուայ ընթացքում ամրանում, կազմակերպւում են։ Չուից ճուտ հանելու համար հարկաւոր է 37<sup>1</sup>/<sub>2</sub>—40 աստիճան տաքութիւն։

Թռչունները բաւականին երկար են ապրում. միջին

Թուով 12—20 տարի: Բայց նրանցից շատ տեսակները հասնում են մինչև հարիւր և աւելի տարուայ: Այս երկար կեանքն համարեա միշտ աշխոյժ, միշտ զուարթ են անցկացնում նրանք. ոչ մի ուրիշ կենդանի չի կարող այնքան ընդարձակ չափերով ու այնպէս կատարեալ կերպով օգտուել, վայելել կեանքը, ինչպէս թռչունը: Նրա համար ամենաերկար օրը կարճ է թուում և ամենակարճ գիշերը՝ չափազանց երկար: Նրանք շատ քիչ են քնում և առաւօտեան գալուստն էլ երգով են դիմաւորում: Յերեկուայ մէջ նրանց գլխաւոր հոգսը կերակուրն է. ճաշելուց յետոյ նրանք 2—3 ժամ անձնական վայելքի յետեւից են ընկնում, լուանում են իրանց մարմինը ջրի կամ աւաղի և կամ տղմի մէջ: Կտցահարում են իրանց փետուրները, մաքրում են և երեկոյեան դէմ դարձեալ դուրս են գալիս կերակուր գտնելու: Ապրում են նրանք զոյգերով և զոյգերն համարեա մինչև իրանց կեանքի վերջը հաւատարիմ են մնում իրար: Կան տեսակներ, որոնք խմբերով են ապրում. շատ վարպետ են բուն շինելու մէջ, որի ընդհանուր սկզբունքն այն է, որ որքան կարելի է մարդկային աչքից կամ թշնամիների քննող հայեացքից հեռու լինի: Եւ բուն շինողը էգն է գլխաւորապէս, իսկ արուն իւր երգերով ու ճուղղիւնով իւր ընկերուհու ականջն է պարարում:

Մեր երկրի թռչունները ձմեռը մօտենալուն պէս հեռանում են տաք երկիրներ. դրանք չունող թռչուններ են կոչուում: Նրանք նախ քան չուելը առաջուց պայմանաւորուած տեղն են հաւաքում ահագին խմբերով, հարիւր հազարներով, միլիոններով և ապա ընդհանուր շարքերը գիտելուց, քննելուց յետոյ բարձրանում են օդի մէջ և շատ արագ կերպով թռչում դէպի հարաւ: Ճանապարհները նրանք լաւ գիտեն շնորհիւ իրանց նախկին փորձի: Ճանապարհները նրանք ճանաչում են լեռների, հովիտների, գետերի և լճերի տեղաւորութիւնից: Նրանց ճանապարհորդութիւնները շատ կանոնաւոր են տեղի ունենում. տարուայ որոշեալ ժամանակը գնում են դէպի հա-

րաւ և ապա դարձեալ որոշ ժամանակից յետոյ վերադառնում են: Եւ յաճախ նրանք այդպիսի ժամանակ տասնեակ հազար վերստեր են անցնում, ծովեր և ովկիանոսներ են ճեղքում: Ճանապարհին նրանց շատ անգամ օդի հակառակ հոսանքներ են պատահում, քամին կամ մրրիկը մոլորեցնում է նրանց և ահագին երամները ծովի մէջ են թափւում կամ փոթորկի միջոցով քշւում, ուրիշ անձամթափեր են դուրս գալիս և ոչնչանում են: Բայց թռչունն ուր էլ որ գնայ, ինչքան էլ որ հեռանայ, նրա հայրենիքը միշտ այնտեղ պէտք համարել, որտեղ նա բուն է շինել, ձու է ածել ու ձագեր է հանել:

Թռչունների թռիչքը միահաւասար չէ և ոչ էլ միակերպ. կան թռչուններ, որոնք ուղիղ են թռչում և կարող են այդպէս ահագին տարածութիւններ անցնել, միւսներն ալիքանման են առաջ գնում, երբեմն բարձրանալով և երբեմն ցածրանալով: Թռիչքի արագութիւնն էլ շատ տարբեր է. այս դէպքում միշտ պէտք է ի նկատի ունետալ և տարբերել կարճ և երկար տարածութիւն թռչելը: Փոքրիկ տարածութիւնն անցնելիս թռչուններն իրանց թռիչքը արագացնում են, մի բան, որ չեն կարող անել, եթէ տարածութիւնը մեծ լինի: Օրինակ ազանիները, եթէ պէտք է անցնեն 80 մղոն տեղ, իրանց թռիչքն այնքան կարող են արագացնել, որ մի ժամում անցնեն մօտ 70 մղոն, մինչդեռ նրանց սովորական թռիչքը մի ժամում 36 մղոն է: Միծառներն ու ծիծեռնակները 160 մղոն տարածութեան վրայ կարող են մի ժամում 106 մղոն տեղ անցնել, մինչդեռ նրանք սովորաբար մի ժամում 60 մղոն տեղ են գնում: Չունող թռչունները շատ համբերատար և տեղ են գնում: Չունող թռչունները շատ համբերատար և արագընթաց են լինում. կան թռչուններ, որոնք 2000 վերստ տեղը սլանում են առանց հանգստանալու:

Երամներով թռչող թռչունները անկարգ չեն թռչում, այլ որոշ կարգով, մեծ մասամբ եռանկիւնի ձևով: Եւ դժուար չէ նկատել, որ երամի իւրաքանչիւր անհատ որոշ կանոնաւոր տարածութեան վրայ է գտնւում միւս անգամից և փոփոխակի իրար փոխանակում են շարքի

սկզբի մասերում: Շարքի առաջին մասում գտնուող թռչունները քիչ քիչ յետ են մնում և նրանց տեղը հետզհետե անցնում են շարքի յետին մասերի թռչունները: Իրա պատճառն այն է, որ շարքի սկզբի թռչունները շուտ են յոգնում, որովհետև նրանք են օդը ճեղքում և ճանապարհ բաց անում ամբողջ երամի համար, և երբ նրանք յոգնում են, քիչ քիչ յետ են ընկնում և նրանց յետիններն են փոխարինում: Թռչունները տարբեր բարձրութեամբ են թռչում, և թռիչքի բարձրութիւնը մեծ մասամբ կախուած է եղանակից ու տարուայ ժամանակից: Գիշերը սովորաբար բարձրից են թռչում, որովհետև վախենում են զանազան առարկաների դիպչեն: Թռչունի երամի համար առանձնապէս կորստաբեր է մառախուղն ու մէգը, որովհետև այդ դէպքում կորցնում են ճանապարհը: Թռչունների մի քանի տեսակները թռչելիս առանձին ձայներ են հանում, որ առաջ է գալիս նրանց թևերի ձևերից և թևահարութիւնից:

Թռչունների տուած օգուտներն անթիւ են, բաւական է յիշել այն հանգամանքը, որ եթէ նրանց անհամար շարքերը չլինէին, շատակեր միջատները իսպառ կը ոչընչացնէին բուսական թագաւորութեան մէջ շատ տեսակներ: Սակայն բացի դրանից թռչունները եթէ ոչ մի օգուտ էլ չտային մարդուն, դարձեալ մարդկանց համար նրանք ցանկալի հիւր կը լինէին, շնորհիւ իրանց դեղեցիկ մարմնի, սիրուն ու գրաւիչ ձայնի, զարդարուն ու գոյնզգոյն փետուրների: Կարելի է ասել, որ կաթնասունները մարդուն օգուտ են տալիս, իսկ թռչունները՝ վայելք ու բաւականութիւն են պատճառում:

Թռչունների մասին այս համառօտ ակնարկից յետոյ անցնենք այս դասի մի քանի ներկայացուցիչներին:

Չ Ա Յ Լ Ա Մ

Ամենամեծ թռչունը Չայլամն է: Շատերը նրան ուղտի հետ են համեմատել, որովհետև երկուսն էլ անապատի զաւակներ են և դրա համար էլ ընդհանուր գծեր շատ ունին իրար հետ: Չայլամի թևերը կարճ են, ոտները երկար ու ուժեղ և մինչև ծնկները կռճկային մասերով պատած, իսկ ծնկներից ցած՝ մերկ բոլորովին. մեծ և փայլուն աչքեր ունի, պինդ և ուժեղ կազմուածք: Չափահաս Չայլամի բարձրութիւնը լինում է սովորաբար 8 ստնաչափ, լայնութիւնը կտուցի ծայրից մինչև պոչի ծայրը ամենաբարձր 6 ստնաչափ, իսկ քաշը մօտաւորապէս 4<sup>1</sup>/<sub>2</sub>—5 փութ: Չայլամներ չկան Եւրոպայում և Ասիայում. նրա հայրենիքը Աֆրիկան է. ամբողջ Սահարա անապատը լիքն է այդ թռչուններով: Չուրը նրանց համար անհրաժեշտութիւն է: Յաճախ երաշտի ժամանակ նրանք խելախորոյս թափառում են անապատում և Չուր որոնում: Նրանք ջրի են գալիս բոլորն իրար յետևից, միեւնոյն ճանապարհով:

Չայլամը վազող թռչուն է. թռչելու ընդունակութիւնը նա կրցրել է մեծ մասամբ գուցէ իւր վիթխարի մարմնի ծանրութեան պատճառով: Նրա քայլուածքը և վազքը շատ արագ են: Չափահաս Չայլամը ոչ միայն կը մրցի արաբական նժոյգի հետ, այլ և շատ առաջ կը ընկնի նրանից: Պնդողներ կան, որ Չայլամը մի րոպէում կարող է 2—3 վերստ տեղ անցնել:

Չայլամի տեսանելիքը խիստ զարգացած է. նրա փայլուն աչքերը հիանալի տեսնում են. նա շուկում է առարկաները տասնեակ վերստերից: Մեծ մասամբ գուցէ անապատի անձայր անհունութիւնն է Չայլամի այդ որստեսութեան պատճառը: Չարգացած է նաև նրա լսելիքը, սակայն միւս զգայարանքները համեմատաբար թոյլ են: Թոյլ են նաև մտաւոր կարողութիւնները: Գոյութիւն ու

նեցող բոլոր թռչուններից գուցէ ամենից յիմարն ու բթամիտը ջայլամը լինի:

Չայլամի կերակուրը մեծ մասամբ բուսեղէն է. թէև ուտում է նաև փոքրիկ ողնաշարաւորներ: Նա մի անդիմադրելի մորութիւն ունի. աղիւսի կտոր լինի, թէ քարի բեկոր, երկաթէ առարկաներ թէ բանալիների փնջեր— միևնոյն է, ջայլամը կտցահարելուց յետոյ կուլ է տալիս: Նա առանց ջրի չի կարող ապրել. բայց լաւ ուտելուց և լաւ խմելուց յետոյ նա ուղտի պէս կարող է մի քանի օր շարունակ անհաց, անջուր մնալ: Սրանք ապրում են փոքրիկ խմբերով 4—10 հատ միասին: Էգ ջայլամը ածում է մինչև 30 ձու: Չուերը լինում են ահագին մեծութեամբ, ունենում են 24 հաւկիթի ծանրութիւն և լինում են դեղնաւուն ու մեծ բծերով: Մի քանի էգ ջայլամներ մի բնի մէջ են ձու ածում, բայց թուխս նստողն արուն է և ոչ էգը: 6—7 շաբաթից յետոյ ձուերից ձագերը դուրս են գալիս, որոնք մեծ աքաղաղի մեծութեամբ են լինում: Մայրն իսկի հոգ չի տանում ձագերի համար, այլ արուն է, որ մայրական ինամը է ցոյց տալիս: Չագերը բաւականին դանդաղ են աճում և միայն 3—4 տարուայ ընթացքում բոլորովին հասունանում են:

Շատ հին ժամանակներից սկսած մարդիկ զբաղուած են ջայլամի որսով և նրանց ընտելացնելու գործով: Միջին Աֆրիկայում գիւղ չկայ այժմ, որտեղ մարդիկ ջայլամի փետուրներով զարդարուած չլինին: Իսկ մեծ պատիւ է համարուում յատկապէս տեղացի, բնիկ իշխանների մէջ: Իւրաքանչիւր արու ջայլամի փետուրներից տարեկան մօտ 600 տալեր եկամուտ է ստացւում: Շնորհիւ այդ հանգամանքի, ջայլամների ամբողջ խմբերը այժմ քանի գնում, աւելի նոսրանում ու քչանում են, Չայլամի ձուն ու միսն էլ համեղ կերակուրներ են մարդկանց համար: Ամերիկայի ջայլամները նանդու են կոչւում:

Ա Ր Ծ Ի Ի

Թռչուններն էլ ունին իրանց գիշատիչ ընտանիքը, որ պակաս ահռելի չէ իւր ճիրաններով ու սուր կտուցով: Գիշատիչ թռչուններից յատկապէս նշանաւոր են բազէներն ու արծիւները: Արծիւը պատկանում է բազէի ցեղին և մէկի մասին ասածը մեծ մասամբ վերաբերում է նաև միւսին: Արծիւը մեծ, բարեձև և վայելչակազմ թռչուն է, գլուխը վերևից հարթ, տափակ է և միշտ փետրածածկ: Կտուցը բարձր է, հիմքի մօտ ուղիղ և ծայրը կեռ, թևերը բոլորակ: Պոչի չորրորդ ու հինգերորդ փետուրներն ամենից երկար են լինում սովորաբար: Նրա ուժեղ ոտները միշտ համարեա ծածկուած են լինում աղուամազով: Ճիրանները ամուր են, կեռ, սուր և չափազանց ուժեղ:

Արծիւները տարածուած են համարեա ամբողջ երկրագնդի երեսին: Սակայն դրանց մէջ կան տեսակներ, որոնք յատուկ են որոշ երկրների միայն: Նրանց ընտելութեան տեղը տարբեր է: Կան անտառաբնակ արծիւներ, ծովերի և անապատների արծիւներ, բայց արծուի սիրած տեղը հսկայ, բարձրաբերձ, ժայռոտ լեռների կատարներն են: Այնտեղ, այն ահաւոր բարձունքներում նա իւր բունն է չինում և մահկանացուի աչքից հեռու այդ մեծափայլում ազատութեան մէջ ազատ ապրում:

Արծիւները խմբական կեանք չեն վարում, նրանք գրեթէ բացառապէս զոյգ զոյգ են ապրում, և զոյգերի սէրն ու բարեկամութիւնը մինչև մահ է տևում համարեա: Գիշատիչ են արծիւները, բայց գիշատիչ առիւծների պէս, նրանք գիշատում են քաղցած ժամանակ միայն. այդ կողմից նրանք արժանի են թռչունների մէջ վայելչու թագաւոր տիտղոսն այնպէս, ինչպէս առիւծը կաթնասունների մէջ: Փետրաւոր գիշատիչների մէջ շատ քրջերը կան, որոնք այնքան ազնիւ, վեհ և մեծահոգի լինին, ինչպէս արծիւները. նրանց մարմնաւոր ու հոգեկան

ընդունակութիւնները ցած են գուցէ միայն բազէներէ ընդունակութիւններից: Արծուի թռիչքը գեղեցիկ է ու սրարշաւ ապշեցնելու չափ: Օգի ալիքները նրանք անասելի ճարպիկութեամբ ճեղքում են իրանց զօրեղ թևերով և առաջ սլանում միշտ դէպի վեր ուղղելով բարձրասլաց թռիչքները: Մի րոպէ էլ և նա չկայ այլ ևս — ահա այդքան շուտ է անհետանում նա մահկանացուի հայեացքից: Կենդանի զօհի վրայ յարձակուելիս մտքի արագութեամբ ցած է խոյանում և բարձր ճիւղնով մխտում է իւր կարող ճիրանները զօհի մօտ մէջ: Գեղեցիկ ու վեհ է արծիւր օգի մէջ թռչելիս, մէկ էլ նստած ժամանակ, իսկ գետնի վրայ նրա գնացքը տգեղ է:

Գեղեցիկ են արծուի աչքերը, փայլուն և գրաւիչ: Երկնային ոլորտի մէջ թափառող այդ գիշատիչի հայեացքից բան չի խուսափում: Զարգացած է նաև դրա լսողութիւնը: Մասնաւոր կեանքում արծիւները վեհերոտ են և զգոյշ: Իսկ վտանգի րոպէին՝ յանդուդն և խիզախ: Արծուի կերակուրը մեծ մասամբ զեռուններ և փոքրիկ թռչուններ են: Զկները պակաս գրաւիչ չեն արծուի համար: Նա աննկարագրելի արագութեամբ բռնում է իւր զօհին, բարձրացնում է նրան և տանում է իւր որոշած տեղն ու յօշոտում նրան: Այդ րոպէին նա ցոյց է տալիս ծայրայեղ դրգուում և կատաղի ուժ: Պատահած թռչունի և կենդանու համար նրա յայտնութիւնը մահ է: Նա ուժ և կարողութիւն ունի ամենամեծ ազուէսին անգամ վերցնել և վերստեր շարունակ տանել հեռու և բարձր տեղեր: Կաթնասուններից միայն մեծերն ու ուժեղներն են ազատ արծուի ճիրաններից, իսկ թռչուններից՝ ամենից օրընթացներն ու ճարպիկները: Արծիւը շատ անգամ հսկայ ջայլամի վրայ է յարձակուում և յօշոտում նրան: Մարդու վրայ նա գրեթէ չի յարձակուում:

Իերում է նա 1—3 ձագ: Զագերին խնամում են թէ մայրը և թէ արուն: Նրանք կերակրի պակաս ամեննին չեն քաշում, որովհետև նրանց հզօր ծնողները առատութեան մէջ են պահում իրանց փոքրիկներին: Զափահաս

դարձնելուց յետոյ ծնողները թռչնում են նրանց ազատ օգի մէջ և այնուհետև ձագերն այլ ևս չեն դառնում իրանց նախկին բունը, սկսում են ապրել ազատ, անկախ, այնպէս, ինչպէս իրանց ծնողները:

Մարդկանցից զատ արծիւները վտանգաւոր թշնամիներ չունին, բայց մրցակիցներ ու հակառակորդներ՝ շատ: Բոլոր բազերը, ագռաւները, ծիծառներն ու ճնճըղկացեղ թռչունները նրանց խիտ ատում են: Մարդկանց համար արծիւները մեծ մասամբ վնասակար թռչուններ են. բայց կան նրանց մէջ և այնպիսի տեսակներ, որոնք արժանի են մարդու հովանաւորութեան և պաշտպանութեան: Արծիւները երկար են ապրում, եղել են արծիւներ, որ գերութեան մէջ ապրել են 104 տարի:

ՃՆՃՂԿԱՅԵՂ ԹՌՉՈՒՆՆԵՐ

Այս ցեղին են պատկանում այն բոլոր թռչունները, որոնք իրանց մարմնի մեծութեամբ, կազմուածքով, կտուցով, թևերով, պոչով, փետրաւորութեամբ, թռիչքի աչաքութեամբ ու տարածման կողմից քիչ թէ շատ իրար նման են: Պարզ է ուրեմն, որ խիտ շատ պէտք է լինեն այդ ցեղի տեսակները, որոնց թիւը մօտաւորապէս հաշուում են 5700: Այդ ցեղի արտաքինի մասին գաղափար կազմելու համար բաւական է յիշել, որ դրա մէջ են մըտնում բոլորիս լաւ յայտնի ճնճղուկը, արտոյտը, լորը, սարեակը, ծիծեռնակը, դեղձանիկը, սոխակը, տարմահաւը, ագռաւը և այլն: Բառի բուն նշանակութեամբ նրանք տարածուած են երկրի բոլոր մասերում: Ոչ մի երկիր, ոչ մի լեռ, հովիտ, ձոր ու դաշտ, հարթավայր կամ բարձրաւանդակ, շամբ կամ ճահիճ ազատ չէ այդ աշխարհաբազայիների ներկայութիւնից: Միայն ծովն է, որից նրանք խորշում են, ուրեմն նրանք ցամաքի թռչուններ են: Մարդկանց հարեանութիւնը նրանց շատ տեսակ-

ների համար խիստ հաճելի է: Նրանք անկող հիւրեր են մարդկանց այգիներում, պարտէզներում, տներում և բակերում:

Ճնճղկացեղ թռչունները իրանց մտաւոր ընդունակութիւններով ու արտաքին զգայութիւններով առաջնակարգ տեղ ունին թռչունների կարգի մէջ: Բաւական է յիշել, որ եղել են կենդանաբաններ, որոնք սոխակին համարել են ամենակատարեալը: Բոլոր զգայութիւնները շատ լաւ զարգացած են, յատկապէս տեսողութիւնը, ապա լսողութիւնն ու շօշափելիքը: Նրանց ուղեղը բաւական մեծ է, որին համապատասխանում է և սուր հասկացողութիւն, կայտառ, աշխոյժ բնաւորութիւն: Նրանք ընդունակ են որոշել իրանց թշնամիներին և զգուշանալ նրանցից և ընդհակառակը ճանաչել և բարեկամական կապերով կապուել իրանց բարեացակամների հետ: Այդպիսով ուրեմն նրանք գիտեն ժամանակին ու տեղին նա՛յած փոխել իրանց վերաբերմունքը. նրանք բուռն են իրանց թէ սիրոյ և թէ տոելութեան մէջ:

Այս ամբողջ ցեղը, ինչպէս և թռչունների ամբողջ կարգն համարեա, անդադար աշխատանքի մէջ է անցկացնում իւր ժամանակը: Վաղ առաւօտից մինչև ուշ գիշեր նրանք իրարանցման մէջ են. փորձում են նրանք իրանց բոլոր ընդունակութիւնները: Օրուայ մեծ մասը կերակուր ձեռք բերելով են զբաղուած, ապա մի մասը երգի ու զուարճութեան են նուիրում: Մրանք մարդկանց յատկապէս նրա համար են դուր գալիս, որ իրանց մէջ են պարունակում երգեցիկ թռչունների ամբողջ խումբը: Բոլոր իսկական և վարպետ երգիչները գիտեն հիացնել յայտնի երաժիշտներին: Նրանք բոլորն առանձին ոգևորութեամբ են երգում և ոչ միայն իրանց էգերին զուարճացնելու համար, այլ և իրանց համար. երգում են—երգելու համար: Դա նրանց համար պահանջ է և միաժամանակ բաւականութիւն: Սոխակի, գեղձանիկի կամ սարեակի երգը լսողը կը համոզուի անշուշտ, որ այդ թռչունների մէջ էլ կան տենչեր, կրքեր, ոգևորութիւն և

աւիւն: Երգիչ թռչուններին յաճախ համեմատել են բանաստեղծների հետ. ինչ որ անդարտ, անցաւ բանաստեղծը մարդկանց համար է, նոյնն է և երգող թռչունը իւր կարգի մէջ:

Ճնճղկացեղ թռչունները մեծ մասամբ հանրակեաց են. ապրում ու դորձում են բազմանդամ երամներով: Միայն իրանց սիրոյ ամիսները անց են կացնում զոյգերով, տարուայ միւս ժամանակները զոյգերը խմբեր են կազմում, խմբերը երամներ և երամները միանալով կազմում են յաճախ ահագին բանակներ: Խմբի մէջ ամենից խելացին հոգ է տանում խմբի ապահովութեան համար և միւսները բնազդօրէն հետևում ու հնազանդուում են նրա կարգադրութիւններին:

Նրանց կերակուրը գլխաւորապէս մսեղէն է. ուտում են փոքրիկ ճիճուներ, որդեր, բղէզներ և ամեն տեսակ մանր զեռուներ, այնպէս որ ճնճղկացեղ թռչուններն ևս կարող են աւազակներ համարուել այնպէս, ինչպէս գիշատիչ թռչունները, որովհետև սրանք ևս յարձակում, սպանում են իրանց զոհին: Բոլոր տեսակներն համարեա ուտում են նաև բուսեղէն: Ուտում են ամեն տեսակ արմատներ, հատիկներ, այնպէս որ այս ցեղի թռչուններն ամենայն իրաւունքով կարող են կոչուել ամենակեր թռչուններ: Բայց որովհետև այդ ցեղի կերակուրը բաղկացած է կենդանական ու բուսական մասերից, դրա համար ճնճղկացեղ թռչուններն ստիպուած են, երբ ձմեռը վրայ է հասնում և կերակուրը սպառում է մի երկրում, թողնել և հեռանալ մի ուրիշ երկիր: Տաք երկրների թռչունները չեն չում, այլ մի երկրից միւսն են անցնում, մինչդեռ բարեխառն ու ցուրտ գոտու ճնճղկացեղ թռչունները ձեռնարկում են մեծ ճանապարհորդութիւններ: Բազմաթիւ և բազմերամ բանակներով նրանք դիմում են դէպի հարաւ, աւելի տաք երկրներ ձմեռն այնտեղ անցկացնելու: Այդպիսի ճանապարհորդութիւններն երբեմն հազար, երկու հազար վերստ են լինում: Աշնան մէջերբից սկսած մինչև գարնան սկիզբները ամայանում են մեր դաշտերն ու սարերը, ձորերն ու հովիտները: Գարունը

բացուելուն պէս մէկը միւսի յետևից գալիս, հասնում են գարնան կարապետները և ապա երևում են աւելի մեծ երամները և վերջապէս բանակները: Նրանք բոլորը գնում, ցրում են դարձեալ իրանց նախկին տեղերը, գտնում են իրանց բները, քանդածը շինում են, աւարածը նորոգում և նորից սկսում է ամեն մի բնի շուրջը ուրախ, անհոգ, աշխոյժ ու անհանգիստ կեանքը: Յայտնի է, որ այս ցեղի թռչունները բուն շինելու մէջ ամենից վարպետն են. նրանք իրանց բունը շինում են ծառերի վրայ, թփերի մէջ և շատ յաճախ՝ մանաւանդ երգեցիկ թռչունները՝ մարդկանց բնակարանների սրտերի ու լուսամուտների տակ: Հանում են 4—5 ձագ և իրանց գեղեցիկ ձագերին սիրով ու խնամքով կերակրում են: Յաճախ ամառը նրանք 2—3 անգամ են ձագ հանում:

Ճնճղկացեղ թռչուններն ընդհանուր առմամբ օգտակար կենդանիներ են: Կան ի հարկէ նրանց մէջ այնպիսի տեսակներ, որոնք իրանց շատակերութեամբ և մարդկանց պատճառած անհանգստութեամբ աւելի փնասակար են: Բայց ի նկատի առնելով, որ այդ ամբողջ ցեղը ոչնչացնում է բոյսերի համար այդքան փնասակար որդերն ու միջատները, ի նկատի առնենալով, որ նրանցով են կենդանանում մեր դաշտերն ու հովիտները, պարտէզներն ու այգիները, որ նրանց գեղեցիկ ձայնը հոգեկան իսկական բաւականութիւն է պատճառում մեզ, պէտք է ասենք, որ այդ ամբողջ ցեղը օգտակար է և ցանկալի հիւր մեզ համար: Երգիչ թռչուններից շատերին մարդիկ հնուց ի վեր սովորել են զրկել ազատութիւնից և վանդակների մէջ դնել: Թռչունների ոչ մի ուրիշ ցեղ այնքան վանդակի թռչուն չի տալիս, որքան այս ցեղը: Ճնճղկացեղ թռչունները բաւական ընդունակ են ընտելանալու և կարծես մոռանում են իրանց կորցրած ազատութիւնը: Սակայն թերևս ճիշտն այն լինի, որ նրանք ոչ թէ մոռանում են իրանց ազատութիւնը, այլ նոր դրութեան հետ հաշտուում են, որովհետև կորցրած ազատութիւնը մոռանալ չի կարելի:

ԵՐՐՈՐՎ ԿԱՐԳ

ԵՐԿԱԿԵՆՑԱՂՆԵՐ ԵՒ ՍՈՂՈՒՆՆԵՐ

Գ Ո Ր Տ

Այս խմբին պատկանող կենդանիները թէ ջրի մէջ են ապրում և թէ ցամաքի վրայ, ուստի և կոչւում են երկակենցաղներ: Ջրի մէջ նրանք քիմուխտներով են շունչ քաշում, իսկ ցամաքի վրայ՝ թոքերով: Սրանց արիւնը կարմիր է, բայց սառն. բաղմանում են ձուերով:

Երկակենցաղների մէջ ամենից տարածուածը գորտն է: Գորտի մարմինն անճոռնի է, լարժուն և տափակ: Աչքերը մեծ են և կարող են շատ ներս քաշուել: Ականջները լաւ զարգացած են: Ոտքերն ընդհանուր առմամբ երկար են, իսկ յետի ոտքերն՝ աւելի երկար: Ողնաշարի կազմը շատ պարզ է. վիզը մի ողից է բաղկացած, իսկ ամբողջ ողնաշարը 6 կամ 7 ողերից: Գորտերը կողեր չունին: Գորտի վերին ծնոտի վրայ գտնւում են փոքրիկ, սրածայր ատամներ: Գորտերը թէև մեծ քանակութեամբ են ապրում որ և է մի տեղում, բայց նրանցից իւրաքանչիւրը բոլորովին անկախ, առանձին կեանք է վարում: Նրանք մեծ մասամբ կերակրւում են որդերով, ճիճուներով, փոքրիկ ձկներով ու յաճախ ձկնկիթով: Գորտերի մեծ տեսակներն ուտում են նաև փոքրիկ կաթնասուններ և թռչուններ: Իսկական գիշատիչների նման նրանք սիրում են իրանց աւարը ողջ ողջ ուտել, այն էլ իրանց բունածը միայն:

Գորտերի կեանքի մէջ ամենից աչքի ընկնողը նրանց բազմանալու առանձնայատկութիւնն է: Գորտերը բազմանում են ձուերով և ձուից դուրս եկածն ամենեւին նման չի լինում մեծ գորտին՝ ձու ածողին, այլ զանազան կերպարանափոխութիւններից յետոյ միայն նրա մարմինը ստանում է իսկական գորտի ձև: Մածուցիկ և կպչուն ձուերից նախ դուրս են գալիս փոքրիկ շերտփուկներ, որոնք չունին ստքեր ու թևեր և նման են ձկների: Չունչ են քաշում քիմուխտներով և շարժւում են իրանց զեկանման պոչերով: Ապա այդ շերտփուկների յետի ոտներն են նախ դուրս գալիս, իսկ յետոյ նաև առաջինները: Քիմուխտները չորանում են, պոչն ընկնում է, և այնուհետև ջրից դուրս է գալիս, որպէս բոլորովին պատրաստի գորտ: Գրանից յետոյ նա արդէն թռքերով է շունչ քաշում: Արտաքին ձևափոխութեան հետ գորտի ապրելու եղանակը ու շատ անգամ նաև կերակուրն էլ է փոխւում:

Երկակենցաղների մէջ ամենից արագաշարժ ու աշխոյժ, ուրախ կենդանիները գորտերն են: Սրանց շատ տեսակները վարում են թէ գիշերային և թէ ցերեկային կեանք. բաւականին լաւ ման են գալիս, թռչում են մեծ ճարպիկութեամբ և համեմատաբար մեծ թռիչքներով, շատ լաւ լողում են ու սկում են ջրի մէջ. բաւական լաւ տեսնում են, լսում և զգում, կասկածելի է միայն նրանց ճաշակելիքը: Զուրկ չեն նաև մտաւոր կարողութեան մի քանի նշաններից. ընդունակ են ճանաչելու իրանց ապրելու տեղը, ունին յիշողութիւն, գիտեն օգտուել փորձից, զգուշանում են թշնամուց, նոյն իսկ մի քանի դէպքերում ցոյց են տալիս խորամանկութիւն: Համարեա բոլոր տեսակները մեծ բաւականութիւն են գտնում ինքնատիպ կուլուցի մէջ:

Գորտերն ընդհանուր առմամբ անփսաս կենդանիներ են. իսկ ի նկատի առնելով նրանց կերակուրը, կարող ենք ասել, որ նոյն իսկ օգտակար են: Գորտերի տեսակները խիստ շատ են — ջրագորտ, հասարակ (կանաչ և մոխրագոյն),

ծառասէր գորտ, արջնագորտ, դողողներ, սրանք ամեն տեղ տարածուած են:

Կ Ր Ի Պ Ն Ե Ր

Կրիաներն այնպիսի արտաքին ունին, որ ոչ ոք չի խառնի նրանց ուրիշ կենդանիների հետ: Նրանց մարմնի ամենաբնորոշ կողմն այն է, որ վահանածածկ է: Կրիայի վահանը երկու մասից է բազկացած՝ վերին և ստորին: Վահանի վերին կիսամասը մի փոքր դուրս ընկած է, ձուածե, իսկ ստորինը՝ հարթ: Վերին և ստորին կիսամասերը միացած են միմեանց հետ կռճկային մի մասով, որ շատ տեսակների մէջ սակրացած է լինում և այդպիսի դէպքում միացումը դառնում է կար, սակրակար: Երկու մասերի միացումից կազմւում է մի արկղ՝ կտրուած առջևից և յետևից: Առաջին կտրուածքից դուրս են գալիս գլուխն ու առաջի ոտները, իսկ յետևի կտրուածքից՝ պոչն ու յետևի ստքերը: Կրիան ուղած ժամանակ այդ մասերը կարող է ներս քաշել կամ դուրս հանել: Կմախքի ոսկորները վերևի մասից կպչուն են և շատ տեղերում միանում են վահանի ոսկրային մասերի հետ, այնպէս որ վահանը իրօք դառնում է կմախքի անբաժան մասը: Կրիայի գանգը բաւականին զանգուածային ու թանձր է: Գանգի ոսկորներն այնպէս են իրար հետ միանում, որ կարն համարեա չի նկատւում: Վզի ողերի թիւը 8-ն է, որոնք իրար հետ շարժուն կերպով են միանում, գրտ համար վիզը հեշտութեամբ կարող է վահանից ներս և դուրս անել: Նոյնպիսի շարժունութիւն ունին նաև պոչի ողերը: Ոտքերը սովորաբար հինգ մատ ունին, որոնք մեծ մասամբ ճանկերով են վերջանում. երբեմն միայն երեք մատի վրայ է ճանկ լինում: Կրիաներն առամ չունին, նրանց ծնոտների վրայ եղջերային մի շերտ կայ, որ ծառայում է կերակուրը բռնելու և թեթևակի կրծելու հա-

մար: Կրիաների լեզուն թէպէտ և շարժական չէ, բայց բաւականին մտեղ է լինում և ծածկուած փափուկ, փոքրիկ պտուկներով: Թողերը մեծ են, շնչառութիւնն արագ է բաւականին: Գլխի ուղեղը չափազանց փոքր է ու աննշան:

Կրիան շատ դանդաղաշարժ, քնած ու թմրած կենդանի է. նրա բոլոր գործողութիւնները աչքի են ընկնում այդ յատկութիւններով, որի համար էլ «կրիայի քայլ» խօսքն առած է դարձել: Յատկապէս դանդաղաշարժ են ցամաքային կրիաները: Չնայած կրիայի դանդաղ շարժումներին, նրա մկանները շատ զօրեղ են, միջակ մեծութեան ցամաքային կրիան իւր մէջքի վրայ կարող է տանել մի փոքրիկ երեխայ. իսկ նրանց մեծ տեսակները կարող են նաև հասակաւոր մարդկանց տանել: Բացի դրանից կրիաները վերին աստիճանի կենսունակ ուժ ունին իրանց մէջ. նրանք երկար ժամանակ կարող են ապրել դեռ իրանց մարմնի վրայ մեծամեծ վնասուածքներ ըստանալուց յետոյ: Գլուխը կտրած կրիան, օրինակ, կարող է դեռ մի քանի շաբաթ քայլել, շարժուել: Մի կրիայ, որի ուղեղն հանել էին, վեց ամիս դրանից յետոյ կենդանի էր մնացել: Պարիզի բուսաբանական այգում եղած կրիաներից մէկը վեց տարի առանց կերակրի է մնացել և էլի չի մեռել: Կրիաները ունենալով չափազանց փոքր ուղեղ, մտաւոր կարողութիւնների կողմից խիստ ստոր աստիճանի վրայ են գտնուում: Նրանց զգայութիւններն ևս աչքի չեն ընկնում սրութեամբ: Բայց և այնպէս նրանք կարողանում են զանազանել հաճելին անհաճոյից, իրանց համար օգտակարը—վնասակարից. նրանք տարբերում են նաև իրանց թշնամիներին—բարեկամներից:

Յամաքային կրիաները սնուում են մեծ մասամբ բուսական կերակրով. խոտ, տերև, թփերի կեղև, պտուղ—ահա նրանց կերակուրը. բացի դրանից նրանք ուտում են նաև միջատներ, որդեր, թրթուրներ: Անուշ ջրերի մէջ ապրող կրիաները կերակրւում են զլխաւորաբար անողնաշար կենդանիներով: Կրիաներն ընդհանուր առմամբ կերակուր են ընդունում տարուայ միայն տաք եղանակին,

իսկ արևադարձային աշխարհներում՝ միայն անձրևային եղանակներին: Յետոյ նրանք հետզհետէ սկսում են առանց կերակրի մնալ: Մեր երկրներում ձմրանը, իսկ տաք երկրներում՝ երաշտ եղանակներին, կրիաները թըմրում են, երկարատև քնի մէջ են մտնում:

Կրիաները ձուերով են բազմանում և նրանց աճումը լինում է ձմեռուայ քնից զարթնելուց անմիջապէս յետոյ: Էգ կրիան աւազի մէջ փոս է փորում, ձու է ածում այդտեղ և ծածկում է կրկին փոսը: Սովորաբար մայրը ձու ածելուց յետոյ բոլորովին անխնամ է թողնում և ամենևին հոգ չի տանում թէ ինչ են լինում ձուերը: Աճում է առնուազն 12 ձու, պատահում է նաև հարիւր և աւելի: Կրիայի ձուն կրային հաստ ու ամուր կեղև ունի և սովորաբար կոլոր է լինում. կան և հաւկիթի ձևով: Մի քանի ամսուայ ընթացքում ձուից հետզհետէ զարգանում է կրիայի ձագը:

Կրիաները շատ թշնամիներ ունին կենդանիների մէջ, որոնք դնում, յափշտակում են փոքրիկ կրիաներին: Եագուարը, վագրը և այլ կատուներ բռնում, ուտում են բաւականին մեծ կրիաներ: Խոզերը կրիաներին ուտում են նոյն իսկ նրանց վահաններով: Եատ գիշատիչ թռչուններ ևս կրիաներին վնասում են. բարձրացնելով վերև, ցած են ձգում և այդպիսով մեռցնում: Սակայն կրիայի ամենավտանգաւոր թշնամին դարձեալ մարդն է, որ պատահածին չի խնայում: Եատ տեղերում կրիայի միսն ուտում են, նոյնպէս և նրանց ձուերը:

Կրիաները մի քանի տեսակների են բաժանուում, որոնցից յայտնի են ցամաքային և ջրային կամ ծովային կրիաներ:



կոկորդիլոսին աստուածացնում էին և առանձին տաճարներում էին պահում. որոշեալ ժամին նրանց կերակուր էին տալիս և մեռնելուց յետոյ դմուսում էին: Այժմ այդպիսի մուսիաներ շատ են գտնուել: Կոկորդիլոս որսալու ամենակտրուկ միջոցը դարձեալ գնդակն ու վառօգն է: Ի նկատի ունենալով նրա անճոռնի տեսքը, զարհուրելի ուժը և պատճառած ահազին վնասները, նրա տուած չնչին օգուտները ոչինչ են:

Օ Չ Ե Ր

Կենդանական թագաւորութեան այս երրորդ կարգի մէջ օձերը ամենաբազմաթիւ և նշանաւոր տեղն են բըռնում: Օձի արտաքինը հասարակ ու միօրինակ ձև ունի և պայմանաւորուած է կմախքի կազմուածքով: Կմախքը բազկացած է գանգից, ողնաշարից և կողերից, իսկ առաջի և յետի ոտքեր չկան: Օձի մարմնի մէջ գանգը ամենաաչքի ընկնող մասն է: Գանգի այն մասը, որտեղ ուղեղն է տեղաւորուած, խիստ փոքր է. ճնոտների ոսկորները զարմանալի դիւրաշարժ են. շարժական է նաև վերին ծընոտը: Գանգին անմիջապէս կպած է նրա բունը, որովհետև համարեա անկարելի է վզի ողեր նկատել ողնաշարի մէջ: Ողերի քանակութիւնը կախուած է օձերի տեսակից. շատ քիչ է պատահում որ նրանց թիւը հարիւրից պակաս լինի. կան տեսակներ, որոնց ողերը 400-ի են հասնում: Շատ հետաքրքիր է նաև օձերի առամների ձևն ու կազմութիւնը. բոլոր առամները գէպի յետ են սեղմուած և սուր են. նրանք կծելու և բռնելու համար են, բայց չեն կարող պատառոտել և ծամել, ուստի և օձերը կերակուրը ոչ թէ կտրատում, ծամում են, այլ առնում են բերանը և գանգաղ կերպով հալեցնում, մարսում են: Օձերի դիւրաշարժութեան պատճառն այն է, որ նրանց մկանները շատ են մարմնի մէջ և մկաններից իւրաքանչիւրը ուժեղ ու դիմացկուն է: Օձերի կեանքի մէջ շատ մեծ դեր են կատարում զանազան գեղձերը, որոնք բերնի մէջ են դասաւորուած և մեծ ծառայութիւն են մատուցանում օձերին կերակուր ուտելիս. կան և թունաւոր գեղձեր, որոնց մէջ թոյն է պատրաստում:

Օձերի մարմինը երկար գլանի ձև ունի և շնորհիւ մարմնի թեթևութեան ու մկանների բազմութեան, խիստ թեթև, աշխոյժ շարժուածքներ ունի օձը: Օձերը կարող են սողալ ոչ միայն հարթ տեղերում, այլ և վեր ու վար, ծառերի վրայ, ջրի վրայ և ջրի տակ. նրանք սուրում են, մագլցում են, լողում են, ջրասոյգ են լինում և այդ ամենը համարեա միատեսակ ճարպիկութեամբ: Ճիշտ է, օձերը դիւրաշարժ և արագաշարժ են, բայց հին ժամանակներից մինչև այժմ մարգիկ խիստ չափազանցացնում են նրանց արագաշարժութիւնը: Բնականից աւելի արագաշարժ երևալու պատճառը նրանց ալիքանման գնալու ձևն է: Իրօք ոչ մի օձ այնքան արագ չի կարող գնալ, որ մարդ քանի տեսակները գնալիս գլուխները կէս ոտնաչափ բարձր են պահում, և այդպիսով արքայական վեհ տեսք են ընդունում:

Օձերի արտաքին զգայութիւններն աչքի են ընկնում ընդհանուր թուլութեամբ. օձի աչքերը գեղեցիկ են և փայլուն, բայց նրա տեսողութիւնն աննշան է և թոյլ. համեմատաբար շօշափելիքն աւելի զարգացած է. նոյնը պիտի ասել նաև օձերի մտաւորի մասին:

Օձերը կարելի է ասել համատարած են. նրանք ապրում են թէ ցամաքի և թէ ջրի վրայ, այն էլ թէ անուշ և թէ աղի ջրերում: Սակայն օձի սիրած տեղը անտառն է: Բարեխառն գօտում ապրող բոլոր օձերը ձմեռը քաշում են իրանց խոր բները և թմրում են: Բացի բոա օձերից բոլոր անթոյն օձերը ցերեկուայ կենդանիներ են և բացի ծովային օձերից բոլոր թունաւոր օձերը գիշերային կենդանիներ են: Օձերը կերակրում են միւս կենդանիների մտով. նրանք իրանք

են որսում իրանց կերակուրը: Նրանց ընդունած կերակրի քանակութիւնը կախումն ունի եղանակից, տաք օրերին նրանք շատ են ուտում: Բայց ընդհանրապէս օձերը շատակեր և ազահ չեն: Նրանք ինչ որ ուտում են, միանգամից են ուտում, բայց ուտելուց յետոյ կարող են ամբողջ շաբաթներով կամ նոյն իսկ ամիսներով ոչինչ չընդունել: Օձերը տարուայ մէջ մի քանի անգամ կաշեփոխութեան են ենթարկւում և ամեն անգամ աւելի աշխուժանում են:

Օձերը բաւականին շատ են ապրում. նրանք բազմանում են ձուերով. բայց շատ անգամ ձագերը ձուից դուրս են գալիս դեռ մօր փորում: Մայրերը շատ էլ հոգ չեն տանում իրանց ձագերի վրայ, որոնք շատ սիրուն և կայտառ են լինում:

Օձերի ամբողջ ընտանիքը ընդհանուր առմամբ մարդկանց ֆրասակար է. և եթէ չլինէին նրանց բազմաթիւ թշնամիները կաթնասունների միջից, նրանք ուղղակի անտանելի կը լինէին մարդկանց համար: Առանձնապէս սոսկալի են թունաւոր օձերը: Թոյնը դեղնաւուն կամ կանաչաւուն թափանցիկ մի հեղուկ է, որ գտնուում է բերանի մէջ ատամների յետևը և որի մի փոքրիկ կաթիլը բաւական է քայքայելու ամենամեծ կաթնասունի կազմուածքը: Որքան օձը մեծ է և օրը տաք, այնքան թոյնը զօրեղ ու ներգործական է. որքան զօհը աշխոյժ և ֆիզիքապէս զարգացած, այնքան թոյնի ներգործութիւնը արագ է ու աւերիչ: Թունաւորման ամենայայտնի նշաններն են. անտանելի ցաւ, որ իսկոյն տարածւում է ամբողջ մարմնի վրայ, ընդհանուր թուլութիւն և յոգնածութիւն, ուժերի անկումն, զգայութիւնների կատարեալ բթութիւն, արիւնհոսութիւն քթից, ականջներից ու բերնից, կուրութիւն, խլութիւն, ուռոյցքներ և վերջապէս գիտակցութեան կատարեալ անյայտացումն և ապա մահ: Թունաւորման դէմ վաղուց ի վեր գործ են դրել բազմաթիւ միջոցներ, որոնցից առանձնապէս կարևոր է յիշել. նախ, եթէ վիրաւորուածի բերնում վէրք կամ պատուածքներ

չկան, ծծել ու թափել. ապա պինդ կապել խոցուած տեղը և կարել կամ շիկացած երկաթով այրել: Օգտակար է նաև վիրաւորուածի բերնում մեծ քանակութեամբ սպիրտ կամ այլ խմիչք լցնել:

Թունաւոր օձերից ամենանշանաւորն են Հնդկաստանում՝ ակնոցաւոր օձ, Ամերիկայում՝ հնչող օձ, Աֆրիկայում, յատկապէս Եգիպտոսում՝ ասպիս օձ: Նրանք բոլորն էլ համարեա հսկայական մեծութիւն ունին 3—6 սաժեն երկարութեամբ և մինչև 4 վերջոյ հաստութեամբ: Բաւական է, որ նկատեն նրանք կենդանուն, և այլ ևս նրանցից պրծնելու հնար չկայ: Առանձնապէս զարհուրելի է Ամերիկայի հնչող օձը իւր հսկայական ուժի և սոսկալի թոյնի պատճառով: Բայց կան նոյնքան մեծ և նոյնքան ահուելի օձեր, որոնք սակայն թունաւոր չեն. այդպէս են օրինակ Հնդկաստանի բօա օձերը, որոնք կերակրւում են մեծ կենդանիներով, եզներով, ձիերով, կովերով, այծերով ու ոչխարներով: Հնդկաստանի բօա օձը ցամաքային կենդանի է, բայց նրա մի ուրիշ տեսակը բնակւում է Ամերիկայի ջրերում գետերի և լճերի մէջ, ուտի և կոչւում է ջրային բօա կամ անակոնդօ. բոլոր օձերից ամենից մեծն է դա. նրա երկարութիւնն հասնում է երբեմն եօթ սաժենի:

Իսկ մեր երկրի օձերը կարելի է երկու խմբի բաժանել. թունաւոր և անթոյն կամ իժեր և յոսմունք: Լորտուն լինում է կապտագոյն թեփուկներով, իսկ փոքր տակը դեղնաւուն: Իժի մարմինը ծածկուած է կարմրաւուն թեփուկներով, որոնց միջով վրէպ սկսած մինչև պոչը անցնում է մի սև շերտ: Յաճախ պատահւում են բոլորովին սև իժեր, այդպիսի դէպքերում դժուար է որոշել նրանց մէջքի սև շերտը:



ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳ

Չ Կ Ն Ե Ր

Ը Ն Գ Հ Ա Ն Ն ՈՒ Ր Տ Ե Ս ՈՒ Թ Ի Ւ Ն

Միակ նշանը, որով այս կարգի կենդանիները տարբերուում են երրորդ կարգի կենդանիներից—մարմնի անդամների կազմութիւնն է: Չկները ոտների և ձեռքերի փոխանակ ունին լողակներ, բացի այդ ձկներն ապրում են բացառապէս ջրի մէջ, իսկ երկակենցաղներն ու սողունները թէ ջրի մէջ և թէ ցամաքի վրայ: Չկների արիւնը պաղ է. չնչում են քիմութաներով, ունին սրտի մի բաժանմունք և մի ստամոքս:

Ողնաշարաւոր դասի ոչ մի կարգի մէջ այնպիսի բազմազանութիւն չկայ ձևի ու մարմնի նկատմամբ, ինչպէս ձկների մէջ: Չկան սովորական ձևը—իլիկի ձևն է, երկու կողմերից սեղմուած և յարմարեցրած ջուրը ճեղքելու: Սակայն կան նաև օձաձև, գնդաձև, գլանակաձև, հարթ, երկար, գծաձև ձկներ:

Չկան բոլոր շարժողութիւնների մէջ պոչը գլխաւոր դերն է խաղում: Պոչի աջ կամ ձախ զարկից կախուած է ձկան համապատասխան ուղղութեամբ գնալը: Պոչի վրայ կան լողակներ: Այդ լողակներից զատ կան նաև ուրիշ կենտ, ոչ զոյգ լողակներ—մէջքի ու պոչատակի լողակներ: Լողակները բաղկացած են ոսկրային, շարժական երկար ու բարակ թելերից, որոնք վերջանում են շատ անգամ

փշերով: Բացի այդ լողակներից ձկներն ունին նաև երկու զոյգ լողակներ—կրծքի զոյգը, որ համապատասխանում է միւս ողնաշարաւորների առաջի ոտքերին, և փորի լողակներ, որոնք ոտքերի փոխարէն են: Թէ կրծքի և թէ փորի լողակները բաղկացած են վերոյիշեալ ոսկրային թելերից, որոնք միացած են իրար հետ թաղանթով: Զանազան փորձերից երևում է, որ լողակները ձկան ամենաանհրաժեշտ մասերն են. եթէ չլինէին մէջքի ու պոչատակի լողակները, ձուկը օձաձև կերպով կը շարժուէր. եթէ չլինէ կրծքի միայն մի լողակը, ձուկը հակառակ կողմի վրայ ընկած կը լինէ շարունակ, իսկ եթէ կտրենք կրծքի երկու լողակներն ևս, ձուկը իւր առաջին մասով ցած կը թեքուի: Եթէ կտրենք ձկան բոլոր լողակները, կենդանին մէջքի վրայ կը դառնայ:

Չկների կաշին ծածկուած է թեփուկներով, շատ քիչ ձկներ միայն լերկ են լինում: Թեփուկները սովորաբար ուկրացած, կիսաթափանց, շրջանաձև դարսուածքներ են, որ ծալքաւոր կերպով նստած են լինում կաշու վրայ: Կաշին լինում է զանազան գոյնի: Չկների կմախքը խիստ զանազանակերպ է. այդ աչքի է ընկնում մանաւանդ մէջքի ու գլխի կազմութեան մէջ: Նեարդերի համակարգութիւնը զարգացման ստորին աստիճանի վրայ է գտնուում. գլխի ուղեղը փոքր է ու ծաւալով աւելի պակաս մէջքի ուղեղի ծաւալից: Գլխի ուղեղից միայն տասն զոյգ նեարդեր են դուրս գալիս, որովհետև վերջին երկու զոյգը մէջքից են սկիզբն առնում: Զգայարանքներից աչքի շինուածքը դուրս ընկած խնձորով բաւականին բնորոշ է. լսողութեան գործարանը բաղկացած է ներքին ականջից կամ լարելընծարանը կարծել են, թէ ձուկը ընթոսից. շատերը դրա համար կարծել են, թէ ձուկը ընդունակ չէ լսելու, բայց վերջին փորձերը հակառակն են ցուցանում: Իբրև հոտառութեան գործարան ծառայողում են քթի մօտ գտնուած երկու փոսեր, իսկ շօշափեմբի գործարանը բեխերն է, փափուկ պուօշները, երբեմն էլ կրծքի լողակների մի քանի թելերը: Համի զգայութիւն համարեա թէ չեն առնում ձկները, յամենայն դէպս դրա

գործարանը ոչ թէ լեղուն է, այլ քիմքը Ատամները ոչ թէ յօշոտելու, մանրացնելու համար են յարմարեցրած, այլ աւարը բռնելու: Դրանք լինում են սովորաբար սուր, կոնուսի ձևով, փոքր են և իրար շատ մօտ, այնքան մօտ, որ կարծես կաթ են իրար ու մի ամբողջութիւն են կազմում:

Այժմ տեսնենք, թէ ինչպէս է լինում, որ ձուկը կարողանում է ջրի մէջ վեր ու վար գնալ և ամեն ուղղութեամբ պահել իւր դիրքը: Ձկներն ունին լողափամփուշտ, որի ձևը խիստ տարբեր է լինում և որի մէջ գտնուում են իրանց բաղադրութեամբ օդին շատ մօտ դանազան գազեր: Եւ ահա այս լողաթաղանթն է, որի միջոցով ձուկը կարողանում է ջրի մէջ ելեէջներ անել: Ձկան մարմնի տեսակարար կշիռը մօտաւորապէս հաւասար է այն ջրի տեսակարար կշիռին, որի մէջ նա ապրում է: Դրա համար բաւական է, որ մի փոքր սեղմուի լողաթաղանթը, որ ձկան մարմնին աւելի ծանր լինի ջրից, և այդ դէպքում ձուկը ցած է իջնում: Եթէ նա նորից ցանկանայ վեր ելնել, պէտք է այդ փամփուշտը սեղմող կողմային մկանները թուլացնի, որից յետոյ փամփուշտը առաձգականութեան օրէնքով կը լայնանայ, ձկան մարմնի ծաւալը մեծանում է այդպիսով և ձուկը ջրից թեթևանում է, ուստի և ջրի երեսն է ելնում: Դէպի ջրի խորքերը գնալիս ձուկն աւելի և աւելի ենթարկւում է ջրի ճնշմանը և վերջապէս շատ խորքում այդ ճնշումն այնքան մեծանում է, որ ձուկն այլ ևս չի կարող շարունակել այդ ուղղութեամբ: միւս կողմից խորքերում ապրող ձկների փամփուշտները որոշ սահմանից այն կողմը չեն կարող լայնանալ, հետևապէս այդ ձկները չեն կարող, ինչքան ուզեն, դէպի ջրի երեսը գալ, և այդպիսով լողափամփուշտը ձկանը դատապարտում է ջրի որոշ շերտերում ապրելու անհրաժեշտութեանը:

Ինչպէս ասացինք, ձկները շունչ են քաշում քիմուստներով, ձկները ձայնի գործարան չունին և ձկան նման մունջ գարձուածքը կատարելապէս արդարանում է կեն-

դանաբանութեան մէջ: Բոլոր ձկների արիւնը մի շրջան է անում միայն, արիւնատար երակները արիւնը սրտից բերում են քիմուստները, որտեղից ամբողջ մարմնի վրայով տանում են դարձեալ սիրտը: Ձկների ահագին մեծամասնութիւնը բազմանում է ձուերով, որոնք կոչւում են ձկնկիթ կամ խաւիար: Բոլոր ձկներն համարեա սաստիկ արագութեամբ են բազմանում. նոյն իսկ կան տեսակներ, որոնք մի անգամից մի քանի միլիոն ձու են ածում: Ուրքան եղանակը տաք լինի, ձուն այնքան հեշտ է աճում, դարգանում: Բազմացման միջոցին ձկների շատ տեսակներ տեղափոխութիւններ են կատարում. ծովային ձկները մօտենում են ափերին, գետի ձկները վազում են դէպի գետախորշերը. երբեմն այդտեսակ դէպքերում նրանք անցնում են հազար վերստից աւելի տարածութիւն: Նրանք ձու են դնում կանաչազարդ, յամրագնաց ջրերի մէջ, իսկ մի քանի տեսակները սրընթաց ու քարյատակ գետերի մէջ: Չու դնելուց յետոյ ձկները դառնում են կրկին իրանց նախկին տեղը:

Ձկներն ուտում են իրանց նմաններին — ձուկ: Մի քանի տեսակները բուսակեր են, կերակրւում են ծովի ու գետի բոյսերով. միւսներն ուտում են միջատներ, գետերի ու ջրերի մէջ եղած որդեր և այլ անողնաշար կենդանիներ: Համարեա բոլոր ձկները յափշտակող ու գիշատող են: Ուժեղի իրաւունքը նրանց մէջ կատարեալ կերպով իշխող է. մեծը կու է տալիս փոքրին, փոքրը՝ աւելի փոքրին: Նրանցից շատերը զրահածածկ են և նոյն իսկ մարդու համար վտանգաւոր են: Բայց և այնպէս մեծ ձկների առաջ դրանց զրահները փշուր փշուր են լինում: Ձկների կեանքը մշտական աւազակութիւն է, յափշտակութիւն և անգութ, անխնայ կողոպուտ:

Ձկնեղէնը մարդու համար համեղագոյն կերակրներից է: Ամբողջ երկրներ և տէրութիւններ ձկան առևտրով ու արտահանութեամբ են պարապում: Եւրոպական պետուարտահանութեամբ են պարապում: Եւրոպական պետութիւններից առանձնապէս աչքի են ընկնում Իտալիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, իսկ ամենից շատ Անգլիան:


Միայն Եւրոպական Ռուսաստանը տարեկան 67 միլիոն փութ ձուկ է որսում: Ռուսական ջրերի մէջ ձկնեղէնով հարուստը Կասպից ծովն է, որտեղի ձկները թէ համեղ են, թէ բազմազան ու բազմաթիւ: Մինչև այժմ հաշուել են ամեն տեսակ ձկնեղէնի մէջ մօտ 10,000 տեսակ ձուկ:




58	
68	
10	
48	
101	
101	
201	
101	
111	
221	

### Ն Ի Խ Թ Ե Ր Ի Ց Ա Ն Կ

ԿԵՆԳԸՆԸՐԸՆՈՒԹԵԱՆ ԸՌՈՐԿԱՆ ԵՒ ԳՆՍԵՒՈՐՈՒՄԸ	5
ԿԱԹՆԱՍՈՒՆՆԵՐ	10
Կապիկների ընտանիք	14
Մարդանման կապիկների ցեղ. Գոռիլա	17
Գիճափների ընտանիք	20
Կատունների ցեղ	21
Առիւծ	23
Վագր	38
Շների ցեղ	50
Գայլ	51
Աղուէս	53
Ընտանի շուն	55
Սուրբ Բերնարդեան շուն	59
Էսկիմոսեան շուն	61
Ջրասոյղ շուն	63
Որսկան շուն	64
Ողնիների ցեղ	67
Խլուրդների ցեղ	69
Հասարակ խլուրդ	70
Արջերի ցեղ	74
Հասարակ արջ	75
Հիւսիսային արջ	80
Ուռնուղների ընտանիք	83
Այծ	84
Ոչխար	85







404

488

902

ՀՀ Ազգային գրադարան



NL0263591

14.438/1

